



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99.092

G-15L

891.33.02  
G-15L

406 DEC/2012

L E O

# ԱՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՀԱՅՈՐ ԱԹԱՁԻՒ

1-2

ԹԻՖԼԻՍ

Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի:

1902

26 მაი 2013

67.885

Дозв. ценз. Тифлисъ, 29 Апрѣля 1902 г.



4766-2012



## ԱՏԵՓԱՆՈՍ ԴԱԶԱՐԵԱՆ

Heute im Park-Junkers, Cognac und ein Glas 7/3-  
Mit dem Zug zurück nach Frankfurt am 12.10.1917

had enjoyed your company & of the year - 1871  
had begun. At the month first birthday in 1872  
Aug 8 On occasion of your 1st birthday  
again I enjoyed your company & was very  
lucky, as of custom kept you to my side until  
that afternoon, it is always a pleasure to meet you  
such young & frank men & our evening's conversation  
was full of pleasure and enjoyment, As I was returning  
to the city of Atlanta, I carried a young girl  
with me, who I had met at the party, & we had  
a most interesting & instructive talk, & I hope you will  
be able to get along well.

One day we were about 120-125 miles from us  
when you, & I, got up through the water to have a good  
look at the falls, & you went & took a gun &  
shot down one of your swallows, which was enough  
to make the others get up & catch you : probably  
you left, & he never had time to get back, & probably  
he died in the water. After this, you got through  
the narrow channel, & so far off, that you could  
not see each other, & they were not seen until  
you got to the mouth of the river. & I found you had

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զ Հ Ռ Խ Խ Ա Ռ Ա Զ Խ Խ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

### I

Նոր պատմական շրջան Կովկասում:—Ի՞նչ  
էր բերում նա. Ալէքսանդր Լի հրովարտակը:—  
Անցեալի ժառանգութիւնը:—Հայերի և վրացի-  
ների մտաւոր գրութիւնը:—Հայոց դպրոցները:  
—Հայ հոգեսրականութիւնը. . . . .

1— 12

### II

Կրթութեան կարիք:—Մուս կառավարու-  
թեան ձեռք առած միջոցները:—Ազնուականնե-  
րի դպրոց Թիֆլիսում:—Կովկասի առաջին հա-  
մալարանականները:—Ներսէս Աշտարակեցին  
Թիֆլիսում:—Կրթական հոգսեր:—Միթար-  
եան միարանութեան օրինակը:—Լազարեան  
դպրոց Մօսկվայում:—Ներսիսեան դպրոց Թիֆ-  
լիսում:—Այդ դպրոցների նպատակը և ուղար-  
թիմնը. . . . .

12— 40

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԿԵԱՆՔԻ ԱԹԱՁԻՆ ՋՐՁԱՆՔ

(1812—1841)

### I

Խոյիցի Տէր եսային:—Ստեփանոսի ընտուրութիւնը:—Ծնանիք և ընտանեկան կրթութիւն:—Նազարեանցը ներսիսեան գործոցում:—Խաչատրւը Աբովեանցի հետ մտելմանալը:—Ի՞նչ առեց դպրոցը:—Պրօֆէսօր Պարբօտ:—Աբովիսանցը ճամապարհ է բաց անում դէպի դէրմանական համալսարան: — Նազարեանցը ներսիսեան գործոցից գուրս գալուց յիշոյ:—Դէպի Փօրպատ . . . . .

40— 67

### II

«Նոր իմացական մկրտութեան աւագանը»:  
—Առաջին կրթարանը—գերմանական ընտանիք:—Աբովեանցը իրքի նոր, կուլտուրական մարդ:—Նազարեանցը համալսարանում:—Դերմանական համալսարանը. նրա ազգեցութիւնը Ռուսաստանի վրա:—Դրական և հասարակական բուռն հոսանքներ Գերմանիայում:—Փիլիսոփայութեան կանգիգաւը:—Ի՞նչպէս մտնել կեանքի մէջ:—Պատրաստութիւններ Պետերբուրգում:—Աբովեանցը և Նազարեանցը տեղ չունին հայկական լիբականութեան մէջ . . . . .

67—106

ԳԼՈՒԽ ԵՐԱՐՈՐԴ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

(1843—1858)

### I

Ի՞նչ էր սպասում ուսում առած երիտասարդներին:—Արովեանցի իդձերը. նրա նամակը Յովհաննէս կաթողիկոսին:—Ի՞նչպէս ընդունեցին նրան հայրենիքում. խաւարամիտ Փանատիկոսութիւն: — Նազարեանցը Պետերբուրգում. նա տեղ չէ գանում:—Արևելեան լեզուների ուսումնասիրութիւն:—Պաշտօն Կազանի համալսարանում:—Ցանկութիւն գործելու հայերի մէջ. դիմումն ներսէս կաթողիկոսին:—Առաջին մատենագրական փորձեր . . . . .

106—128

### II

Հայոց գրականութեան պատմութեան երկրորդ մասը:—Այդ աշխատութեան արժանաւորութիւնները:—Նազարեանցի քննադատութիւնը. անցեալը, Միմիթարեաններ, ներկան:—Նոր ժամանակի պահանջները:—Նոր լեզուի անհրաժեշտութիւնը:—Ի՞նչ պիտի լինի գրականութիւնը հայերի համար:—Մագիստրոսի աստիճան:—Գրքի թողած տպաւորութիւնը . . . . .

128—167

### III

Նոր դիսերտացիա:—Ֆիլիդուսիի և պարսկական բանաստեղծութեան ուսումնասիրութեան

թիւնը:—Պրօֆէսօրական պաշտօն Լազարեան  
ճեմարանում:—«Փորձական չողերանութիւն»:  
—«Վարդապետաբան Կրօնի»:—«Առաջին հո-  
գեղէն կերպութ»:—«Հանդէս նոր Հայախօ-  
սութեան»:—«Գիւլստան»:—«Պաւոս և Վիր-  
գինիա» . . . . . 167—224

Պ Ա Տ Կ Ե Բ Ն Ե Բ

1. Ս. Նազարեանց (քահիլ հասակում).
2. Նազարեանցի ճեռագիրը.
3. Ներսէ կարողիկու.
4. Յարուբիւն յահ. Աղամդարեան.
5. Յովակիւմ Լազարեան.
6. Խայտառ Արովեանց.

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

### I

Նոր պատմական շրջան Կովկասում:—Ի՞նչ է քերում  
ձա. Այկիսանդր I-ի հրովարտակը:—Անցեալի ժառան-  
գուրիւնը:—Հայերի եւ վրացիների մատու դրուրիւնը:  
—Հայոց դպրոցները:—Հայ հոգեւորականուրիւնը:

—ո—

Ոռւսաց տիրապետութիւնը Անդրկավկա-  
սում պաշտօնագէս հաստատվեց 1801 թւա-  
կանի փետրվարի 16-ին: Այդ օրը մեր Հայ-  
նաստարած, գեղեցիկ երկրի մի փաքրիկ մասն  
էր հիւսիսային մեծ պետութեան սեփակա-  
նութիւն գառնում—Վրաստանը: Բայց և այդ-  
պէս, իրողութիւնը ահազին նշանակութիւն  
ունէր ամբողջ Կովկասի համար:

Թիգլիսում հաստատվելը առաջին քայլն

էր. սուսաց տիրապետութիւնը սկսեց տարածվել և մի 25—30 տարվայ ընթացքում նրա ձեռքին էր գտնվում ամրող Անդրկովկասը:

Ի՞նչ էր բերում այդ տիրապետութիւնը:

1801 թւականի սեպտեմբերի 12-ին հրատարակված հրաժարակում՝ Ալեքսանդր Ակայսրը այսպիսի խօսքերով էր զիմում կովկասեան լիոնաշղթայի հարաւային ստորոտներում ապրող իր նոր հապատակներին. «Թողձեր մէջ հաստատվի խաղաղութիւնը, արդարագասութիւնը, անձի և գորքի ասկահովութիւնը. Թողձ խզվեն կամայականութիւնները և դաման տանջանքները. ամեն մէկը թող նուիրվի սեփական և հասարակական լաւագոյն օգուտներին, ազատ և անարգել վարձվելով երկրագործութեան, արհեստների, առևտրի, ձեռագործների մէջ՝ ամենքին հաւատար կերպով հովանաւորող օրէնքների պաշտպանութեան տակ»:

Կովկասը շատ տիրապետողներ էր տեսել, բայց նրանցից ոչ ոք այսպիսի խօսքեր չէր արտասանել. Տասնեակ դարերի ընթացքում այստեղ հաստատված էր արիւնի, յափշտակութիւնների իրականութիւնը. Տասնեակ դարերի ընթացքում այստեղ Ասիան էր բըռնացած. Ռուսաց կայսրի այս խօսքերը բոլո-

րովին նոր էին, դեռ չը լսված այս գժրախտու արնագամ կողմնաւում. այդ խօսքերը գալիս էին աշխարհի ազատ ու քաղաքակիրթ կողմից—Եւրոպայից. Եւ նրանք մի անգամից կերպարանափոխեցին ասիական խեղճ ու խաւար միջնավայրի հազարամեայ ճակաապիրը:

Սկսվեց մի նոր շրջան—խաղաղ զարգացման, մտաւոր և կուլտուրական առաջադիմութեան շրջանը. Ռուսաց զէնքը ոչ միայն բերում էր խաղաղութիւն և հանգստութիւն, այլ և կապում էր մի կամուրջ այնքան զըժրախտութիւններ տեսած մեր երկրի և Եւրոպական քաղաքակրթութեան մէջ. Ռուսաստանի հովանաւորութեան աակ մտած ժողովուրգները այլ ևս ոչ մի հոգս չէին կարող ունենալ բացի մտաւոր և կուլտուրական առաջադիմութիւնից. Ընդ միշտ վերջացել էին քաղաքական հարցերը. Կովկասը ոչ ոքին չը պիտի պատկանէր, բայց միայն Ռուսաստանին. Եւ ազգաբնակութեան մնում էր թօթափել իրանից հնութեան շղթաները, գնալ առաջադիմող ազգերի և հանրամարդկային իդէալների ետեից ու այդպէս գտնել իր երջանկութիւնը:

Դա մի ստիպողական պահանջ էր, կեանքի և մահվան հարց. Տասնիններորդ մեծա-

գործ դարբ հէնց իր առաջին քայլերից իր բարձրաբութիւններն էր խոստանում և Արեւելքի այս խեղճ ու կորած կտորին էլ. միայն պահանջում էր աշխատել, դործել:

Սակայն ինչ ոյժերով, ինչ ընդունակութիւններով և պատրաստութեամբ էր ներկայանում Անդրկովկասը ուսւսաց ափրապետութեան հետ եկած այս նոր ժամանակին: Ի՞նչ ուներ նա:

Նատ խղճալի բան, համարեա ոչինչ: Նրա վրա ծանրացած էր ստրկութեան դարերի մի երկար շարք: Քրիստոնեայ ազգարնակութիւնը, որ ամենից շուտ պիտի արձագանք տար նոր շրջանի պահանջներին, արնաքամ գառած մի մարմին էր, որ հաղիւ էր շունչ պահել մինչև իր ազատութեան օրը: Ամրող ժամանակ նա տարութերվում էր մի քառսի մէջ: Հայաստանը մատնված էր թուրք խաների կամայականութիւններին, Վրաստանը տանջվում էր իր ներքին ցաւերից և պարսիկների, թիւրքերի, կովկասեան լեռնաբընակների յարձակումներից: Սարկութիւնը սոսկալի կեղտեր է ծնեցնում: Սարուկ ժողովուրդը սովորել էր այն մաքին որ պէտք է մի կերպ պահպանել իր գոյութիւնը: Նատ արատներ էին մտել նրա արիւնի մէջ, շատ արատներ էին մտել նրա արիւնի մէջ, շատ կողմներից էր թունաւորված նրա մարդկա-

յին արժանաւորութիւնը: Արտասունքների, հառաջանքների հայրենիքում, անզուսպ բարբարոսութիւնների ասպարէզում, չեխն կարող, ի հարկէ, զարգանալ այնպիսի հիմնարկութիւններ, որոնք կրթէին այդ ժողովրդի սիրու ու հոգին: Եւ նա տգէտ էր, խաւար և ոչինչ բարոյական ու նիւթական ոյժ չուներ իր գժրախստութիւնը բուժելու համար:

Այսպէս էին կովկասեան երկու լնիկ քրիստոնեայ ազգերը—հայերը և վրացիները: Մենք հետեւնք հայերին:

Պէտք էր ենթադրել, որ հայերը այնքան անօդնական ու գժրախստ չը պիտի լինէին մտաւոր առաջադիմութեան կողմից: Տանտութերորդ գարում հայութեան արևմտեան բաժինը բաւական նշանաւոր, աչքի ընկնող գրական և կրթական շարժում էր ցոյց առլիս: Այդաեղ էին Կ. Պօլսի և Վենետիկի նըման կենարօնները, ուր մշակում էր գրագիտառութիւնը, ուր գործում էին տպարանները: Աւելի նշանաւոր էր Վենետիկը: Ս. Ղազարի կղզին արդէն աստղի պէս փայլում էր հայկական սի հորիզոնի վրա: Նրա բարեկարգ գպրոցը, նրա ծաղկած մատենագրութիւնը շատ կարող էին օդնել տգէտ ու խաւար հայրենիքին: Բայց արենելեան Հայաստանը մատնակից չէր այդ գրական, մտաւոր

շարժման և շատ ու շատ յետ էր մնացել առևտուան հայութիւնից:

Նոյն 1801 թւականին, երբ ուղւաները հաստատվում էին Թիֆլիսում, հայ վարդապետներից մէկը ներկայացրեց գեներալ Լազարեվին մի զեկուցում հայերի կրթական գործի մասին \*): Այդտեղից մենք իմանում ենք, որ Էջմիածնի, Սանահնի և Հաղպատի թեմերում գոյութիւն ունէին ընդամենը երկու հատ գալրոց, որոնցից մէկը Թիֆլիսում, Մողնու եկեղեցու բակում: Ահա այդ երկու տեղերից էր լոյս ստանում ամբողջ այն հայ ժողովուրդը, որ բնակվում էր Վրաստանի սահմաններում: Եւ հետաքրքրականը, իհարկէ, այնքան գալրոցների թիւը չէ, որքան այն թէ ինչ էին այդ գալրոցները:

Հասկացողութիւն կարող է մեզ տալ այն գալրոցը, որ գոյութիւն ունէր Թիֆլիսում 1814 թւականին, երբ Ներսէս Աշտարակեցին առաջնորդ էր այստեղ: Կար այդ ժամանակը մի հայոց գալրոց, գուցէ նոյն Մողնու գալրոցը, որ միակն էր Վրաստանի մայրաքաղաքում: Նրա կառավարիչն էր ժամկոչ Եղիազարը, որ Թիֆլիսի առաջին հայերէնագէտն էր համարվում: Մի խանութիւ

\*) Акты Кавказ. Археогр. Коммис., т. I. № 660.

մէջ, որ այդ դպրոցի շինութիւնն էր, վարժապետի առաջ չփած էին 13 հոգի: Ուսումը, թէկուղ հէնց այսպիսի մի ուսուցչի աւանդած ուսումը, այն ժամանակ միայն հոգևորականների սեփականութիւն էր համարվում. և ժամկոչ Եղիազարից իմաստութիւն սովորողները բացառապէս նրանք էին, որոնք քահանայանալու միաք ունէին: Թուղթ էլ չը կար այդ խեղճ աշակերտների համար. նրանք զրել սովորում էին տաւարի ոսկորների (թիակ) վրա: Խանութ-գալրոցը հասարակաց «թամաշայի» տեղ էր: Փողոցով անցնողները կանգ էին առնում և նայում էին թէ ինչպէս է վարժապետը ծեծում աշակերտներին, ինչպէս է խրատում: Այդ աշակերտները ոչ միայն վարժապետի, այլ և նրա ծանօթների և ոչ ծանօթների ծառաներն էին: Մէկը ուղում էր բաղնիս գնալ և մարդ էր ուղարկում մանկավարժ ժամկոչի մօտ, խնդրելով մի երկու աշակերտ տալ՝ չորերը բաղնիս տանելու և յետ բերելու համար: Աշակերտները ուղարկվում էին ծանօթ-բարեկամի կառւրը կոխ տալու, երբ անձրև էր գալիս և կտուրը կաթում էր, աշակերտը գնում էր երեխայի օրորոցը օրօրելու, երբ մայրը զբաղված էր լինում անային գործերով \*): Այսպէս էր կըր-

\*) Ա. Երիցեան—«Պատմ. ներս. դպր.» եր. 30—31:

թութեան տաճարը, այսքան դառն դործ էր նոյն իսկ մի կտոր զրագիտութիւն սովորելը: Եւ այսպէս միայն Թիֆլիսում չէր, այլ ամեն տեղ և ոչ միայն հայերի մէջ \*):

Դեռ պէտք է ասել որ ժամկոչ Եղիազարների գլուխը աւարտելու բախոր ամեն մէկին չէր տուած: Շատերը քահանաց էին դառնում նոյն իսկ այդ գլուխի երեսը չը տեսած, անգրագէտ լինելով անգամ: Քահանաներ կային, որոնք կարգալ իսկ չը գիտէին և ժամասացութիւնը բերանացի էին սովորում: Քիչ քահանաներ կարող էին հայերէն տառերով ստորագրել իրանց անունները, մեծամասնութիւնը միայն վրացերէն գիտէր. իսկ ինչ գիտէին Վրաստանից գուրս դանվագները:

Եւ այդ հոգենորականութիւնն էր ժողովրդին կրթութիւն հայթայթողը: Միայն քահանայական դասակարգը չէր այդ դրութեան մէջ: Բարձրերում, կուսակրօն հոգենորականութեան մէջ էլ, շատ հազուազիւտ էին լեզուին տիրապետող, զրբի սիրահար անհատները: Պահանջ չը կար. խլացած էր հոգենորը,

\*) Այս հին «Խալիֆայական» գլուխը, ինչպէս յայտնի է, երկար ժամանակ գոյութիւն պահպանեց մեղանում և իր բոլոր սարսափներով մանրամասն շատ անգամ է նկարագրված մեր գրականութեան մէջ:

մտաւորը: Գիտութիւնը ոչինչ չէր տալիս հոգենորականին, մինչդեռ տպիառութիւնը թոյլ էր տալիս, միջոցների խտրութիւն չը ձանաչելով, հասնել փառքի, իշխանութեան, հարսաւութեան: Մահմեդական տիրապետութիւնը միայն անրարոյականացնող գաղափարներ էր նուիրագործում: Միակ միջոցը, որով կարելի էր լինում մնջմացնել տիրող խաների և փաշաների խիստ սիրար, այն էր, որ աշխատում էին հլու կամակատարութեամբ, շողաքրթ լեզուով, կաշառքներով ապրելու և գործելու իրաւունք գնել:

Հայ հոգենորականը, իրեն ժողովրդի պաշտօնական առաջնորդ, հայ վաճառականը, իրեն իր հասարակութեան առաջաւոր անդամ, ամենից շատ հարկաւորութիւն ունեին իշխանների բարի արամագրութիւնը գնելու: Եւ այդ պատճառով այդ երկու զասակարգերը առաջացնում էին շատ բացասական, անպատճի տիպեր, որոնք իշխել և կեղեքել էին սիրում և հէնց այդ նպատակով էլ յաճախ միանում էին իրար հետ: Օրինակ կարող են համարվել հարկերի կապալառու հայերը: Կ. Պօլսի ամիրաները մտնում էին որևէ փաշայի հովանաւորութեան տակ, փող էին տալիս նրանց և ապա, իրանց տուածը յետ ստանալու համար, կեղեքում էին այն հասարա-

կութիւնները, որոնք հարկ պիտի վճարէին կառավարութեան, Հայ հոգեսորականների փառամոլութեան և ապիկարութեան օրինակներով լի է վերջին դարերի մեր պատմութիւնը, աւելորդ է—և անհնարին էլ է—բերել այդ օրինակները, միայն Կ. Պօլսի պատրիարքական աթոռի պատմութիւնը որքան զգուելի էջեր է բաց անում մեր առջեւ:

Անարդարութիւն կը լինէր հոգեսորականների տղիսառութիւնն ու անակէտքութիւնը միայն նրանով բացատրել թէ կար մահմադական բռնապետութիւն, որ չէր թոյլ տալիս նրանց ուրիշ կերպ լինել: Պակասում էին սրտացաւ, ընդունակ, ազնիւ գործիչներ: Իսկ թէ մահմադական բռնակալութեան տակ էլ կարող էին լինել այդպիսի գործիչներ, այդ ցոյց են տալիս մի շարք անուններ—Ռոկան վարդապետ Երեանցի, Թովմա և պիսկոպոս Վանանդեցի, Միսիթար Սեբաստացի, Սիմէօն կաթողիկոս, Յովսէփ կաթողիկոս Արդութեան և այլն: Այդ հոգեսորականները հանդիսացել են մի հերոսներ, իրանց տոկուն, յամառ ջանախրութեամբ կարողացել են այնքան շատ բան անել, այնքան երախտիք տալ մեզ, որ ուզզակի հրաշագործներ են թուում մեզ, երբ մենք նկատի ենք առնում նրանց ժամանակը, նրանց տանջանքները: Դժբախ-

տաբար, շուտ շուտ չէին երևում այդպիսի անհնատները մեր ողբալի իրականութեան մէջ:

Պէտք է շատ չնորհակալ լինել ճակատագրից, որ տասնիններորդ դարի սկզբում, այն խորհրդաւոր միջոցին, երբ ժամանակը իր անողոք պահանջներն էր ներկայացնում հայերին, երբ ուսաց տիրապետութիւնը նոր, ժպառուն հօրիզօններ էր բաց անում, մեր հոգեսորականութեան մէջ երեան եկաւ մի նոր հերոս, որ յաջորդեց Յովսէփ Արդութեանին և շարունակեց նրա գործը աւելի մեծ եռանդով:

Այդ հերոսը Ներսէս Աշտարակեցին էր:

իր միջոցներով չեր կարող այդ անհրաժեշտ  
պահանջն իրագործել. նա չեր էլ հասկանում  
թէ ինչու պէտք է զպրոցներ բաց անել:  
Մնում էր որ կրթական հոգսերը իր վրա  
վերցնէ ոռւսաց կառավարութիւնը:

Բայց կառավարութիւնը, Վրաստանի միա-  
ցումից յետոյ, երկար ժամանակ զրազված  
էր քաղաքական այնպիսի բարդ հարցերով,  
որոնք չէին թոյլ տալիս ուշադրութիւն գարձ-  
նել նոր հպատակների մտաւոր պահանջների  
վրա: Հարկաւոր եղաւ պատերազմական գոր-  
ծողութիւններ սկսել հարևան խանութիւն-  
ների գէմ: Վրաստանում տեղի ունէին վը-  
տանգաւոր խլրատմներ, Պարսկաստանը և  
Թիւրքիան չէին ուղում հաշովել այն մաքի  
հետ, որ Կովկասը ոռւսաց հող պիտի դառ-  
նայ. բացի այդ տեղական հանգամանքներից,  
Եւրոպյանմ սկսվել էր Նապօլէօնի պատե-  
րազմների շրջանը և Պետերբուրգի կառավա-  
րութեան ամբողջ ուշադրութիւնն էին խլել:  
Այդ պատճառով էլ կրթական գործը Անդր-  
կովկասում XIX դարի առաջին քառորդում  
շատ ողորմելի դրութեան մէջ էր:

1802 թւականին կառավարութիւնը Թիֆ-  
սում բաց արեց ազնուականների դպրոց, որ  
երկար ժամանակ ոռւսաց միակ զպրոցն էր  
Անդրկովկասում: Բայց դա էլ մատչելի էր

## II

Կրութեան կարիք:—Ռուս կառավարութեան ձեռք ա-  
ռած միջոցները:—Ազնուականների դպրոց Թիֆլիսում:  
—Կովկասի առաջին համարաւանականները:—Ներ-  
սկս Եշտարակեցին Թիֆլիսում:—Կրական հոգսեր:—  
Միիրարեան միարանութեան օրինակը:—Լազարեան  
դպրոց Մուկվայում:—Ներսիսեան դպրոց Թիֆլիսում:  
—Եյդ դպրոցների նպատակը և ուղղութիւնը:



Այսպէս ահա, նոր ճանապարհի վրա դըր-  
ված ժողովրդին հարկաւոր էր ուսում, կրր-  
թութիւն: Ապահովին էր կեանքը. այժմ ա-  
ռաջին անհրաժեշտութիւնը դիրքն էր: Ուրիշ  
կերպ կովկասցին չեր էլ կարող հասկանալ  
թէ ինչ է իր պատմութեան նոր շրջանը,  
ինչ պէտք է անէ ինքը՝ օգտակար, բարեկե-  
ցիկ քաղաքացի դառնալու համար:

Դպրոցներ, ինչպէս տեսանք, չը կային:  
Պէտք էր բաց անել զպրոցներ: Ժողովուրդը

միայն ազնուական դասակարգին և այնքան փոքր էր, որ 45 աշակերտից աւել չէր ընդունում: Թէ որբան չնշին էր ուսման պահանջը վրաց ազնուականութեան մէջ, ցոյց է տալիս այն հանդամնքը, որ կառավարութիւնը աշակերտներ գրաւելու համար հարկադրված էր սոճիկ տալ նրանց: Դպրոցի աշակերտները վրաց ազնուականների ամենանշանաւոր տօնմերի զաւակներն էին: Բայց չը նայած կառավարութեան ձեռք առած խրախուսական միջոցներին, ուսման սէրը չէր զարգանում արտօնված դասակարգի մէջ: Ազնուական աշակերտները շատ յաճախ փախչում էին դպրոցից և այդ երեսյթը իշխան Ցիցիանով բացատրում էր նրանով, որ տեղական ժողովրդի բարքերը «անսովոր են և վայրենի»: Արժանաւոր հոգեորականներ պատրաստելու համար՝ ազնուականների զըսդրուում սկսեցին ընդունել և վրացի քահանաների որդիներին, թւով 10 հոգի, մինչև որ 1817 թւին թիֆլիսում բացվեց հոգեսոր սեմինարիա օրթօգօքս դաւանութեան համար:

Եւ այսպէս, մենք տեսնում ենք որ ոռուաց կառավարութիւնը սկզբում կարողանում էր հոգալ միայն վրաց ազնուականութեան և հոգեորականութեան կրթական պահանջները, թէև հասկանում էր որ հայերն էլ պի-

տի իրանց մասն ունենան մտաւոր առաջադիմութեան մէջ: Այդ բանը նկատվում է 1803-ին կայացած կայսերական հրամանի մէջ, որով առաջարկվում էր ընտրել հայերից և վրացի ազնուականներից 12 ընդունակ աշակերտներ և ուղարկել նրանց Մոսկվայի համալսարան՝ պետական հաշով ուսում ստանալու համար: Այդ կարգադրութեան նպատակն էր բժիշկներ պատրաստել կովկասի համար: Առաջին երիտասարդներն էին զրանք, որ մեր երկրից գնում էին համալսարանական բարձր ուսում ստանալու: Բայց համալսարանն էլ ոչինչ զրաւիչ բան չունէր կովկասցիների համար: Զը զիտենք ինչպէս էին հայերը, բայց պաշտօնական թըրթերի մէջ կարդում ենք, որ վրացի իշխանները և մանաւանդ իշխանուհիները չէին թոյլ տալիս իրանց որդիներին հեռանալ հայրական տանից և գնալ Ռուսաստան:

Հայերը, չունենալով ազնուականների մեծ դասակարգ, պիտի զրկված մնային փոքր իշատէ կանոնաւոր դպրոցներից, եթէ չը կարողանային իրանց սեփական միջոցներով հոգալ այդ կարիքը: Գործը, իհարկէ, վերապահված էր անհատներին. ժողովրդական գիտակցութիւնը այնքան թոյլ էր, որ ինքնարերաբար ոչինչ չէր կարող անել: Բարե-

բախտաբար, այդ ժամանակ հայերի մէջ երկու մեծագործ անհատներ կային, որոնք իրանց ազդի բարերարներ հանդիսացան:

1800 թւականի յունվարի 4-ին կոմս Յովհաննէս Լազարեանը \*) գրեց իր նշանաւոր կտակը: Իր մեծ հարստութիւնը նա տալիս էր իր կրտսեր եղբայր Յովակիմ Լազարեանին, որովհետեւ ինքը անժառանգ էր: Մինոյն ժամանակ նա կարգադրում էր որ իր մահվանից յետոյ Յովակիմը մտցնէ Մոսկվայի Խնամակալական Խորհուրդը: 200,000 բուրլի թղթադրամ, որպէսզի ժամանակով այդ գումարից ստացված տնկուներով մի օրինաւոր դպրոց կառուցվի հայ աղքատ երեխաների համար ի յիշատակ իր միակ որդի Յարութիւնի, որ վախճանվել էր ծաղիկ հասակում: Կոմս Յովհաննէս Լազարեանը, այս անմոռանալի մարդը և լաւագոյն հայը, վախճանվեց Պետերբուրգում 1801 թւականի հոկտեմբերի 24-ին:

Յովակիմ Լազարեանը որբութեամբ կատարեց իր եղբօր վերջին կամքը: Դպրոցին յատկացրած փողը նա մտցրեց նշանակած տեղը: Բայց այդքանով չը բաւականացաւ:

\*) Տ. իմ «Յովսէփ կաթողիկոս Արդութեան», Թիֆլիս, 1902:

*1766-2012*

Յովհաննէսի միաքը շատ մօտիկ էր և այդ բարեսէր, հասկացող, հասարակաց բարիքին նուիրված մարդու որաբին: Նա ինքն էլ շատ լաւ էր հասկանում թէ որքան կարօտ է իր խեղճ ազդը մի լուսաւու հիմնարկութեան, ուստի չը սպասեց որ նուիրված դրամագլուխը տոկոսներ բերէ ցանկացած չափով: Յովակիմը ըաց արեց իր քսակը և 200,000 թղթադրամ բուրլի էլ իրանից գնելով: 1814 թւականին սկսեց Մոսկվայում մի շենք կառուցանել, որի մէջ պիտի տեղաւորվէր ծրագրված դպրոցը: Մեծ խելք և հեռատեսութիւն ցոյց տուեց նա մանաւանդ դպրոցի համար տեղ ընտրելու գործում: Մոսկվան թէն հետո էր հայերի բնակութեան տեղերից, բայց իրեւ Ռուսաստանի մտաւոր տռաջնակարգ մի կենտրօն, կարող էր մի բարեկարգ դպրոցի բոլոր յարմարութիւնները տալ: Եթնութիւնը աւարտվեց 1816-ին, իսկ յաջորդ տարին բացվեց «Լազարեան հայկական ուսումնարանը»: Այսպէս էր նա կոչվում սկզբում:

Միենոյն նպաստաւոր պայմանների մէջ չէր գանվում Ներսէս եպիսկոպոս Աշտարակեցին, որ համարեա միաժամանակ յղացել էր մի բարեկարգ դպրոց հիմնելու միաքը: Նա կարծում էր թէ այդպիսի մի դպրոցի



համար ամենայարմար տեղը պիտի լինի էջմիածինը, որ հայոց հոգեոր կառավարութեան կենտրօնն էր և, հետեաբար, մտաւոր գարգացման կենտրօն էլ պիտի դառնար: Ներսէոը մինչև իսկ պատրաստութիւններ տեսնել էլ սկսեց, բայց շուտով իմացաւ որ իր իդէալը իրազործելու տեղը էջմիածինը չէ: Ամենայն հայոց Մայր Սթոռը պարսիկների տիրապետութեան տակ էր գանվում: և բացի զրանից, այստեղ զեռ շարունակում էր թափաւորել նոյն այն տղէտ ու հալածասէր կղերականութիւնը, որի ձեռքից փախել էր Մըխիթար Սեբաստացին:

Մի ապահով, յարմար տեղ էր որոնում ներսէոը: Եւ այդ տեղը ամբողջ Անդրկովկասում կարող էր լինել միայն Թիֆլիսը: 1814 թւականին նա նշանակվեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ: Տեսնելով շրջապատող սոսկալի տղիստութիւնն ու խաւարը, նա առաջին անյետաձգելի գործ համարեց գըպոցը և իրան յատուկ կրակու եռանդով կըպաւ այդ գործին: Միջոցներ նա չուներ, ինչպէս կազարեաններն ունէին: Պէտք էր ժողովրդի աջակցութեան գիմել, և ներսէոը, մի քաղէ կանգ չառնելով, գիմում է նրան: Ծագում է հակառակութիւն, ներսէոը ոչ մի տեղ թշնամիների պակասութիւն չէր տեսել:

Պէտք էր յետաձգել մեծ, բարեկարգ դպրոցի միավը: Մինչև յարմար ժամանակ զտնելը, ներսէոը 1815-ին բաց արեց մի ժամանա-



ՆԵՐՍԷՍ ԿՅԹՈՂԻԿՈՍ

կաւոր դպրոց՝ քահանայացուներ պատրաստելու համար:

Դպրոցը կար, այժմ պէտք էր ուսուցիչներ զտնել: Երկու տարուց յետոյ միայն ներ-

սէսին աջողվեց Պարաբաղից բերել տալ հայկաբանի հոչակ վայելող զարագաղցի Պօղոս վարդապետին: Դա արդէն առաջադիմութիւն էր Ներսէսի դպրոցի համար, թէ իր մանկավարժական սիստեմով գիտնական վարդապետը շատ չէր զանազանում ժամկոչ Եղիազարից: Պօղոս վարդապետը իր աշակերտներին աւելի ծեծ էր տալիս, քան ուսում: Նրա երկաթէ զաւազանի տակ ուսուցման միակ առարկան հայկաբանութիւնն էր, և աշակերտները օր ու գիշեր զլուխ էին կոտրում Զամշեանի քերականութեան, Ագոնցի ճարտասանութեան և Թեսաւրոսի «Բարոյական իմաստամիրութեան» վրա \*): Եւ սակայն, այս չոր ու ցամաք դասուութիւնը այն ժամանակ նշանաւոր բան էր համարվում: Ապացոյց այն, որ Խաչատուր Արտիեանցը, էջմիածնում մօտ վեց տարի աշակերտելուց յիսոյ, 1821 թւականին զնում է Թիֆլիս և մանում է Պօղոս վարդապետի դպրոցը՝ կատարելագործվելու համար:

Այդ դպրոցումն էր և Ստեփանոս Նազարեանցը:

Պօղոս վարդապետի գիտնականութեամբ զոհ էին ամենքը: Դժգոհ էր միայն Ներսէ-

սը: Այդպիսի հիմնարկութիւն չէր նրա ուղածը. մի մեծ ուսումնարան, աւր աւանդվեր ժամանակակից գիտութիւնը, օտար լեզուները—ահա ինչ էր նա որոնում: Եւ նորից նա դիմեց ժողովրդին, նորից նուերներ ինգրեց: Այս անգամ նրան աջողվեց մի լաւ գումար հաւաքել: Գործը զլուխ եկաւ: Ներսէսը սկսեց դպրոցի շինութիւնը և 1824-ին հանդիսաւոր կերպով բաց արաւ իր սիրած ու փայփայած կրթական տաճարը:

Այսպիսով ահա Ուսուաստանի և Անդրկովկասի հայերը ստանում էին երկու բարեկարգ կրթարաններ, որոնք պիտի առաջնորդէին նրանց դէպի նոր ժամանակի պահանջները, պիտի պարարատաէին մարդիկ:

Նշանաւոր է որ այս դպրոցական հաստատութիւնների անհրաժեշտութիւնը զգացնելու մէջ մեծ գեր է կատարել Մխիթարեան Միաբանութիւնը, թէ և ոչ անմիջապէս և ուղղակի Բնական է որ գարաւոր քնից արթնացող հային, հարազատ, աւելի շատ բան էր ասում նրա սրտին, քան մի օտար կրթարան: Ամենից առաջ կար այն հանգամանքը, որ Մխիթարեանները հայ վարդապետներ էին և մեծ եռանդով աշխատում էին հայերէնը հարստա-

\*.) «Հիւսիսափայլ», 1858, № 2:

յնել: Ապա դալիս էր այն, որ Մխիթարեանները իրանց զիտութեամբ անչափ բարձր էին հայ հոգեսորականներից, ուրեմն և անհամեմատ ուժեղ: Յենվելով այդ ոյժի վրա, նրանք իրանց հեղինակութիւններով, թարգմանութիւններով կաթօլիկական ահնդենցիաներ էին մացնում հայերի մէջ: Չը նայած դրան, Մխիթարեանների զիտուականութիւնը, բարեկարգ գալրոցը այնքան դրաւիչ էին ուսման ծարաւ հայերի համար, որ ակամայ մոռացվում էր կրօնական խտրութիւնը: Խաչատուր Աբովեանցը, չը նայած որ ջերմ սիրով կապված էր էջմիածնի և հայ եկեղեցունետ, մի տենչանք է ունենում—գնալ վենետիկ, այնտեղ լրացնել իր ուսումը: Ս. Դաղարի կղզուն նա նայում էր իրեն մի ուետեաց երկրի: Այսքան յաղթահարող է լոյսը:

Զէ կարելի ասել թէ հայ հոգեսորականութիւնը չէր զգում Մխիթարեանների մտաւոր գերազանցութեան անյարմարութիւնը: Կար դժգոհութիւն, կար զիմադրելու ցանկութիւն: Բայց պակասում էր ոյժ: Դիմադրողները հաւասար գէնքեր չունէին: Այս իրողութեան վրա ուշադրութիւն էր դարձել կոմս Յովհաննէս Լաղարեանը, ինչպէս վկայում է Յովակիմ Լաղարեանը 1820 թւականին հրա-

տարակած իր մի շրջաբերականի մէջ \*): Նա հասկացել էր որ կաթօլիկ վարդապետների դէմ մրցելու համար պէտք է նրանց պէս ուսումնական հոգեսորականներ պատրաստել: Եւ այս միտքը դարձել էր մի լաւ դպրոց բաց անելու շարժառիթներից մէկը: Իր եղբօր հետ համաձայն էր և Յովակիմ Լաղարեանը: Արժանի գովիստներ տալով Մխիթարեանների ջանասիրութեան, ուսումնականութեան, Լաղարեան ճեմարանի երկրորդ հիմնադիրը շնչառում էր որ նրանք բաժանված են հայ եկեղեցուց և «սկզբից մինչև այժմ՝ աչալուրջ ճարտարութեամբ պքնում են փոքր առ փոքր մեզ էլ օտարացնել մեր սուրբ ուղղադաւան եկեղեցուց»: Եւ նրա հիմնած գովոցը հէնց այդ պատճառով էլ ամենից տուած և ամենից շատ նկատի ունէր հայոց լեզուն, պրականութիւնը, հայոց եկեղեցու շահերը:

Մխիթարեաններին է աչքի առաջ ունեցել և Ներսէս Աշտարակեցին: Իր նամակներից մէկում \*\*): նա խստավանում է որ զեռ 20 ամենայ հասակից նա յափշտակված էր

\*) Պ. Մսերեանց—«Յիշատակարան կենաց և գործոց Լաղարեան տոնմի», Պուկվա, 1856, ել. 56:

\*\*) «Պատմ. Ներսէս. դպր.», եր. 25:

Մխիթար Սեբաստացու օրինակով և մասածում էր Վենետիկում հիմնած նրա ուսումնարանի վրա: Վերջապէս յիշաստակենք և այն, որ քանական թւականներին էջմիածնի միաբաններից մի երկուսի մէջ միաք է ծագում և, Ղազարի միաբանութեան նման մի գրական-վանական ընկերութիւն հիմնել Հայաստանում: Ի՞նտրվում է նոյնակս մի կզզի—Սևանի կզզին, այդաեղ ուղում էին հին ձեռագիրներ հրատարակել և գրականութիւնը զարգացնել \*): Բայց այդ մաքի հեղինակ Շահնշաթունեան վարդապէտը մոռանում էր որ նոյն այդ Սևանի կզզում էր ամենից առաջ ուղում հաստատվել Մխիթարը և սակայն ոչինչ աջողութիւն չէր ունեցել, եթէ Սևանն ու ա. Ղազարը աշխարհագրական միենոյն անունն ունէին—կզզի, Ասիայի այն խաւար կտորը, ուր բնութիւնը գետեղել էր Սևանը, ոչինչ նմանութիւն չունէր իտալական հողի և երկնքի հետ, իհարկէ այդպիսի ձեռնարկութիւնների աջողութեան տեսակէտից: Հայրենի դառն իրականութիւնը ցոյց էր տալիս որ պէտք է գեռ սովորել, կամաց

\* ) Արիստակէս եպիս. Սեղբակեան—«Յովհաննէս եպիս. Ջահնաթունեանցի կենսագրութիւնը». Պետերբուրգ, 1898, էր. 27:

կամաց առաջանալ լուսաւորութեան ձանապարհի վրա:

Լաղարեան գպրոցը սկզբում, մինչև 1825 թւականը, մի մասնաւոր ուսումնարան էր, առանց իրաւունքների և արտօնութիւնների: Ծերունի Յովհակիմ Լաղարեանը սիրում էր իր ձեռքի գործը գթառատ հօր պէս և ոչինչ չէր խնայում որ գպրոցը կոչման բարձրութեան վրա կանգնած մի կրթարան լինի: Նա դիմում էր Մօսկվայի համալսարանի պրօֆէսօրներին, խորհուրդներ էր հարցնում, խընդում էր զեկավարել ուսումնական գործը: Դպրոցը ունէր երեք դասարան, եօթ-ութտարկայ դասընթացքով և համարեա համապատասխանում էր այն ժամանակվայ զիմնագիրներին: Հիմնադիրը աշխատում էր որ դպրոցը հայերի համար դառնայ համալսարան մտնելու յարմարութիւններ տուող մի հիմնարկութիւն: Սւանդգում էին հայոց, ոռուաց, լատինական, ֆրանսիական, գերմանական լեզուները, աշխարհագրութիւն, պատմութիւն, իրաւագիտութիւն, վիճակագրութիւն, գծագրութիւն: Սկսած 1821 թւականից, ամեն տարի միջին թւով 10—12 աշակերտ էին աւարտում դպրոցը:

Հիմնադիրների գլխաւոր նպատակը, ինչպէս տեսանք, հայերէնագիտութիւնը զար-

դացնելն էր։ Դպրոցը հայկական էր, բացված  
էր հայերի համար։ 1825-ին նա ճանաչվեց  
կառավարութեան կողմից իրեւ միջնակարգ  
դպրոց և ստացաւ «Հազարեան հայկական  
Ճեմարան» անունը։ Լազարեանների հաշտով  
30 գիշերօթիկ աշակերտներ, հաւաքված զա-  
նազան հայարնակ տեղերից, ուսում էին  
ստանում։ Բայց հայկական դպրոցի կերպա-  
րանք տալը այնքան էլ հեշտ բան չէր կա-  
զարեանի համար։ Կար մի շատ դժուար հարց  
և գա ուսուցիչների հարցն էր։ Ո՞րտեղից  
վերցնել պատրաստված, լաւ հայերէնազէտ  
ուսուցիչներ, որոնք իրանց գարգացման աս-  
տիճանով համապատասխանէին համալսարա-  
նական կենարօնում բացված նոր ձեփ մի  
բարեկարգ դպրոցին։ Աւելորդ էր մտածել  
անգամ թէ այդպիսի մարդիկ կարող են գալ  
Հայաստանից։ Եւ Յովակիմ Լազարեանը գէ-  
պի այդ կողմը չէ էլ նայում։ Նա զիմում է  
Վենետիկ, մոռանում է նոյն իսկ որ իր դըպ-  
րոցը ու Ղազարի գէմ մրցող մի հիմնարկու-  
թիւն պիտի լինի, ինքը ում է Միխթարեան  
միաբանութիւնից երկու վարդապետ ուղար-  
կել ուսուցչութիւն անելու համար։ Վենե-  
տիկը մերժում է, այն ժամանակ Լազարեա-  
նը դիմում է Վիեննայի Միխթարեաններին,  
բայց դրանցից էլ մերժում է ստանում։

Ահա թէ որքան դժուար էր հայկական  
դպրոց ստեղծելը։ Եւ ծերունի Լազարեանը  
անշուշտ չատ նեղ դրութեան մէջ կը մնար,  
թէ չը լինէին երկու կաթօլիկ վարդապետ-  
ներ։ Դրանցից մէկը Սերովիք վարդապետն  
էր, որ լուսաւորչական էր դարձել և գտնը-  
վում էր կջմիածնում։ Լազարեանը բերել է  
տալիս նրան։ Միւս վարդապետը Հովումում  
էր զաստիարակիվ և պատկանում էր Լիբա-  
նանի Անտօնեան միաբանութեան։ Նրա ա-  
նունն էր Յովակիմ։ Գալով Խուսաստան, այդ  
վարդապետը Յովակիմ Լազարեանի ուշադրու-  
թիւնն է գրաւում, մտնում է լուսաւորչա-  
կան եկեղեցու ծոցը և ստանում է Միքայէլ  
վարդապետ անունը (Սալլանթեան)։ Երկու  
վարդապետներն էլ, իբրև երօպական կղե-  
րական կրթութիւն ստացած մարդիկ, կարող  
էին փոխարինել Միխթարեաններին։ Նրանք  
շատ հմուտ էին հայերէնի մէջ, հեղինակա-  
կան ձիրք էլ ունէին\*)։ Նշանաւոր է մանա-  
ւանդ Սալլանթեանը. Երկար ժամանակ նու  
մի շատ կարևոր գեր կատարեց Լազարեան

\*) Սերովիք վարդապետը 1819 թւին ապագրեց Մուկ-  
վայում «Ծաղկի գիտութեանց» անունով մի գիրք, որ  
զանազան գիտութիւնների համառօտութիւնն է։ Իսկ Սալ-  
լանթեանի հեղինակութիւնները շատ են։

Ճեմարանում իրրև հայերէնի ուսուցիչ և առաջարակ իրրև հայերէնագիտութեան զլիաւոր զեկավար:

Նշանակում է որ Լազարեան ճեմարանի միջոցով արեելեան հայերի մէջ մուտք էր գործում ոչ թէ մի նոր, ինքնուրոյն հայերէնագիտութիւն, այլ այն, ինչ արդէն գոյութիւն ունէր արեմուտքում: Եւ որովհետեւ արեմուտքում հայոց լեզուի և գրականութեան տէրերը Մխիթարեաններն էին, ուստի կարելի է ասել որ ոռուահայերի մէջ հաստատվողը ո. Ղազարի մի ճիւղն էր, այն գանազանութեամբ, իհարկէ, որ այդ ճիւղը Հոօմին չէր նայում, այլ կշմիածնին: Մխիթարեանների գրական գպրոցը գլխաւորաբար, ամենից առաջ, կրօնական ուղղութիւն ունէր. հնութիւններ լոյս հանելլ նա համարում էր առաջնակարգ գործ: Մշակում, ճոխացնում էր գրաբար լեզուն, արհամարհանքով վերաբերվելով աշխարհաբարին: Փըքուն, ուսուցիկ ճառերի, ներբողների, կեղծ կլասիքական զեզումների դարն էր. Մխիթարեանները այնքան եռանդուն էին, այնքան ընդունակ հանդիսացան այս ուղղութեան մէջ, որ ամբողջ մտածող հայութիւնը նրան հետեւն էր միայն հասկանում: Նոյն այդ ողին, նոյն այդ ուղղութիւնն ու հաս-


կացողութիւնները մտցրեց Սալլանթեանը Լազարեան ճեմարանի մէջ:

Մխիթարեաններին նմանվելու, Մխիթարեաններին զիմադրելու ցանկութիւնը այնքան մեծ էր, որ 1823 թւականին Լազարեանների գորոցում կազմվեց հայկական հնութեան սիրողների Ընկերութիւն: Նրա նպատակն էր ուսումնասիրել Հայաստանի հնութիւնները և այդ ուսումնասիրութիւնների արդինքները ապագրել ուսուերէն լեզուով: Դիմելով ձեռնհաս մարդկանց, Ընկերութիւնը ինդրում էր ուզարկել իրան հին ձեռագրեր, թղթեր, հրովարտակներ և այլ այսպիսի բաներ: Հարկաւոր էր ունենալ և սեփական տպարան, ինչպէս ունէին վենետիկի և Վիեննայի Մխիթարեանները: Յովակիմ Լազարեանի ժառանգները մի հարուստ տպարան էլ նույիրեցին իրանց ճեմարանին (1829): Թէ որպիսի ինսամք և հոգացողութիւն ունէին նրանք հայերի և հայոց լեզուի մասին, երեւում է նրանից, որ 1829-ին Յովակիմի որդի Յովհաննէս Լազարեանը, որ ճեմարանի գիրեկտօրն էր, զիմեց ուսուաց կառավարութեան, խնդրելով հայոց լեզուի ամբիոն բաց անել Մօվկայի համալսարանում: Իր բացարութեան մէջ Լազարեանն ասում էր թէ մի այսպիսի ամբիոն կը բարձրացնէր

հայոց լեզուի նշանակութիւնը Ռուսաստանում և հայ ազգի համար կը լինէր մի նոր նշան, որ ցոյց կը տար ամենքին թէ ինչպէս ուստաց կառավարութիւնը իր չնորհներն է թափում ազգի վրա: Համալսարանական ամբոխնը հայոց լեզուն կը մտցնէր այն լեզուների թիւը, որոնք մատչելի են դառնում Ռուսաստանի երթասարդութեան: Ցոյց տալով թէ ինչ քաղաքական նշանակութիւն կունենար այդ հանդամանքը, Լազարեանը յանձնէր առնում հարկաւոր գրամական նպաստները տալ իր միջոցներից և գտնել հայագէտ պրօֆէսօր ամբիոնի համար: Կառավարութիւնը, սակայն, անկարելի համարեց կատարել այդ խնդիրը: Այդ ժամանակ արդէն վճռված էր բաց անել Պետերբուրգի համալսարանում արևելեան լեզուների բաժին, ուր սլիտի դասախոսվէր և հայերէնը:

Լազարեան ձեմարանի պէս էր, բայց, իհարկէ, նիւթական աւելի փոքրիկ միջոցներով, և Ներսիսեան դպրոցը Թիֆլիսում: Ներսէսը մեծ ծրագիրներ ունէր: Նրան թւում էր թէ կարելի է այդ դպրոցական յարկի տակ հաւաքել 800 աշակերտ: Դասատունների հարցը նրան էլ էր շատ նեղում: Դժուարութիւնը մանաւանդ այն էր, որ Ներսէսը վրատահութիւն չունէր կաթոլիկութիւնից վե-

րադարձած հայ վարդապետների վրա: Սալլանթեանը առաջ նրան առաջարկեց իր ծառայութիւնները, բայց մերժում ստացաւ: Վերջը Ներսէսը հրաւիրեց Մօսկվայից Յարութիւն քահանայ Ալամղարեանին և սրան



ՅԵՐՈՒԹԻՒՆ ՔԱՀ. ԱԼԱՄՂԱՐԵԱՆ  
յանձնեց իր դպրոցի ղեկը: Ալամղարեանը  
լաւ հայագէտ էր և չնորհալի բանաստեղծ:  
Նա ուսուցչութիւն էր մանում Լազարեան

ճեմարանում, որի կարգերն էլ մտցրեց Ներսիսեան դպրոցի մէջ: Պէտք է ասել որ Յովակիմ Լազարեանը մեծ ուրախութեամբ աշակցում էր Ներսէսին: Ներսիսեան դպրոցը ստացաւ նրանից 7000 րուբլու մի գումար. Լազարեան ճեմարանի աշակերտաները ուսուցչութիւն էին անում Ներսիսեան դպրոցում: Երկու հիմնարկութիւնները, իրար ձեռք տրւած, կրթում էին հայ երեխաններին:


Ներսէսն էլ մտածում էր ո. Ղազարի միարանութեան նման մի դրական և հրատարակչական ընկերութիւն հաստատել իր դրաբոցի շուրջը: Լազարեաններից շատ վազ նազաց մի հայերէն տպարանի անհրաժեշտութիւնը: Այդ բանի մէջ նրան օգնեց վանեցի հարուստ չվաճառական Գէորգ Արծրունին, որ Եւրոպայում կատարած իր մի ճանապարհորդութեան ժամանակ գնեց Ամստերդամում և լցած մի հայերէն տպարան և ընծայեց Ներսիսեան դպրոցին: 1819 թւականին այդ տպարանն արգէն Թիֆլիսումն էր, բայց սկսեց կանոնաւոր գործել 1823-ից: Ներսէսը սպասում էր որ տպարանն ու դպրոցը, միմեանց ձեռք տրւած, կը գարգացնեն հայոց գրականութիւնը: Եւ նու չէր սխալվում: Դպրոցի տպարանը, տպա և Լազարեան ճեմարանի տպարանը ահազի՞ց դեր կատարեցին մեզա-

նում մինչև 1870-ական թւականները: Դրանց շուրջն էր գործում ոռուսահայերի ամբողջ դրականութիւնը:

Կարելի է համարձակ կերպով ասել, որ եթէ մեզանում չը լինէին Լազարեանները և Ներսէս Աշտարակեցին, ոռուսահայերը գեռշատ երկար թաղված կը մնային ասիական խաւարի մէջ: Նրանց դպրոցներն էին մեզ կեանքի հրաւիրողները, այդ դպրոցներից էր, որ հայի խաւար հօրիզոնի վրա էլ բացվեց գարնանային առաւօտը: Դրանք երկուորեակներ էին, միատեսակ էին մտածում, գործում: Երկուսի դաւանանքը միենոյն էր, երկուսն էլ միենոյն ճանապարհով էին ընթառում:

Լազարեան ճեմարանի և Ներսիսեան դրաբոցի ուղղութեան, ոգու մէջ եղած միութիւնը մեզ ցոյց են տալիս երկու ժողովածուներ, որոնք հրատարակվեցան 1828—1829 թւականներին, մէկը Թիֆլիսում, միւսը Մօսկվայում: Ներսիսեան դպրոցի վարչութիւնը, կամենալով ցոյց տալ հասարակութեան թէ ինչ առաջադիմութիւն են անում աշակերտաները, հրատարակեց նրանց գրաւոր աշխատաւթիւնները «Երախայրիք Ներսիսեան Դպրոցի» անունով: Այդ օրինակին հետեւց Միքայէլ վարդապետ Սալլանթեանը,

հրատարակելով՝ Մօնկվայում «Առարտական» ժողովածուն, կազմված էազարեան ճեմարանի աշակերտների աշխատաթիւններից:



ՅՈՎԵԿԻՄ ԼԵԶՅԵՅԵՆ

Ծանօթանալով այդ աշակերտական գործերի հետ, մնաք ծանօթանում ենք և երկու

դպրոցների սկու, ուղղութեան հետ: Մենք տեսնում ենք որ ամենից առաջ տիրում է թունդ կրօնական ուղղութիւն: Աշակերտները ճառեր, ստանսւորներ են գրում կրօնական զանազան ասարկաների վրա. զրանք աշակերտական նստարանի վրա նստած կրօնաւորներ են, որոնք ճուսմաբան ոճով, ճարտասանական արհեստաբանութեամբ խօսում են մեղքի, հոգու փրկութեան, սուրբերի, քրիստոնէական առաքինութիւնների մասին: Իսկ էազարեան ճեմարանում բանը այն տեղին է հասնում, որ աշակերտները գրում են մի ահազին վիճաբանական գրութիւն (157 երես), որի միաքն է ապացուցանել որ Հոօմի պապը քրիստոնէական եկեղեցիների կլուխը չէ, ինչպէս կաթոլիկներն են ասում: Այս գրուածքի մէջ մանաւանդ շատ պարզ է թէ ինչ ոգի էր ներշնչում Սալլանթեանը: Նորագարձ գաւանափոխի եռանդով նա պաշտպանում էր հայոց եկեղեցու ուղղափառութիւնը, կրօնական վէճեր էր մզում Մխիթարեանների դէմ, նոյն իսկ պատրաստ էր լատիներէն լեզուով ապացուցանել կաթոլիկ աշխարհին որ հայերը հերձուածողներ չեն:

Կրօնական-աստուածաբանական ջերմեանդ խոհերից յետոյ աշակերտական շարադրութիւնների մէջ զալիս էր հայրենասի-

բութիւնը, որ նիւթ էր ստանում լոկ Հայաստանի անցեալից: Այս առրը համեմատարար չատ աննշան էր կրօնական նիւթերի մէջ: Հայերը այն ժամանակներում ազգասիրութիւն սովորում էին Մխիթարեաններից, իսկ սրանք ազգասիրաբար վկայում և հաստատում էին որ իրանց ազգը մի բացառիկ անուշ բախտ է ունեցել իրեն Աստուծու ընտրեալ ազգ, իբրեւ ամենահին ժողովուրդը, որի լեզուն գործածական էր նոյն իսկ Ադամի գրախառում:

Ետո են, համարեաւ անթիւ, ներբողական զրուածքները, գրանք ճառեր են և ստանաւորներ, նուիրված Լազարեաններին, Ներսէսին, հայոց կաթողիկոսին, ուսուցիչներին, մանաւանդ Սալլանթեանին: Գովասանքների և փառաբանութիւնների ճռառան արաւայտութիւններ են զրանք, մնծ մասամբ արհեստական, ողորմելի բովանդակութեամբ, մեծահնչիւն բառերի և կեղծ բացականչութիւնների կոյտեր: Ներբողների, ճառերի ժամանակ էր գոտ: Նշանաւոր է որ կան մի քանի թարգմանութիւններ ուսւաերէնից, բայց ամենքն էլ կրօնական բովանդակութիւն ունին և վերցրած են կրօնաւոր հեղինակների աշխատութիւններից:

Ահա Մօնկվայի և Թիֆլիսի հայկական

գալրոցների ողին: Ինչպէս տեսնում էք, հայերէնազիտութիւնը, այսինքն այն զիսաւոր առարկան, որի վրա առանձին ուշադրութիւն էր գարձնվում և որ հայ աշակերանների կրթութեան զիսաւոր յենարանն էր, զրված էր այդ գալրոցներում այնպէս, ինչպէս մեր հին վանքերում: Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել ամենքի համար օրինակ էր Մխիթարեան միաբանութիւնը, իսկ սա իրապէս մի ուրիշ բան չէր, եթէ ոչ մեր վանականութեան մի բարձր զարգացումը: Թարմ հասանքներ, եւրոպական մաքի կտորներ մենք չենք տեսնում աշակերտական զրուածքների մէջ: Գինին նոյնն էր, հինը, բայց ածած նոր ամսնների մէջ: Մենք շարունակում էինք տիրացուական կրթութիւն սահանալ, թէե միաժամանակ սովորում էինք օտար լեզուներ, գիտութիւն: Այս օտար լեզուները, այս զիտութիւնը Մխիթարեան միաբանութեան էլ մատչելի էին, զեռ աւելի բայն չափերով, և սակայն արգելք չէին լինում որ միաբանութիւնը մնայ հոգով ու մարմնով զուտ կղերական-վանական հաստատութիւն:

Լազարեանների և Ներսէսի հիմնած կրթաբանները իրանց այս ոգով և ուղղութեամբ ազգային գալրոցի տիպ գարձան մեղ համար, կէս-սխօլաստիկական, չոր ու ցամաք,

կեանքից ու ժամանակի պահանջներից յևս  
մնացած մի գլուցի տիպ, որ մի քանի տաս-  
նեակ տարի զոյստիւն պահպանեց մեղա-  
նում իր մեծախօս ճառերով, խթին զրաբա-  
րով։ Հեռու դնալ այդպիսի մտաւոր պաշա-  
րով չէր կարելի, եթէ երեան չը զար մեղա-  
նում մի երեսյթ, որ յեղափոխութիւն առա-  
ջացրեց մեր աշխարհահայեացքների ու հաս-  
կացողաւթիւնների մէջ։

Այդ յեղափոխող երեսյթի ծնողները դար-  
ձեալ նոյն գլուցներն էին։ Որքան էլ էին,  
անժամանակակից լինէր նրանց սպին, կար  
այն խոչոր հանգամանքը, որ զրանք եւրօ-  
պական սիստեմով բացված կրթարաններ  
էին, գանվում էին մեծ քաղաքներում, են-  
թարկված էին հասարակական կեանքի հո-  
սանքներին, ժամանակի ազգեցութեան։ Այս  
հզօր գործօնների չնորհիւ կաղարեան ձեմա-  
րանում սկսում է մշակվել մի պարզ, հան-  
քամատչելի աշխարհաբար լեզու։ Սկիզբը զը-  
րեց Յովակիմ Լազարեանը, ապա նրա գոր-  
ծը շարունակեցին ճեմարանի ուսուցիչները։  
Աշակերտներ հաւաքվում էին զանազան եր-  
կիրներից, ամեն մէկը բերում էր իր երկրի  
խօսակցական հայերէնը, գաւառաբարբառը։  
Ուսուցիչները հետեւում էին նրանց խօսակ-  
ցութիւններին, մաքրում էին լեզուն գաւա-

ռաբանութիւններից, օտար բառերից և մշա-  
կում էին մի հարազատ հայերէն, որ գրա-  
բար չէր, բայց գաւառաբարբառ էլ չէր, այլ  
բոլոր տեղերից եկածներին հասկանալի մի  
լեզու։\*)

Աշխարհաբար կար և Ներսիսեան գլուց-  
յում, այդ լեզուով էին կազմվում գասագըր-  
քերը ստորին գասարանների համար։ Ահա  
այդ սաղմերը աճում, զարգանում են աստի-  
ճանաբար և դնում են մեր առջի գլուցի և  
զրականութեան ողին փոխելու անհրաժեշ-  
տութիւնը։ Սկսվում են մեծամեծ ջանքեր։  
Այդ անհրաժեշտութեան շուրջը բացվում է  
մի մեծ պայքար. առաջ են գալիս վերանորո-  
գող, համարձակ տարրեր, որոնց գէմ խըմք-  
վում է պահպանողական մի մեծ կուսակցու-  
թիւն։ Նիւթը, մրցողները նոյն երկու զրպ-  
րոցներից էին գուրս գալիս։ Նորերը և հնե-  
րը, միմեանց հետ ընդհարվող, միմեանց գէմ  
կուող սերունդները մեծ մասամբ կազարեան  
ձեմարանի և Ներսիսեան գլուցի սաներն էին։

Նորերի ամենանշանաւոր ներկայացուցի-  
չը Սահմանոս Նազարեանցն էր։

\*) «Արարատ» լուսակը, 1850, № 2:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԿԵՆՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԸՐՁԱՆՔ  
(1812—1841)

### I

Խոյեցի Տիր-Եսայիմ:—Ստեփանոսի բնաւորութիւնը:—  
Քնիանիք եւ լուսանեկան կրուրիւն:—Նազարեանցը Ներ-  
սիսկան դպրոցում:—Խաչառուր Արովեանցի հետ մեր-  
մանալը:—Ի՞նչ տուեց դպրոցը:—Պրօֆէնոր Պարրօ:—  
Երովեանցը ձանապարհ է բաց անում դեսի գերման-  
կան համալսարան:—Նազարեանցը՝ Ներսիսկան դպրո-  
ցից դուրս գալուց յէտոյ:—Թիսկի Պորվա:

—○—

Առևսաց տիրապետութիւնը Անդրկովկա-  
սում երկար չը մնաց այն սահմանների մէջ,  
որ տուել էր վրաց թագաւորութիւնը: Իրե-  
րի բնական ընթացքը խսկոյն և եթ ընդհա-  
րումներ առաջացրեց նրա և մահմեղական

տիրապետութիւնն մէջ: Պէտք էր նուածել  
անդրկովկասկան խանութիւնները: 1804 թ.  
ակզրում իշխան Յիշիանով, արխնահեղ պա-  
տերազմից յետոյ, նուածեց Թիֆլիսին մօ-  
տիկ Գանձակը և ոչնչացրեց այնտեղի խա-  
նութիւնը: Շտապելով օդուտ քաղել այդ յաղ-  
թութիւն գործած ապաւորութիւնից, Յի-  
շիանով առաջարկեց Դարաբաղի և Շիրվանի  
խաններին որ հպատակին ուուաներին առանց  
զիմազրութիւնն և խանները կատարեցին այդ  
առաջարկութիւնը: Պարսկաստանը, տեսնելով  
իր հպատակ խանների կորուստը, շտապեց  
զէնք բարձրացնել ուուաների գէմ: 1805 թը-  
ւին Յիշիանով մօտեցաւ Արաքսի հովիտին  
և ուուաց զօրքերը պաշարեցին Երևանը: Այդ  
ժամանակն էր, որ Խոյի և Սալմասարի կող-  
մերից մի հայ զազթականութիւն եկաւ, ան-  
ցաւ ուուաց հողը, որպէսզի ազատ լինի  
պարսկական արքապետութիւնից: Գազթա-  
կանների մէջ էր խոյեցի Եսայի քահանաց  
Նազարեանցը, որ բնակվեց Թիֆլիսի Հաւլա-  
բար թաղում:

1812 թւականի գեկտեմբերի 25-ին այդ  
քահանայի ընտանիքում ծնվեց չորրորդ զա-  
ւակը, որին առւին Սակիանոս անունը: Նրա-  
նից առաջ ծնվել էին Դիմիարիսոր, Հոփի-  
սիմէն և Մարտիրոսը:

Մենք ունինք այդ ընտանիքի կենցաղավարութեան պատկերը, որ թողել է Ստեփանսս Նազարեանցը<sup>\*)</sup>: Այդ պատկերը մեր առաջն է հանում մի նահապետական հայ ընտանիք, մէկը հարիւրաւոր ու հազարաւոր այդպիսի ընտանիքներից: Հայրը, Տէր-Եսային, հարսւստ չէ, հարստութիւն չէ ել որոնում, բաւականանալով մի համեստ և չափաւոր ապրուստով: Նա իր ժամանակի լաւ հոգեսրականներից մէկն է, զոնէ զիտէ զրել «բաւական ընտիր հին հայկաբանութեամբ», այնքան զրասէր է, որ հաճոյքով ընդօրինակում է զանազան զրչագիր և տպած զրքեր: Տարածված խմորատախտակի վրա, ջանասէր քահանան շարունակ արտադրում էր զրքեր զեղեցիկ, շատ պարզ ձեռքով:

Միենյն ժամանակ զա մի սիրող, պարտաճանաչ ծնող էր: Իր երեխաններին կրթում էր մի խնամասարութեամբ, որ այդպիսի մարդուն է յատուկ: Երեխաններին սիրելը նրա սրտի առաջին զործն էր. չը կար մի անմեղ զուարձութիւն, որից նա սիրտ անէր զրկելու իր փառքիկներին: Սիրում էր յաճախ զրօսանքներ կատարել նրանց հետ սարերում, ձորերում, դաշտերում:

<sup>\*)</sup> «Հիսխափալ», 1864, № 5:

դի, որ այդ զրօսանքների ժամանակ հօր և երեխանների մէջ տեղի էին ունենում սրտագին, քաղցր խօսակցութիւններ: Նազարեանցը ասում է, որ այդ թափառումները «կատարեալ հարսանիք» էին երեխանների համար:

Տէր-Եսային, ինչպէս երևում է, նախապէս ինքն էր զաս տալիս իր երեխաններին: Լինելով իբրև հայր սրտաբաց, սիրող, քնքշամիրտ խնամակալ, նա խստապահանջ էր, նոյն իսկ անզութ իբրև ուսուցիչ: Զը պէտք է կարծել թէ այս երկու յատկութիւնները հակասական էին մի հօր մէջ: Եւ եթէ փայփայող հայրը շատ անզամ էր զիմում զաւազանին և ծեծին, զրա պատճառն այն էր, որ նա, իբրև իր ժամանակի զաւակ, խորապէս համոզված էր որ առանց ծեծի կրթութիւն չի լինի, որ ծեծը նոյնքան անհրաժեշտ է երեխայի մատասոր կրթութեան համար, որքան մօր կաթը նրա կեանքի առաջին տարիններում: Հէնց նոյն ծնողական սէրը հարկագրում էր ծեծով հասկացնել այն, ինչ երեխան չէ ուզում կամ չէ կարողանում հասկանալ ինքն իրան: Այդ մանկավարժական սիստեմի բալոր բարիքները լիուլի վայելել է Ստեփանոսը իր հօր տանը, նախ քան գոլրոց մտնելը:

Ստեփանոսը մի «խաղաղասէր երեխայ»

էր, ինչպէս ինքն է ասում: Միենոյնը հաստատում էն և նրան ճանաչողները, աւելացնելով որ նա բացի գրանից շատ խելօք էր և աշխատասէր \*): Այդ բոլորի հետ միասին նա մի «կրակոտ ամիական մանուկ» էր: Դա ցոյց է տալիս որ այդ աշխատասէր, հանդարտ մարզը ունէր վառվուն սիրտ, որ նրա մէջ չէր կարող լինել սասնութիւն, անտարբերութիւն գէպի շրջապատը: Մի կրակէ է դա, որ ոչ միայն ուշադրութիւն է ստեղծում, այլ դնում է սրտի մէջ ազնիւ կիրք, կուռզի, յարձակվողի, դիմազրողի հոսանքն է անչէջ պահում:

Տանը ստացած կրթութիւնը, իհարկէ, այրութէնն էր, Սաղմոսը և ապա կտակարտնը: Ստեփանոսը անզիր էր անում սրբազնն պատմուածքները, բայց բոլորովին մեքենարար, չը հասկանալով անզիր արածի միավը: Գրաբար լեզուն միանգամայն անհասկանալի էր նրան, ինչպէս և ամեն մի հայ երեխայի, որ սկսում էր ուսում ստանալ մայրենի լեզուով: Մեռած, ապակալի սիստեմը, աշակերտի մէջ ոչինչ հետաքրքրութիւն, ոչինչ աշխոյժ չը ստեղծելով, միայն տանջանք էր

\*) Երիցեան—«Ստեփանոս նազարեանց», «Փորձ» ամսագիր, 1879, № 11:

ուստօնառումնրան, ուստի և ուսումը մի վերին աստիճանի ծանր, մաշող լուծ էր, ուրին ամեն մի երեխայ չէր կարողանում դիմանալ: Ամեն անգամ, երբ Տէր-Եսային ցերեկով պառկում էր քնելու, Ստեփանոսը, վանդակից ազաված թռչունի նման, վաղում էր գուրս իր խաղերի ետեից: Մանական անսնզ զուարձութիւնը շատ թանգ էր նստում նրան: Հայրը, քնից զարթնելով տեսնում էր որ որդին զրքի վրա չէ խոնարհված, որոնում էր, գանում նրան, կապուում էր և «փառաւորսպէս» պատժում, այսինքն խրատում ու խելքի էր բերում նրան: Եւ հօր այդ գաման խրատների ժամանակ երեխաների պահապան հրեշտակ էր հանդիսանում մայրը:

Այս կինը, որի անունն էր Մանուշակ, նահապեատական խկասախալ մի հայունի էր, ընտանիքի սիրտ, անսահման, խելացնոր սիրով կապված իր երեխաների հետ, իր ամուսնու աջ թեր և սրտակից բարեկամը: Նա, ինչ տաել կուզի, անզրապէտ էր, բայց ունէր բնական հասկացողութիւն, կարողանում էր ըմբռնել և յարգել ամեն խելացի միտք: Նա

զարեանցը վիայում է որ չառ դէպքերում տիկին Մանուշակի աւելի հեռատես էր, աւելի պայծառ հայեացքների տէր, քան իր քահանայ ամուսինը: Երկուսի մէջ ընաւորութեան տարբերութիւն էլ կար. հայրը փորձառու էր, բաց փոքր ինչ կրօստ, մինչդեռ մայրը համբերող էր, մեղմ: Այս գծերը ժառանգել էր Ստեփանոսը: Բայց այդ հակասութիւնները այնքան զօրեղ չէին, որ կարսղանային խանգարել նահապետական օջախի հանգստութիւնը: Զիջողութիւնը, համբերովութիւնը—նահապետական առաքինութիւններ, որոնց ամենամեծ բաժինը, անշուշտ, հայ կնոջ վրա էր ընկած, հաստատում էին ընտանեկան յարկի տակ ամուսնական մի խաղաղ ու հաշտ կենակցութիւն: Աւելորդ է ասել թէ այդ ընտանեկան կացութիւնը որպիսի բարերար ազգեցութիւն էր անում երեխանների վրա, որոնք իրանց ծնողներին են նայում և իրանց առաջին կրթութիւնը իրանց օջախի մօտ են ստանում:

Նազարեանցը ճիշտ է նկատում որ երեխանները «քաջ հսկող և նուրբ նկատող» աչք ունին: Նրա այդ աչքը, սակայն, ծնողների կեանքի մէջ անբնական, դայթակղեցնող բան չէր տեսնում: «Հրամայողութիւն, տէր ու

աղախին»—այսպիսի ամուսնական դիրք չը կար Տէր-Եսայու և տիկին Մանուշակի մէջ: Երեխանները միշտ համոզված էին որ իրանց հօր ու մօր կամքը մի է և անպայման հնագանդվում էին նրանց: Ընտանեկան այսպիսի Դպրոցը, որքան էլ անշուք ու աղքատ, որքան էլ տոգորված հին նախապաշարմունքներով ու աւանդութիւններով, մի գեղեցիկ միջոց է երեխանների սրտի մէջ տան, ընաւնիքի սրբազն գաղափարը վառ պահելու համար: Եւ Նազարեանցը սրբութեամբ պահանջ այդ գաղափարը մինչև իր կեանքի վերջը, լինելով պարտաճանաչ ամուսին և օրինակելի հայր: Յիշենք տիկին Մանուշակի և մի այլ յատկութիւնը—երկիւղած աստուածակրութիւն, բարեպաշտութիւն: «Ոչ մի կարուեալ գատարկածեռն հեռացել չէ նորատան չէմքից, ոչ մի աղքատ զուրկ չէ մնացել նորա հացից ու սեղանից, ոչ մի օտարական և պանդուխտ նորա քրիստոնէական հիւրասիրութիւնից», ասում է Նազարեանցը: Մենք յետոյ կը տեսնենք որ իր, Ստեփանոսի մէջ, միշտ ապրում էր այդ բարի և մարդասէր մայրը:

Զը գիտենք թէ որքան ժամանակ Նազարեանցը զրագիտութիւն սովորեց իր հօր մօտ: Այսքանն է յայտնի, որ հայրը նրան և

Մարտիրոս որդուն յանձնեց Պօղոս վարդապետին, որ, ինչպէս վերև ասացինք, Ներսէս Աշտարակեցու բացած գլորոցի զեկավարն էր։ Այսաեղ Ստեփանոսը սովորում է հայկաբանութիւն Զամշեանի քերականութեան վրա, որի մի հատք վարդապետը ծախել էր Տէր-Եսայուն 10 բուքլով։ Աւելի ծեծ ուտելով Պօղոս վարդապետից, քան ուսում ստանալով, Նազարեանցը իր միւս դասընկերների հետ 1824-ին տեղափոխվեց իսկական Ներսէսեան գպրոցը։ Վարդապետի գլորոցը փակվեց, բայց նրա աշակերտները այնքան առաջդէմ էին հայկաբանութեան մէջ, որ մի առարուց յետոյ Ներսէսը նրանց աւարտման վկայականներ տուեց։

Պօղոս վարդապետի գլորոցում, ինչպէս ասացինք, Նազարեանցը ընկերացաւ Խաչատուր Աբովիանցի հետ։ Այս հանդամանքը շատ նշանաւոր է և պէտք է շեշտի առանձնապէս։ Երկու նշանաւոր մարդիկ, որոնք այնքան մեծ զեր են կատարել մեր կեանքի մէջ, մտերմանում են իրար հետ աշակերտական նստարանի վրա, պատանեկական հասակում։ Դա ապացոյց է որ երկուսի ընտրութիւնների մէջ միանման, ընդհանուր դժեր շատ կային։ Ուսման ծարաւ, աշխատասէր, քնքայշ սրտի ու զզացմունքների տէր

Աբովիանցը ամենից աւելի Նազարեանցին կպաւ, գտնելով նրա մէջ նոյն յատկութիւնները։ Բարեկամութիւնը միայն գլորոցում չը կապեց երկու պատանիներին, այլև յետոյ, երբ երկուսն էլ ծառայեցին նոյն գործին, երկուսն էլ միենոյն աչքով էին նայում հայրենի իրականութեան։ Բայց զլխաւոր, հիմնական գծերով այդքան մօտիկ լինելով միմեանց, Աբովիանցն ու Նազարեանցը, իհարկէ, մի խնձոր չէին միջից կէս արած։ Խառնուածքի առանձնայատկութիւնները, ինչպէս կը տեսնենք, զանազան ճանապարհներ ցոյց տուին երկու ընկերակիցներին՝ միենոյն գաղափարին ծառայելու համար։

Յիշատակութեան արժանի է և այն, որ Պօղոս վարդապետի մօտ Նազարեանցի գասընկերն էր և Առաքել Արարատեանը, որ յետոյ դարձաւ Նազարեանցի խիստ, թէն բթամիտ, հակառակորդը։

Ներսէսեան գլորոցում Նազարեանցն ու Աբովիանցը մի տարի իրար հետ ընկերութիւն արին։ Նրանք երրորդ, բարձր գասարանումն էին և 1826 թւի փետրվարին նրանք գլորոցը առաջին աւարտող 18 աշակերտաների մէջն էին։ Հետեւեալ տարուց բացվում էր չորրորդ գասարանը, ուստի աւարտողներից 11 հոգի ցանկացին մնալ գլորոցում՝ ուսումը

շարունակելու: Դրանց թւումն էր և Նազարեանցը: Իսկ Աբովիանցը չը մնաց, նա գնաց Հաղբատի վանքը, ուր գտնվում էր Եփրեմ Կաթողիկոսը, որպէսզի խնդրէ որ իրան ուղարկեն Վենետիկ: Թիֆլիսում ստացած ուսումը բաւականութիւն չէր տուել վառվուն երիտասարդին: Մի տարուց յետոյ, 1827 թ. փետրվարի 4-ին, Նազարեանցն էլ հեռացաւ Ներսիսեան դպրոցից, վերջացնելով ուսումը:

Ի՞նչ էր նա տանում այդ նոր հիմնարկութիւնից:—Իհարկէ, աւելի շատ բան, քան կարող էր տալ հէնց Պօղոս վարդապետի դպրոցը: «Բայց մի կտոր հայերէնից փոքր ի շատէ ուուսերէն, պարսկերէն, վերջումը և Փրանսերէն»—այսպէս է որոշում Նազարեանցը Ներսէսի դպրոցից դուրս տարած իր պաշարը: Ֆրանսերէնը Ներսիսեան դպրոցում 1827 թւից դաս էր տալիս պրօֆէսօր Շահան-Զրպետը, որ Պարիզից էր և կել Ներսէսի հրաւերով: Նազարեանցը մոռանում է որ իր տարած պաշարի մէջ կային և գիտելիքներ թուաբանութիւնից, աշխարհագրութիւնից, նկարչութիւնից և պատմութիւնից: Իսկ արանք նորութիւններ էին հայ աշակերտի համար: Ընդհանրապէս, փոքր, անբաւարար էր պաշարը, նա չէր կարող տալ այն ամենը, ինչ հարկաւոր էր կեանքի մէջ մի ինքնու-

րոյն, անկախ դիրք ստեղծելու համար: Նազարեանցն էլ ունի երկու աշակերտական աշխատութիւն «Երախայրիք Ներսիսեան Դպրոցի» ժողովածուի մէջ. մէկը արձակ դրուածք է՝ «Կական Խորայէլի» անունով, մի թունդ կրօնական գործ, թարգմանված ուսուերէնից, իսկ միւսը ստանաւոր է, մի ներբող, որի մէջ փառաբանվում է Ներսէսը: Երկու զրուածքներն էլ ոչչով աւել կամ պակաս չեն միւս աշակերտների շարադրութիւններից: Նազարեանցի դասընկերները այդ տեսակ պաշարով կեանքի մէջ մտնելով, գարձան կամ վաճառական կամ քահանայ կամ պաշտօնեայ պիտական ծառայութեան մէջ: Եւ եթէ Նազարեանցն ու Աբովիանցը չը զընացին այդ սովորական ճանապարհով, պատճառն այն է, որ դպրոցը ուրիշ կերպ ազգեց նրանց վրա:

Նազարեանցը ասում է որ իր ժամանակ մի քանի անհասների մէջ առաջացան «մի քանի կինդանի սերմեր, մի աղնիւ ձգտողութիւն դէպի ուսումն»: Դպրոցը սկիզբ դրից, նա չէր կարող լիուլի բաւարարութիւն տալ աշակերտաների պահանջներին, նա ցոյց տուեց ճանապարհը, արծարծեց սէր դէպի գիտութիւն, դէպի բարձրագոյն ուսումն: Այդ կենդանի սերմերն էին, որ տանում էին Աբո-

վեանցին կաթողիկոսի մօտ՝ Վենետիկ գնաւ-  
լու թոյլաւութիւն խնդրելու համար; Վենե-  
տիկը չէ աջողվում և ուսման ծարաւ երի-  
տասարդը ստիպված էր տեղափոխվել իր հայ-  
րենիքը; Բայց այդաեղ, երեք տարուց յետոյ,  
նրա առջե բացվում է մի բոլորովին նոր,  
անսպասելի ճանապարհ. նա գնում է այդ  
ճանապարհով դէպի իսկական լոյսը և տա-  
նում է իր ետեից իր սիրելի ընկեր Նազար-  
եանցին:

Այսաեղ ծագում է մի հետաքրքրական  
հարց. ինչ էր Ներսիսեան դպրոցը մեր ժո-  
ղովրդի համար;— Սնկասկած, մի լուսատու-  
ջան, առաջադիմական մի խոշոր քայլ: Թէ  
որքան խաւար էր այդ դպրոցը շրջապատող  
իրականութիւնը, ցոյց է տալիս Նազարեան-  
ցի հետ պատահած հետեւեալ դէպքը, որ պատ-  
մում է նրա մասին խօսողներից մէկը \*):

Ներսէսի կարգագրութեամբ դպրոցի բար-  
ձըր դասարանի աշակերտներին կիրակի օրեւ-  
րը ուղարկում էին եկեղեցի քարող խօսելու  
համար; Նազարեանցը մի անդամ քարողում  
էր Հաւլաբարի Զորաբաշի եկեղեցում: Նա  
խօսեց հինգերորդ դարի կրօնական պատե-  
րազմի մասին, յիշատակեց Վարդանին և նրա

զինակիցներին և մի քանի անդամ կրկնեց  
«քաջ», «քաջեր» բառերը: Ժամաւորներից  
մէկը, հաւլաբարցի Սոսին, որ թաղի հա-  
րուստն էր և առաջին մարդը, այլես չը կա-  
րողացաւ համբերել և, ընդհատելով քարոզ-  
չին, բարկացած ասաց. «Եւ Տէր-Եսայու որ-  
դայ, դու թէ կարաս, հոգուց խօսիր, թէ չէ՝  
այս սուրբ եկեղեցու մէջ, հեռի մեղանից,  
քաջերն ու դեմքը ինչ բան ունին»:

Բնորոշ դէսքը: Նազարեանցը իր կեանքի  
ընթացքում, համարեա միշտ, հաւլաբարցի  
Սոսու նման քննադատների էր հանդիպում:  
Դեռ այսաեղ, Զորաբաշի եկեղեցում, իրքն  
ապագայի պատկեր, երեան էր գալիս նոր,  
թարմ, գեղեցիկ իրողութիւնը. ժամանակը,  
վերջապէս, մեղանում էլ էր ստեղծում հայ-  
րերի և որդիների սերունդներ: Հայրերը  
սկսում էին չը հասկանալ որդիներին: Դա  
ցոյց էր տալիս որ նոր օրը հեռու չէր մե-  
զանից:

Թէ ինչ էր անում Նազարեանցը իր ու-  
սումը աւարտելուց յետոյ—մեզ ճիշտ յայտնի  
չէ: Ներսիսեան դպրոցից դուրս գալուց յե-  
տոյ սկսվում է նրա կեանքի մի շրջանը, որի  
մասին ակեղեկութիւններ չեն մնացել: Գի-  
տենք միայն, որ նա ուսումը աւարտելուց  
յետոյ էլ յաճախում էր դպրոց՝ Շահան-Զըր-

\*) Ելիցեան, «Փոլձ», 1879, № 11:

պետից Փրանսերէն դասեր առնելու համար: 1828 թւականի սեպտեմբերին Նազարեանցը Զրպետի այդ տեսակ աշակերտների թւում է նշանակված \*): Թէ ինչ եղաւ այնուհետեւ, մինչև 1832 թւականը—հաստատ յայտնի չէ: Եւ մնաք այդ անծանօթ ժամանակամիջոցը փոքր ի շատէ լուսաբանելու համար պիտի դիմենք Խաչատուր Աբովյանցին:

Ոռուս-թիւրքական պատերազմից յետոյ, 1829 թւականի ամառվայ վերջին, Կովկաս է գալիս Դօրպատի համալսարանի պրոֆէսօր Թ. Պարրօտ: Այս գիտնականը հինգ հոգուց բաղկացած, մի արշաւախումբ ունէր իր հետ և Կովկասում զանազան գիտնական հետազօտութիւններ էր կատարում: Գլխաւոր նպատակներից մէկն էր Արարատի գլուխը բարձրանալը: Այդ նպատակը տանում է գիտնական գերմանացուն էջմիածին: Ծառայելով գիտութեան, Պարրօտ կատարեց և մի այնպիսի գործ, որ մեծ բարերարութիւն էր հայերի համար: Նա դարձաւ այն միջնորդը, որ մոցրեց հային գերմանական գիտութեան տաճարը և այդ բաւական չէ՝ նաև գերմանական ընտանիքի մէջ:

Դուցէ առաջին անգամն էր, որ հետա-

\*) «Պատմ. Ներսիս. դպր.», եր. 170:

խուզող, վերլուծող գիտութիւնը այդքան նշանաւոր ուսումնականի միջոցով ներկայանում էր էջմիածնում, մի տեղ, ուր ամեն ինչ հնագարեան էր, հիմնված աւանդութիւնների, նախապաշարմունքների վրա, ուր ծուլութիւնը, անուսումնասիրութիւնը սպանում էին հոգին ու միագը: Դօրպատի գիտնականները ուսումնասիրում էին էջմիածնում եղած բոլոր հնութիւնները, հարց ու փորձ էին անում մեծ ուշադրութեամբ, մասնաւանդ որոնում էին հին պատմուածքներ Մասիսի մասին: Որքան զարմանք պիտի պատճառած լինեն նրանք էջմիածնի վարդապետներին. նրանք զնում են պատարագի, բայց երեսներին խաչ չեն հանում, պատարագից յետոյ բաց անել են տալիս բոլոր մասունքները, բայց ոչ թէ նրանց համբուրելու, նրանց երկրպագելու համար, այլ պարզապէս տեսնելու, զննելու և ցուցակագրելու համար: Անհաւատ, զոքից խենդացած մարդիկ պիտի երեային Պարրօտը և իր ընկերները վանքի միաբանութեան աչքում: Բայց կար այդ միաբանութեան մէջ մի սարկաւագ, որ այդպէս չէր նայում օտարազգի հիւրերին: Եւ դա Աբովյանցն էր: Պարրօտը ուշադրութիւն է դարձնում այդ ուշիմ երիտասարդի վրա, որ մի բացառիկ երեսյթի նմանութիւն ունէր

Էջմիածնի մթնոլորտում և վերցնում է նրան  
իր հետ իբրև թարգման և ուղեցոյց:

Պարօտի ճանապարհորդութիւնը դէպի  
Մեծ Մասիսի գաղաթը գիտնական տարե-  
գրութիւնների մէջ հռչակված է նրանով, որ  
դա հին աւանդութիւններով սրբագործված  
հսկայ սարի գաղաթին հասնելու առաջին  
աջող փորձն էր: Ճանապարհորդութիւնը տե-  
սեց 18 օր: Այդքան ժամանակ արշաւախում-  
բը կատարում էր գիտնական հետազոտու-  
թիւններ, հաւաքում էր բոյսեր, քարեր, մի-  
ջատներ, նկարում էր Արարատի տեսարան-  
ները: Աբովեանցին գրա հետ միասին և գու-  
ցէ գրանից էլ աւել գրաւում էր Պարրօտի  
և նրա ընկերակիցների մտերմական վերա-  
բերմունքը դէպի իրան: Գիտութեան, կըր-  
թութեան տենչանքով լցված երիտասարդը  
որբան պիտի ոգևորվէր, ականատես լինելով  
թէ ինչպէս այդ մարդիկ մի զարմանալի անձ-  
նազոհութեամբ, արհամարհելով բոլոր վը-  
տանգները, ձգտում են հասնել իրանց նպա-  
տակին: Նա աղաչում է որ իրան չը թողնեն  
ճանապարհի կէսին, տանեն մինչև սարի գա-  
ղաթը: Նրա մէջ, իհարկէ, խօսում էր ջերմ  
հայրենասիրութիւնը, որ միշտ և ամեն տեղ  
նրա հետ էր: Տեսնել սրբազն Մասիսի կա-  
տարը՝ նշանակում էր տեսնել այն խորհրդա-

ւոր կէտը, որի հետ այնքան հին, նուիրա-  
կան աւանդութիւններ են կապված:

Այդ աւանդութիւնները պատմում էին թէ  
ծեր Մասիսի խորխորատներում գեեր և քաջ-  
քեր են ապրում, թէ նրա գլուխը բարձրա-  
նալ չէ կարելի, թէ ու Յակոբը կամենում  
էր հասնել ատապանին, բայց չէր կարողանում  
և հէնց որ քնում էր, հրեշտակը վերցնում  
էր նրան և էլի ցած տանում, մինչև որ խրդ-  
աց սուրբին և տապանից մի տախտակ բե-  
րեց ու տուեց նրան, ցոյց տալով որ Արա-  
րատի գաղաթի վրա չէ կարող մարդկային  
ոտ լինել:

Եւ ահա եւրօպական գիտութիւնը գալիս  
էր ոստնակոխ անելու այդ գարաւոր առաս-  
պելներն ու աւանդութիւնները: Հայրենի  
երկրի սէրից աւելի հզօր ու մեծագործ  
չըր նա, այդ քաջամարտիկ գիտութիւնը, որի  
մարդը այնքան նահատակութիւններ էր յանձն  
առնում Աբովեանցի աչքի առաջ, չօշակելի,  
գրական ճշմարտութիւններ գտնելու համար:  
Եթէ Արարատի վրա չը կային առասպելների  
գևերն ու քաջքերը, եթէ ու Յակոբի հրեշ-  
տակը յետ ու յետ չէր հալածում գիտնական  
գերմանացիներին, գրանց փոխարէն 16,000  
ոտնաչափ բարձրութեան վրա կային իրական  
սարսափիներ. Ճիւնախառն բուքեր և յաւիտե-

նական սառնամանիքներ, որոնք իւրաքանչիւր քայլափոխում մահ էին սպառնում: Սաւկայն Պարրօտը անձնազոհ գիտնականի հաստատակամութեամբ գնում էր այդ իրական սարսափների դէմ, պատում էր նրանց իր կրծքով և մշուշների ու ձիւների թագութեամբ գիտութեամբ էր հանում գիտութեամն համար: Ո՞րպիսի օրինակ: Հայրենի տղէտ երկիրն էլ լուսաւոր ուսումնասիրողին այսպիսի յամառ, տոկուն, անձնազոհ ծառայութիւնների էր կարօտ: Արովեանցը հասկանում է այդ մեծ ճշմարտութիւնը, նրան տուած էր այդ պքանչելի կարողութիւնը: Եւ նաքաց է անում բերանը, բաց է անում իր ամբողջ տոչորված սիրու և յայտնում է համակրելի պրօֆէսօրին թէ ինքն էլ ծարաւ է գիտութեան, բայց միջոց չունի գիտութեան տաճար մանելու...

Բաւական էր և այսքանը: Մնացածը շատ լաւ գիտէր Պարրօտը: Նա տեսել էր այդ տուչորվող երիտասարդի հայրենիքը, գիտէր թէ ասիական խաւարը, բանակալութեան դարերը և խոր ու թանձր տղիտութիւնը որքուն սոսկալի կապանքներ ևն դրել այս խեղճ երկրի վրա, որքան է նրան հեռացրել այն տեղերից, ուր ինքն էր ապրում և գործում: Ոչ ոք այդ երկրում չէր հասկանում թէ ինչ է կամե-

նում այդ երիտասարդ սարկաւագը, ամենայն հայոց կաթողիկոսն անդամ չը գիտէր թէ ինչ ասել է գիտութիւն, լոյս: Հասկացաւ միայն Պարրօտը: Նա ոսկի սիրտ ունէր. մարդկային բարօրութիւնը այդ սրտի ամենաթունդ զարկերից մէկն էր: Եւ նա խոստանում է Աբովեանցին տանել իր մօտ, Դօրպատ:

Այդ բոլորը կատարվում էր Արարատի վրա: Հայոց հինաւուրց հոկայ սարը ինքը, հայութիւնն էր. անշարժ ու մշուշապատ, անմատչելի, նախապաշարմունքների և առասպելների մէջ թաղված: Դարերի այդ սփինքսը լուսաւորելու համար հեռուից գալիս է գիտութիւնը: Նրան չէ դիմանում նոյն իսկ Արարատի վիթխարի, սառցապատ, թանձր մարմինը: Եւ գիտութիւնը ոչ միայն պատում է դարաւոր անյայտութիւնն ու աղջամուղը, այլև մի փոքրիկ, բայց պայծառ ճրագ է վառում մութի մէջ: Եթէ մի բանաստեղծ այսպիսի պատկեր հնարէր, մենք չէինք հաւատայ: Բայց սա անհերքելի փաստ է, որ խաւար Արարատի խաւար որդի Աբովեանցը հէնց այդտեղ էլ, իր խաւար մօր մարմնի վրա, գտաւ լոյսի ճանապարհը, վառվեց իբրև ճրագ...

Պարրօտի հայրը նշանաւոր գիտնական էր

և մեծ ազգեցութիւն ունէր Պետերբուրգում,  
յայտնի էր նոյն իսկ Նիկոլայ կայսրին։ Ռւ-  
սումնական ճանապարհորդի համար դժուար  
չէր Արովեանցին Դօրպատ տանելը։ Ժողո-  
վրդական լուսաւորութեան մինխատը յար-  
դում է պրօֆէսօրի խնդիրը և Արովեանցին  
գանձարանից խոստացվում է թէ ճանապար-  
հածախս մինչև Դօրպատ և թէ երեք տար-  
վայ ապրուսի փող։

1830 թւականի ամառը Արովեանցը ճա-  
նապարհվում է Պետերբուրգ, որ այնտեղից  
ահցնէ Դօրպատ։ Բայց հեշտ էր մի այդպիսի  
գործ կատարելը։ Այն ժամանակների հաղոր-  
դակցութեան ճանապարհները այնպէս էին,  
որ օտարութիւն գնացողը գերեզման գնա-  
ցողի էր նմանվում։ Մանաւանդ հայ ժողո-  
վուրդը երկար դարերի ընթացքում անհա-  
մար դառն փորձերով դիմէր թէ որքան ա-  
ւերիչ ու սգալի դժբախտութիւն է պանդիւ-  
տութիւնը, գիտէր որ մեծ մասամբ հեռանա-  
լը մոռանալ էր նշանակում։ Հասկանալի է  
որ Արովեանցի պանդիւտութեան հակառակ  
պիտի լինէր ամենից առաջ նրա հայրական  
տունը։ Բայց կար և ուրիշ արգելք։ Արով-  
եանցը սարկաւագ էր և գտնվում էր էջ-  
միածնի իշխանութեան տակ։ Եփրեմ կաթո-  
ղիկոսը երկար ընդդիմանում էր այդ ճանա-

պարհորդութեան գլխաւորապէս այն պատ-  
ճառով, որ հաւատացած էր թէ Արովեանցը  
գերմանացիների մէջ հաւատափոխ կը դառ-  
նայ։ Ահա ինչ էր հայոց եկեղեցու գլխի աշ-  
խարհայեացքը։ Եւ մենակ նա չէր այսպէս։  
Նրանից յնտոյ էլ, երկար ժամանակ, հայերի  
հին սերունդը խորշում էր Արովեանցից և  
Նազարեանցից, որովհետեւ չէր հաւատում թէ  
նրանք գերմանական միջնավայրում ապրե-  
լուց, գերմանունիների հետ ամուսնանալուց  
յնտոյ կարող էին հայ մնալ...

Արովեանցը, սակայն, յաղթեց այդ բոլոր  
արգելքները, անտես արաւ ծնողական ար-  
տասունքները, ծերունի կաթողիկոսի հայ-  
րական խրատները, այնքան սաստիկ էր գի-  
տութեան ծարաւը նրա մէջ։

Ի՞նչ էր անում այդ ժամանակ Նազար-  
եանցը։

Պետերբուրգից 1830 թւի օգոստոսի 20-ին  
գրած մի նամակում Արովեանցը խօսում է  
մի Ստելիանոսի մասին \*), որին անուանում  
է իր սիրելին և մանկութեան բարեկամը։  
Արգեօք սա Նազարեանցն էր։—Հազիւ թէ  
նա լինէր, քանի որ Արովեանցի մանկութեան

\*) Ն. Տէր-Կարապետեան—«Խաչատուր Արովեան»,  
Թիֆ. 1897, ել. 31։

բարեկամ Ստեփանոսը, ինչպէս երեսում է, զինուորական դպրոցումն էր գտնվում, որովհետեւ Արովեանցը զրում է. «Ծառայելով ի կորպուսի իւրում ի Միխայելով զամկէն ոչ կարաց առ ժաման ընկալնուլ զիս»: Միւս կողմից էլ Լազարեան ճեմարանի աշակերտների ցուցակի մէջ մենք գտնում ենք «Ստեփան Նազարեանց» անունը<sup>\*\*</sup>): Եթէ ընդունենք, որ դպրոցը վերջացնելուց յետոյ Նազարեանցը գնացել էր Ռուսաստան, այն ժամանակ պէտք է անել մի այլ ենթադրութիւն—որ Դօրպատ գնալուց առաջ նա վերադարձել է Թիֆլիս՝ իր մօրը տեսնելու համար, որովհետև նա շատ պարզ է ասում թէ Դօրպատ ճանապարհվել է Թիֆլիսից 1832-ին: Գուցէ, ընդունելով այս ենթադրութիւնը, հասկանալի դառնան Նազարեանցի այս խօսքերը. «Բայց թէ կրկին տեսութեան ժամեւրը—մանաւանդ երկարատեւ բացակայութենից յետոյ, որպիսի տարապայման շարժողութիւնք սովոր էին յարուցանել նորա (այսինքն մօր) մէջ, դժուար է ինձ նկարագրել»<sup>\*\*\*</sup>):

\*) Մսեր Մագիստրոս—«Յիշատակարան տոհմին Լազարեանց», Մ. 1856:

\*\*) «Հիւսիսափայլ», 1864, № 5:

Բայց ինչպէս էր որ Նազարեանցն էլ Դօրպատ գնաց:

Մօսկվայի գերմանական պաստօր Հայնրիխ Վէօլէր, Նազարեանցի մտերիմ բարեկամներից մէկը, իր յիշողութիւնների մէջ<sup>\*)</sup> ասում է թէ Ներսիսեան դպրոցում Նազարեանցին տեսաւ նոյն պրօֆէսօր Պարրօտը, որ խորհուրդ տուեց նրան գնալ Դօրպատ: Որ Նազարեանցը կարող էր տեսած լինել Պարրօտին, մանաւանդ Թիֆլիսի վրայով նրա Ռուսաստան վերադառնալու ժամանակ, հէնց նոյն Արովեանցի յանձնարարութեամբ, այդ անհաւանական չէ կարող լինել. այդ տեսակցութիւնը կարող էր տեղի ունենալ նոյն խել Ներսիսեան դպրոցում, ուր, երկի, յաճախ գնում էր Նազարեանցը: Բայց նրան Դօրպատ տանողը իսկապէս Արովեանցն էր:

Արովեանցի յիշատակարանի մէջ գրված է որ 1832-ին նրա գերմանացի բարեկամներից մէկը, Նվէլա, խօսք է բաց անում հայերի մասին և ասում է Արովեանցին. «Արդէօք ձեր հայերից չը կայ մի ուրիշը, որ գայ մեզ մօտ սովորելու. շատ ցանկալի է որ դուք, իբրև մի նշանաւոր հին ազգի ժառանգներ

\*) Զեռագիր, յատկապէս գրված է մեզ համար պ. Ս. Ճահապիկի խնդիրքով:

և ընդունակ ժողովուրդ, աւելի շատ թւով զայիք մեղ մօտ ուսանելու»: Արովեանցը պատասխանում է. «Կայ այդպիսի մէկը, Ստեփանոս անունով, որ նոյնպէս շատ սէր ունի սովորելու, անցեալ տարի շատ աշխատեցի բերել այստեղ, բայց չը կարողացայ»: Գերմանացի հայասէրը առաջարկում է Արովեանցին գնալ Պետերբուրդ և միջնորդել այդ Ստեփանոսի համար, խոստանում է տալ ծախսերը: Բայց Արովեանցը անցարմար է յամարում իր գնալը և խնդրում է որ նա ինքը մի բան անէ: Շվեյցան, մինիստրի օգնութեան չը դիմելու համար, խոստանում է իր սեփական միջոցներից հոգալ Ստեփանոսի ծախսերը:

Այստեղ արդէն Ստեփանոսը՝ Նազարեանցն է: Արովեանցի և Նազարեանցի մէջ, ինչպէս երեսում է, մի ընկերական ուխտ կար՝ միասին բարձր ուսում ստանալու: Արովեանցը տեղ հասնելուց յետոյ հէնց առաջին տարին աշխատում է իր ընկերի համար և վերջ ի վերջոյ պատճառ է դառնում որ Նազարեանցն էլ գնայ Դօրպատ <sup>\*\*)</sup>: Ինքը Նազարեանցն էլ, ի-

\* ) Արովեանցի մասին խօսովներից մէկը, Մ. Տէրպարեանց, 1861 թւակտնին գրում էր, գիմելով Արովեանցի յիշատակին. «Դու էիր պատճառ որ պարոն նազարեանցը

հարկէ աշխատում էր և նրան օգնեց բժիշկ Աօլօմոն Տէր-Ղուկասեանցը, որ յանձն առա հոգալ նրա ծախսերը <sup>\*)</sup>:

Հայրական տանից գուրս գնալիս՝ Նազարեանցի ստներին էլ փաթաթվել են թանկագին, սիրելի արգելքները: Նրա հայր Տէր Եսային մնուած էր: Նահապետական ընտանիքի սրբազն օրէնքն է որ ժրագլուխ տանտիկինը իսկոյն բանում է վախճանված տանտիրոջ տեղը: Այդպէս էր և Նազարեանցի մայրը: Նա իր չուրջն է հաւաքում երեխաներին և նրանց մէջ պատկառանք և սէր է վառ պահում գէպի իրանց հօր յիշատակը, գէպի սրբազն օջախը: Ստեփանոսը, հրաժեշտ տալիս, ականատես է լինում մի այսպիսի ցընցող տեսարանի: Մայրը վերջին րօպէին, համբուրելով իր որդուն, մերկացնում է իր ծիծը և գնելով գետնի վրա, երգուեցնում է որդուն որ նա չը մոռանայ իր որդիական

ստացել է երօպական ուսումն և գիտութիւն («Կոռունկ», 1861, եր. 540): Նազարեանցը կարդացել է այս տողերը և եթէ զբանց մէջ գանէր անձտութիւն, անշուշտ իր ընկերի նուիրական յիշատակի համար վիրաւրական չէր համարի անձտութիւնը ուղղելը:

\*) Ջահապիգեան—«Հրապարակախօս Զայն», Մօսկվա, 1881, եր. 11.

աղարտքը, չը մոռաննայ իր մօրը։ Այդպիսի «ախ-  
տաբորբոք» սէրը յատումէ է ասիացի մայրե-  
րին—ասում է Նազարեանցը։ Այս, ճիշտ է:  
Եւ գուցէ այդ բացառիկ յատկութիւնը ունի  
իր տեղական, եթէ կարելի է ասել՝ ասիա-  
կան պատճառը։ Արևելքի մթնոլորտը—ընդ-  
հանրապէս կոշտ ու հեղձուցիչ—մի կազարեայ  
ծանրութիւն է մանաւանդ կնոջ համար։ Հայ  
կինը աւելի ևս ծանր պայմանների մէջ է  
ասպել. սուրը, բոնութիւնը, պանդխառութիւ-  
նը դարերի ընթացքում խլում էին նրա որ-  
նը դարերի բնակչում էին նրա ճնշված, անխօս,  
դիներին։ Բնական է որ ճնշված, անխօս,  
տանը և դրսում սարուկ ասիացի կնոջ մէջ  
մայրական սէրը այդքան «ախտաբորբոք»,  
այդքան ծայրայեղ զարգացած լինի...»

## II.

«Նոր իմացական մկրտութեան աւագանը»։—Առաջին  
կրտանելը—գերմանական ընտանիք։—Արովեանցը իր-  
ւել եռ, կուտսուրական մարդ։—Նազարեանցը համարա-  
րանում։—Գերմանական համարատանը. նրա ազդեցու-  
րիւնը Ծուսաստանի վրա։—Գրական եւ հասարակական  
բուռն հոսանքներ Գերմանիայում։—Փիլիսոփայութեան-  
կանդիդատը։—Խոցպէս մՏնել կեանի մէջ։—Պատրաստու-  
թիւններ Պետրուրում։—Արովեանցը եւ նազարեան-  
ցը տեղ չունի հայկական իրականութեան մէջ։

—○—

Խաչատուր Արովեանցը մնաց Դօրպատում  
մինչև 1836 թւականը։ Արդէն 25—26 տա-  
րեկան երիտասարդ էր նա, երբ գնաց Դօր-  
պատ. և սակայն այդ հասակում պէտք էր  
սկսել մի նոր դպրոցական կրթութիւն։ Ոչ  
հասակը, ոչ պատրաստութիւնը չէին թոյլ  
տալիս նրան մանել համալսարան, ընտրել  
մի որոշ մասնագիտութիւն։ Դրա փոխարէն  
նա հիմնաւոր կերպով սովորեց գերմաներէ-

նը, դասեր էր առնում Պարրօտից և նրա  
ընկերներից, յաճախում էր համալսարան,  
լուսում էր դասախոսութիւնները իրքի ազատ  
ունկնդիր:



ԽԱՅՏՈՒԹ ԸՆԹԱՅՆՑ

Դօրպատից նա դուրս տարաւ մի ընդհաւ-  
նուր կրթութիւն և, որ ամենազլիսաւորն է,

հիմնաւոր բարոյական գաստիարակութիւն,  
որոշ աշխարհայեցողութիւններ: Մանելով  
գերմանական այդ փոքրիկ, բայց չատ նշա-  
նաւոր քաղաքը իրքե մի ասիացի մարդ, էջ-  
միածնի տիրացու, նա վեց տարվայ ընթաց-  
քում այնքան չատ բան սովորեց և իւրա-  
ցրեց, որ հայրենիք վերադառնալիս զգում էր  
թէ այլև չէ կարող առաջվայ նման լինել,  
ուստի առաջին գործն է դարձնում տիրա-  
ցութիւնից պաշտօնապէս հրաժարվելը: Այդ  
վերածնութիւնը շատ գեղեցիկ կերպով պատ-  
կերացնում է Ստեփանոս Նազարեանցը, առ-  
սելով. «Կեցութիւնը, ուսումը և նկատողու-  
թիւնը Դօրպատեան գիտուն և բարեմիտ մար-  
դերի մէջ մի նոր իմացական աւագան դար-  
ձաւ նորա հոգու համար, և վերստին ծնաւ  
նորան»: \*)

Այդ պատկերաւոր համեմատութիւնը շատ  
ճիշտ է: Դօրպատը մի աւագան էր, բայց ոչ  
միայն Աբովեանցի համար: Այնտեղ մկրտից  
և ինքը Նազարեանցը, այնտեղ նոյն հոգեոր  
մկրտութիւնը ընդունեցին և մի շաբք հայ  
երիտասարդներ, որոնք մեր վերածնութեան  
արշալոյսի երգիչները դարձան: Դօրպատը  
ուսուահայերի բարերարն էր:

\*) «Հիւսիսափալլ», 1858, № 2, եր. 145;

Նազարեանցը աւելի երկար մնաց Դօրպատում, աւելի հիմնաւոր կերպով ուսում ստացաւ: Ուժ տարի տևեց նրա գօրպատեան կեանքը: Համալսարան մանելու համար պէտք էր երկար պատրաստվել, քննութիւն տալ: Եւ եթէ մենք յիշենք թէ որքան խեղճ ութեաթե պաշարով էր նա զնացել Դօրպատ, հասկանալի կը լինի թէ ինչ հսկացական աշխատանք պիտի նա գործադրած լինի՝ համալսարանական ուսանողին անհրաժեշտ դիտական պատրաստութիւնը ձեռք բերելու համար:

Այդ պատրաստութիւնները այն օգուտն ունեցան, որ Նազարեանցի մկրտութիւնը իմացական աւագանում աւելի երկարատև էր: Կարծես ճակատագիրը դիտմամբ այնպէս էր տնօրինել, որ հայերին առաջին անգամ եւրօպական լոյս և անդադար առաջադիմութիւն քարոզող մարդը երկար մնաց այդ լոյսի շրջաններում և կեանքի այնպիսի պայմանների մէջ, որոնք միանգամայն պարզ և շատ անհրաժեշտ պիտի գարձնէին նրա համար եւրօպական մտքի բարիքները: Այնքան համոզված, մոլեուանդ քարոզիչ գառնալու համար պէտք էր մինչեւ ուսկորների ծուծը տոգորվել եւրօպական գաղափարներով, վերածնվել անձամբ, կեանքի առաջին անդամութութեան մաքուր աւագանի մէջ:

Նպատակ դարձնել այն ամենը, ինչ առաջարկվում էր ուրիշներին: Նազարեանցը անզիր արած ձշմարտութիւններ չէր քարոզում. ինչ նա ասում էր, կարդացածից և լսածից չէր միայն վերցնում, այլ այն ամենից, ինչ ինքն էր անձամբ ընդունել:

Ահա որքան հրաշալի էր իմացական մըկրտութեան նոր աւագանը: Մենք պէտք է ներկայ լինենք այդ մկրտութեանը, պէտք է տեսնենք թէ ինչպէս էր կատարվում մեր առաջին գործիշների վերածնութիւնը: Դա մի սուրբ տեսարան է: Դժբախտաբար, շատ աղքատիկ են տեղեկութիւնները Նազարեանցի գօրպատեան կեանքի մասին: Եւ մենք դարձեալ պիտի զիմենք Աբովեանցին: Տեսնելով նրա կեանքը Դօրպատում, մենք տեսած կը լինենք և Նազարեանցի կեանքը: Երկու մըտերիմ ընկերները, միենոյն հողի ծաղիկներ, միենոյն իրականութեան զաւակներ, միենոյն երազներով ու տենչանքներով վառված, միատեսակ պիտի մկրտվէին այդ նոր անձանոթ միջավայրում, զիտութեան և քաղաքակրթութեան մաքուր աւագանի մէջ:

Իզուր չէ Նազարեանցը, խօսելով Աբովեանցի իմացական աւագանի մասին, նախ դնում կեցութիւնը Դօրպատում և ասա միայն ուսումը, իրբե տարրեր, որոնցից կազմ-

վեց այդ աւազանը։ Մեր երիտասարդների առաջին կրթարանը այն միջավայրն էր, ուր նրանք ապրում էին—գերմանական ընտանիքը։ Բաւական չէ որ մի տեղ լինի համալսարան։ հարկաւոր է որ այդ տեղում լինեն և այնպիսի պայմաններ, որոնք համալսարանի հետ ձեռք ձեռքի տուած տանում են երիտասարդութիւնը դէպի մարդկայնութիւն։ Այդ կողմից գորպատեան այն շրջանը, որի մէջ ընկաւ Աբովեանցը, ուղղակի հրաշագործ էր։

Պրօֆէսօրները, նրանց ծանօթները Աբովեանցին ընդունում են գրկաբաց, մի հազուագիւտ սիրալիք բարեկամութեամբ և մըտերմութեամբ։ Նրան տաշում են, յղկում են, ընտելացնում են քաղաքակրթված կեանքին, հոգ են տանում նրա մտաւոր պիտոքների մասին, և այս ամենը այնպէս բարեկամաբար, այնպիսի քաղցրութեամբ, այնպիսի մայրական քնքութեամբ, որ հեռաւոր երկրի ծնունդ անտաշ երիտասարդը ոչինչ անյարմարութիւն չէ զգում, ոչինչ վիրաւորանք իր ինքնասիրութեան համար։ Ընդհակառակն, նա մի առանձին սիրով, մի յափշտակութեամբ է վերաբերվում իր ուսուցիչներին, ուղում է շատ բան տեսնել, իմանալ, լցվում է իր ասիականութեան կեղեր հանելու և նոր, լու-

սաւոր կեանքի ամբողջ ոգին իւրացնելու տենչանքով։ Անշուշտ, այստեղ գեր կատարողը միայն Աբովեանցին յատուկ ուշիմութիւնը չէ, ուսման, դիտութեան ծարաւը չէ միայն։ Կայ և այն, որ նա այս օտար ազդի մէջ մի մարդ է, մարդու բոլոր սրբազնի բրաւունքներով։ Նրա ծագումը, նրա ազգութիւնը, հայրենի աւանդութիւններն ու գաւանանքները ոչ մի արգելք չեն, որ գերմանական ընտանիքը մտերմանայ նրա հետ, մեծարելով նրա ազգը, նրա կրօնական հայեցքները, նրա գաղափարները։

Հրաշալի է մանաւանդ այն կրօնական համբերողութիւնը, որ նա հանդիպում է գերմանական կրթված ընտանիքի մէջ։ Պարրօտի մօտ էր ճաշում Աբովեանցը և նրա կինը պաս օրերում պասվայ կերակուր էր պատրաստում Աբովեանցի համար։ Այսաեղ ահա մարմին և արիւն էր սահնում բարոյական այն ծանրակշիռ գասը, թէ կրօնական խրտրութիւնները կարող են և մի կողմ մնալ, երբ մարդիկ լցված են միմեանց հետ եղբայրաբար ապրելու ցանկութեամբ։ Միևնույն ժամանակ դա մի ահագին յաղթանակ էր, որ տանում էր լուսաւորված միտքը, յափշտակելով և հնագանդութեան բերելով այնպիսի անկիրթ մաքերը, որոնք մեծացել էին նեղ

աղանդաւորական ֆանստիկոսութեան մէջ, որոնք սովոր էին հարազատ եղբօրն անդամ ատել և հալածել, եթէ նա տարբեր կրօնական հասկացողութիւնների է հետեւում: Յարգելով և ամեն կերպ մեծարելով իր աշակերտի ներքին, նուիրական հասկացողութիւնները, պրօֆէսօր Պարրօս հասկացնում էր նրան, որ բոլոր մարդիկ, իհարկէ, իր նման չեն և խրատում էր ծանօթութիւնների մէջ լինել ընտրող, ծանօթանալ անկեղծ, շիտակ մարդկանց հետ, երբէք չը հեռանալ ազգային կրօնից, լաւ խմանալով որ բոլոր քրիստոնեաները, չը նայած տարբեր դաւանութիւններին, մի են:

Եւ, երեխ, Արովեանցին աջողվում է հէնց այդպիսի շիտակ և ազնիւ մարդկանց շրջանում ապրել ամբողջ ժամանակը. նրա գործատեան յիշողութիւնները դրախտի նման մի բան տեսած մարդու յափշտակութիւննեն յիշեցնում: Տեսնում է նա իր շուրջը ազատ կեանք, փոխադարձ սէր, համերաշխութիւն և նրա գրչի ծայրից ինքն ըստ ինքեան մի համեմատութիւն է բղխում իր տգէտ ազգի և այս կրթված ժողովրդի մէջ: «Տես, իմ քաղցր հայրենակից, — ասում է նա, — տես ինչպէս պէտք է վարվել, ինչպէս են քաղցրաբարոյ դերմանացիները սիրում օտա-

րականներին, տղամարդիկ և կանայք առանց որևէ զանազանութեան: Կարծում եմ որ եթէ պատահէր մեղ մի տգէտ մարդ, ինչպէս ես եմ, և մեր ազգը լինէր այս լուսաւոր գերմանացիների տեղ, այն ժամանակ ոչ միայն չէր թողի նրան խառնվել իր հետ, այլ և ծաղրի առարկայ կը դարձնէր նրան»:

Ասիացի տղամարդի սիրուը կրթելու, նըրա կոչաւ բնաւորութիւնը մեղմացնելու համար Պարրօտը մօտեցնում է Արովեանցին իր քենուն, օրիորդ Յուլիային: Արովեանցը հասկանում է այդ խորհուրդը: «Իրաւ, ասում է նա, — սա միակ միջոցն է, որ եթէ մէկը կամենում է մեղմացնել իր բարքը, որքան նա ծանօթութեամբ և բարեկամութեամբ մօտենայ կանացի սեռին, այնքան կը կրթվի, կազնուանայ նրա բարքը»: Այս խոստովանութիւնը գեղեցիկ է մի մարդու բերանում, որ ծնված ու սնված լինելով մի այնպիսի շըրջանում, ուր կինը անխօս էակ է, մի իր, ճիւլված, կամքից զուրկ մի արարած, յանկարծ ընկնում է մի այնպիսի աշխարհ, ուր կինը աղատ խօսում է, մտածում, ոգեորում, ուր նրան էլ հասնում է բաժին ընդհանուր կրթութիւնից: Նա, որ իր հայրենի երևանում, կանանց մէջ, պիտի համարվէր ամենապէտ և ամենակարող լոկ այն պատճառով,

որ տղամարդ էր, Դօրպատում զասեր է առնում երկու գերմանացի՝ օրփորդներից։ Գեղեցիկ են սրանք, բայց այդ գեղեցկութիւնը ասիացի երիտասարդի մէջ ախտաբորբոք հակումներ չէ զարթեցնում, այլ մի խորին երախտազիտութիւն, մի սուրբ հիացմունք։ Նա շնորհակալութիւն է մատուցանում իր ուսուցչուհիներին, բայց սրանք ասում են թէ աշակերտը իր երախտազիտութիւնը կարող է ցոյց տալ ոչ թէ այդպիսի շնորհակալութիւններով, այլ նրանով, որ իր ստացածը կը տայ իր խելզ ազգին, որ անցեալում այնքան մեծ գեր կատարելուց յետոյ այժմ թաղված է տղիտութեան խաւարի մէջ։

Հասկանալի է թէ ինչ ոգեսրութիւն պիտի արծարծէին այսպիսի կանայք Արովիանցի սրտում։ Եւ նա բացականչում է. «Որքան կը ցանկար իմ սիրու ունենալ մի իրաւի սիրելի ամուսին գերմանուհի, որ իր ամուսնական կենցաղավարութեամբ օրինակ գտնայ մեր աշխարհի համար»։ Բայց այստեղ այդ տեսչանքին արգելք է համովանում հայրենասիրական զգացմունքը և նա ասում է թէ չի դաւաճանի հայ աղջկան։ Այսուամենայնիւ, այդ բանաստեղծական զեղումը յաղթահարացում է, երբ նա վերադառնում է հայրենիք։ Վյտեղ նա ամուսնանում է գերմանուհու Այդտեղ նա ամուսնանում է գերմանուհու

հետ. ուրիշ կերպ չէր կարող լինել, Արովիանցը հայուհիների մէջ չէր կարող ընտրել իր սրտի ընկերուհի։ Այդպէս էր և նազարեանցը։

Եւ այսպէս, ամեն տեղ վերածնութեան գործ—թէ ընտանիքում, թէ գլորցում։ Հասարակական գործունէութեան համար առողջու լուսաւոր սկզբունքներ է ընդունում Արովիանցը։ Յիշենք ամենից առաջ այն, որ Արովիանցի պրօֆէսօրներից մէկը, Վալդէր, ներշնչում է նրան միտք գործ ածել աշխարհաբար լիզուն և բացատրում է թէ որպիսի մեծ նշանակութիւն կունենար ժողովրդի համար աշխարհաբար Աստուածաշունչը \*։ Պարրօտը միշտ իրաւում էր նրան նուիրվել ժողովրդական կրթութեան գործին և շարունակ կրկնում էր «գպրոց, գպրոց հայ մա-

\* Նշանաւոր է, որ գերմանացիները մեզանում ոչ միայն քաղողեցին կենդանի աշխարհաբարի անհրաժեշտութիւնը, այլ և իրանք եղան առաջննը, որ իրականացրին այդ միտքը։ 1820-ական թւականների կէսից Կովկասում հաստատված բազէեան միսիօնալները, Գիտքին և Զարեմբա, հրատարակեցին մեր առաջին աշխարհաբար գրքերը, առաջին անգամ թարգմանել տուին Աւետարանը և ապագրել տուին Մօսկվայում, 1834-ին։ Թիւրքիայում էլ բողոքական միսիօնալներն էին, որ աշխարհաբարին մեծ զարկ տուին Զմիւռնիայում տպագրած իրանց բազմաթիւ կրօնական գրքերով։

նուիների համար»: Միհնոյն ժամանակ, առելով կրօնական երկառակութիւնները, ուրոնք քանդում են մի պղփ տունը, լուսամիտ պրօֆէսօրը, երեխ գեռ էջմիածնից իմացած լինելով որ Սրովեանցի իդէան է Միթթարեան միաբանութիւնը, խորհուրդ էր տալիս նրան չը հետեւ Միթթարի օրինակին, այսինքն կրթական նպատակով չը դիմել կըրօնափոխութեան: Առասարակ, Պարրօտի գորդակից անել նրան եւրոպական լուսաւորութեան, յարուցանելով նրա մէջ սէր դէպի մտաւոր վերածնութիւն, դէպի առաջազիւմութիւն:

Այդ սիստեմը ամենից գովելին էր: Ոչինչ չը կոտրելով, չոչնչացնելով աշակերտի սրտի հիմնական կազմի մէջ, նա դնում էր այդ սրտի մէջ սկզբունքներ, զարգացնում էր նըստի սիրով, թոյլ տալով որ ապագայում բանց սիրով, թոյլ տալով որ ապագայում կատարձ կատարէ այդ սկզբունքներով զեկագործ կատարէ այդ սկզբունքներով կը վարվող աշակերտը, որ իհարկէ, կարող կը կիմնէր հասկանալ իր ապղի պակասութիւններ և կը սովորէր մտածել նրանց մասին: Ները և կը սովորէր մտածել նրանց մասին: Թէ որպիսի հայրական ինսամքով էր սրտում

կը, երեսում է նրանից, որ մի օր, փողոցով անցնելիս, նա տեսնում է օտարական մի արեւելցու և կարծելով թէ դա հայ է, հարց ու փորձ է անում, որպէս զի եթէ ճշովի նրա հայ լինելը, տանէ նրան Սրովեանցի մօտ: Լաւ գիտէր պրօֆէսօրը թէ իր աշակերտին որպիսի հայրենասիրական կարօտ է այրում այս հեռաւոր հիւսիսում և կամեցաւ իր յարդանկը մատուցանել այդ սուրբ զգացմունքին, առիթ տալով որ հայրենիք երազողը տեսնէ գոնէ իր հայրենակցին: Օտարականը ճիշտ որ հայ էր, մի աղքատ պարսկաստանցի: Պարրօտը տարաւ նրան իր մօտ, ուր և Սրովեանցը սրտի կարօտն առաւ, տեսնելով մի հայի, խօսելով նրա հետ:

Մենք պէտք է երեակայենք թէ իւրաքանչիւր այդպիսի դէպիք, իւրաքանչիւր խըրատ և լայն մարդասիրական վարմունք որքան պիտի բարձրացնէին հայ կրակոտ երիտասարդի հոգին, որքան պիտի ազդէին նրաքնքոյչ, տպաւորվող սրտի վրա: Մենք պիտի երեակայենք ժամագրքի, Պղնձի քաղաքի պատմութեան, Եօթն իմաստասիրաց զրքի վրա ուղեղ մաշած երիտասարդին Գէօթէ և Շիլլեր կարդալիս, ըմբռնելիս: Բայց բացի Գէօթէից ու Շիլլերից քանի քանի ուրիշ գեղցցիկ զրքեր կային: Նրան, այդ ուսումնա-

ծարաւ մարդուն, տուել էին մտաւոր զանձերի մեծ պահեստի բանալին—գերմաներէն լեզուն։ Նա արդէն հոգով կապված էր փելառիաների և բանաստեղծների հայրենիքի հետ։ Այնուհետեւ նա կարող էր ասլրել այն աշխարհի մէջ, ուր նրան մտցրել էր բարերար գերմանացու ձեռքը։ Նրան մնում էր աշխատել իր սեփական ոյժերով։

1836 թւականին գօրպատցի բարեկամները ճանապարհ էին դնում Արովիանցին գէպի հայրենիք։ Ի՞նչ էր նա տանում իր հետ։

Նա մի հանձար չէր, մի տիտանական ոյժ չէր, որ կարողանար ստեղծագործել մէկը այն գրական երկերից, որոնք չեն մեռնում մաքի համաշխարհային թանգարանում։ Նա իր աղջի ինքնուրոյն յատկութիւնները չը պիտի բարձրացնէր, մարդկութեան սեփականութիւն գարծնէր իր զրչով։ Ո՞չ Մեր ազգը համաշխարհային հեղինակներ ու գործիչներ երբէք չէ տուել։ Մենք միշտ մի ջանասէր ընդորինակողներ ենք եղել, մենք կարողացնել մօտենալ լուսաւոր աղջերին, վերցել ենք մօտենալ լուսաւոր աղջերին, վերցել մեր ոյժերին և ընդունակութիւններին ցնել մեր օսկերին ու օսար երկրում համապատասխանող բեռ օսար երկրում պատրաստված ծաղկահիւթերից և պատրաստել մեղք ու մոմ մեր սեփական փոքրիկ խաւար տան համար։ Բարձրերում թռչող-

ներ չենք եղել, բայց և մեր երկրի ցեխերում թաւալվող մտաւոր անձարներ չենք եղել։ Ամեն անգամ, երբ ներել են հանգամանքները, թոյլ է տուել մեր դարերով ողբալի ճակատագիրը, մենք ջանք ու աշխախատանք չենք խնայել՝ մեզ աշխարհի մտաւոր լոյսի մէջ գցելու համար։

Ի՞նչ էր հայրենիք վերադարձող Արովիանցը։ Մէկը այդ ջանասէր աշխատողներից, մէկը հայրենի տունը ծաղկահիւթ բերող մեղուներից։ Նրա զգայուն սրտի մէջ թագնված էր մի խորհուրդ, որը արտայայեկու համար նա պիտի գնար, մտնէր Դօրպատի գրական և գիտնական շրջանները, մկրտվէր այնտեղ։ Եւ մենք տեսանք թէ որքան փառաւոր էր այդ մկրտութիւնը։ Աստուածային կայծ կար թաղված նրա մէջ և այդ կայծը, ստեղծագործական վառվուն ատաղանդը զուցէ միայն կրօնական խոհերի և կեղծ-կեսիկական բացականչութիւններով մնվող հայրենասիրութեան տակ ծածկված մնար, եթէ չը լինէր նրա ճանապարհի վրա Դօրպատը, այն մեծ ուսուցիչը, որ բաց արեց նրա աչքերը, շոյց տուեց թէ ինչ է Եւրօպան և ինչ կռուզ է լինել Ասիան, հանեց աստուածային կայծը, այրեցիկ նիւթեր տուեց նրան ու այդպիսով հրդեհեց այդ բանաստեղծական սիր-

որ: Աբովիանցը Դօրպատից մասնում էր «Վէրք Հայաստանի»-ն: Բայց միթէ ողբերն ու հառաջանքները, խրատներն ու աղաջանքներն էին միայն գնում նրա ձանապարհորդական պայտուսակի մէջ:

Ո՞չ: Քրքենք այդ պայտուսակը և կը տեսնք այնտեղ մի քանի բէցէստներ: Ահա զրանցից մէկի պատմութիւնը: Մի անգամ Աբովիանցը մասնում է մի հացագործ գերմանացութ որ տեսնէ թէ ինչպէս են հաց պատրաստում: Արհեստաւորը միշտ վախենում է մրցութիւնից, ուստի կարծելով թէ այս անծանօթ մարդն էլ իր արհեստի գաղանիքը մրցութեան նպատակով է ուզում իմանալ, արգելում է նրան նայել, տեսնել: Են ժամանակ Աբովիանցը սկսում լաց լինելով ասել գերմանացուն: «Ես մի անբախտ հայրենիքի որդի եմ, ես այդ բանը սովորելով չեմ կամենում այստեղ կարել քո օդուտը, այլ ուզում եմ տանել նրան իմ այն անոր, այլ ուզում եմ տանել նրան իմ այն անոր, հայրենիքը, որ շատ այդպիսի բաների բախտ հայրենիքը, որ շատ այդպիսի բաների կարօտութիւն ունի» \*): Նա տանում էր իր հետ ոչ միայն հաց թխելու, այլ կերակուրներ և նվիրու, պաղպաղակ պատրաստելու խըրատներ: Եւ կարող ենք ասել թէ սրանք ա-

\*.) «Կոռնկ» 1861, ել. 537.

ւելորդ, միշտակութեան անարժան բաներ են: Ո՞չ: Դօրպատից վերադառնողը միայն «Վէրք Հայաստանի»-ի հեղինակը չէր, հայերեխաների ուսուցիչը չէր, այլ առհասարակ մի կուլտուրական մարդ, որ դիտէր թէ պարտաւոր է նոյն իսկ հաց թխելու եղանակը սովորեցնել իր յետամնաց ազգակիցներին:

Ահա ինչ էր եւրոպական աւագանի մէջ մկրտված Աբովիանցը:

Նա թողեց այդ աւագանում իր ընկեր Նազարեանցին, որ նոյնպէս պիտի գնար իր շաւիղով, նոյնպէս մի ժիր աշխատաւոր պիտի գառնար և իր ստացածը պիտի տար իր ազգին, աւելի ճիշտ ասած՝ զոռով պիտի փաթաթէր նրա վզին:

Մենք չենք կարող ասել թէ Նազարեանցը ճիշտ նոյն շրջանն ունէր, ինչ Աբովիանցը, նոյն մարդկանց հետ էր շփվում, նոյն կերպով էր զաստիարակվում: Բայց կարող ենք ասել որ պայմանների և միջավայրի մեծ սարբերութիւն չէր կարող լինել: «Դօրպատեան զիառուն և բարեմիտ մարդերը» գըլխաւորապէս համալսարանի շուրջն էին խըրմրագած: Նոյն պրօֆէսօրներն էին, որոնց ձեռքով կատարվել էր Աբովիանցի մկրտութիւնը: Այդ միենոյն ձեռքը դրվել է և Նազարեանցի զլսի վրա: Այդ մկրտութիւնը աւելի

խոր ու մեծ աւագանի մէջ կատարվեց, որովհետեւ նաև նամալսարանի ուսանող էր, ընտրել էր իր համար մասնագիտութիւն:

Փոքրիկ Դօրպատը կրթական հաստատութիւնների մի ամբողջ գաղութ էր: Այդտեղ կային գիմնազիա, ուր զիսաւորապէս լատինական և լուսաց լեզուներն էին աւանդվում, ուսուցչական սեմինարիա, որի նպատակն էր ուսուցիչներ պատրաստել ժողովրդական դրագոցների համար և իգական դպրոց, ուր պատրաստվում էին տնային վարժուհիներ: Բայց Դօրպատի փառքն ու պարծանքը համալսարանն էր:

Ծուսաց բոլոր համալսարանները առնասարակ գերմանական տիպով են ստեղծված: Սակայն, նրանք շատ բնական կերպով, հետզհետէ ստացան ազգային ուսուական դոյն, քանի որ գտնվում էին ոռւս ժողովրդի մէջ և զեկավարվում էին ոռւս գիտնականներով: Միայն Դօրպատը, չնորհիւ այն հանգամանքի, որ գերմաններէն խօսող և գերմանական ծագում ունեցող ազգաբնակութիւնից էր բաղկացած, մաքուր ու անխառն պահպաննեց իր համալսարանի մէջ այն ողին ու ուղղութիւնը, որ յոտուկ էր գերմանական համալսա-

րաններին \*): Դաստանդութեան լեզուն գերմանականն էր, պրօֆէսօրները Գերմանիայից էին գալիս: Համալսարանը Ծուսաստանից համարեա բոլորովին անջատված մի բարձրագոյն դպրոցական հիմնարկութիւն էր, շատ նշանաւոր իր հեղինակութեամբ և առած արդիւնքներով:

Գերմանական համալսարանի մի առանձնայատիութիւնն այն է, որ նա հաւաքում է իր մէջ երկրի գիտնականներին: Գերմանական գիտնականը մի և նոյն ժամանակ և համալսարանի պրօֆէսօր է, երիտասարդութեան ուսուցիչ: Հասարակութիւնը ծանօթանում է գիտնականի հետ ոչ միայն նրա գրած գրքերի միջոցով, այլ անմիջապէս, անձամբ լելով այդ գիտնականի գաւախօսութիւնները: Նատ գիտնականներ նոյն իսկ չեն էլ հրատարակել իրանց աշխատութիւնները, բայց դրանք չեն կորել, որովհետեւ եղել են համալսարանական գաւախօսութեան առարկայ և գրի են առնվել ունկնդիր ուսանողների կողմից: Եւ այդ է պատճառը որ գիտութիւնը Գերմանիայում աւելի շատ է սիրված ժողովրդից, քան ուրիշ երկիրներում, որովհետեւ այստեղ է որ մեծ գիտնականները եղել են համա-

\*) „Собрание статей барона Николаи“, Թիֆլիս, 1879, եր. 250—259:

լսարանական երիտասարդութեան անմիջական ուսուցիչները: Գերմանիան մտածողների և գիտութեան հայրենիք էր. տասնիններորդ դարի առաջին կէսում համալսարանները առաջնակարգ կարենոր դիրք էին բրոնում հասարակութեան մէջ, որովհետեւ գերմանական կեանքը չունէր ուրիշ կենտրօններ բացի գիտութիւնից և գրականութիւնից \*):

Եինելով զուտ գերմանական մի համալսարան, Գօրպատի համալսարանն էլ չառ մեծ գեր կատարեց Ռուսաստանի համար: Այդաղ էլ եւրոպական հռչակ վայելով գիտականները պրօֆէսօրներ էին (Պարրօս, Արիխ, Ստրուվի և ուրիշները). այդաեղ պատրաստվեցան չառ անուանի պրօֆէսօրներ ուսուց համալսարանների համար: Համալսարանի գըրադարանը և ֆիզիկական կաբինէաը չառ հարուստ էին. իսկ երեսնական թւականներին բացված աստղաբաշխական գիտանոցը երկար ժամանակ առաջին տեղն էր գրաւում Ռուսաստանի գիտանոցների մէջ:

Ուսանողները Գօրպատում հին աւանդական կարգ ու կանօններին էին ենթարկված:

\* ) Փ. Պայլը սեն— „Հեմեցկի համար անուան պատրաստում հին աւանդական կանօններին էին ենթարկված: Մ. 1858, եր. 9:

Նըանք կազմում էին կօրպօրացիաներ, որոնք ներկայացնում էին ուսանողական մի տևակ ինքնավարութիւն: Այդ ինքնավարութիւնն ունէր յատուկ ընտրված դատարան, որ քըննում էր ուսանողների վարքն ու բարքերը, դատում էր, դատապարտում էր, և ամենքը անպայման հնագանգվում էին նրա վճիռներին: Կօրպօրացիաների կանօնագրութեան առաջին պայմանն էր որ ուսանողը չը պիտի զբաղվի քաղաքական հարցերով, պահանջվում էր անգիծ ազնւութիւն, յարգանք գէպի կանաքը, քաղաքավարութիւն ընկերների և կողմնակի մարդկանց հետ ունեցած յարաբերութիւնների մէջ: Գոյութիւն ունէր և մննամարտը: Համալսարանը պահանջում էր ուսանողներից խիստ կարգապահութիւն:

Բաւական չէ դնել ընթերցողի առաջ Գօրպատեան իմացական աւագանի այս արտաքին նկարագրութիւնը: Պէտք է առանձնապէս ուշագրութիւն գարձնել և այն ժամանակի վրա, երբ այդ աւագանը ընդունել էր իր մէջ հայ երիտասարդներին: Դա մի չառ նշանաւոր ժամանակ էր, որ մարդկային մաքի պատմութեան մէջ միշտ կը պահպանէ իր թարմ, գեղեցիկ կերպարանքը: Մի ժամանակ էր դա, երբ Գերմանիայում սկսվեցին և զարմանալի աջողութեամբ առաջ գնացին նոր մտաւոր

հոսանքներ, որոնք մի ամբողջ յեղափոխութիւն մտցրին զրականութեան և զիտութեան մէջ։ Այդ նոր շարժումը մեծ ազգեցութիւն ունեցաւ և Ծուսաստանի վրա։ Բաւական է ասել որ ոռւս երիտասարդութիւնը, վերջացնելով համալսարանական ուսումը, պարտք էր համարում գնալ Գերմանիա՝ այնտեղի համալսարաններում սովորելու, կրթութեան պակասը լրացնելու համար։ Երեսնական թըւականներին, երբ գերմանական միտքը նոր ճանապարհներ էր հարթում, երբ հին սերունդը կռուի դաշտը նոր սերունդին էր թողնում, Գերմանիայի համալսարանական կենտրօններում խմբված էր ոռւս ուսանողութիւն, որ, իհարկէ, ականատես էր գաղափարական պայքարին, ընդունում և իւրացնում էր նոր սկզբունքներ, աշխարհայեցողութիւններ։ Այդ երիտասարդութեան վիճակված էր մի շատ նշանաւոր գեր կատարել իր հայրենիքի մտաւոր վերածնութեան գործում։ Նրա մէջ էր Տուրքենեվը, ապագայ հոչակաւոր վիստագրողը. այնտեղ էր Գրանօվսկին, ոչ պակաս նշանաւոր պրօֆէսօրը, որ առաջադէմ մըտքերով ոգեորդված մի ամբողջ համալսարանական սերունդ ստեղծեց։

Մենք էլ ունեցանք մեր փոքրիկ, համեստ բաժինը այդ վերանորոգչական շարժման մէջ։

Եւ դա մեր նազարեանցն էր։ Ճիշտ է, նա գերմանական նողի վրա չէր համալսարանական դասախոսութիւններ լսում, բայց Դօրպատը Խուսաստանի հողի վրա, ինչպէս տեսանք, գերմանական ուսման մի բեկորն էր պահպանում։ Անկարելի է հնթաղրել անգամ, որ ժամանակի ուժիղ գաղափարական հոսանքները ոչինչ ազգեցութիւն արած չը լինեն Դօրպատի հայ ուսանողի վրա։ Ընդհակառակըն, նազարեանցի հրապարակախոսական գործունէութեան մէջ մենք շատ գծեր ենք դանում, որոնք ուղղակի վերցրված են Գերմանիայում երեսնական և քառասնական թըւականներին տեղի ունեցած շարժումից։ Ուստի շատ հարկաւոր է որ մենք իմանանք թէ ինչ շարժում էր դա, ինչ մտքեր և ձրդառներ ուներ, ինչ պահանջների տէր էր։ Նազարեանցը մեզանում մի նոր գարազլուի է ստեղծել։ Բայց նա իրանից չէ ստեղծել այդ դարապլուխը, նա հանդիսացել է միջնորդ, նա ուներ մի մեծ դաստիարակ, որ նրան առաջնորդում էր։

Ո՞վ էր և ինչ էր այդ դաստիարակը։

1830 թւականի յուլիսին անակնկալ կերպով պայթեց Պարիզում յեղափոխութիւն, որ խորտակեց Կարլ Հ-ի դահը։ Դա մի փոթորիկ էր, որ շարժումներ առաջացրեց նաև Թըւ-

բանսիայից դուրս. յեղափոխութիւնն անցաւ Բելգիա, Գերմանիայի մի քանի տեղերում էլ ժողովրդական ապատամբութիւններ ծագեցին: Եւրօպայի քաղաքական գրութիւնն այնպէս էր, որ յուշիւնան յեղափոխութիւնը բռնը ազատամիտ շրջաններում ոգեսրութիւն տարածեց: Գերմանական հոչակաւոր բանաստեղծ Հէյնէ ծովային լողաբաններում էր գըտնվում, երբ ստացաւ յեղափոխութեան լուրը. և ահա ինչ էր գրում նա. «Եւրօպայից ստացվեց լրագիրների մի հաստ ծրար՝ այրող, տօթային-ջերմ նորութիւններով: Դրանք արևակի ճառագայթներ էին, փաթաթված թղթի մէջ և այդ ճառագայթները իմ հոգու մէջ գոյացրին մի ամենալայրենի հրդեհ: Ինձ թւում էր թէ ևս կարող եմ վառել ամբողջ սվկանոսը մինչև հիւսիսային թեեռ ոգեսրութեան և խելացնոր ուրախութեան այն կրակով, որ բոցավառված էր իմ մէջ: Ես խելագարի նման վաղվառմ էի ամն մէջ»:

Հասկանալի է այդ անզոււսպ ուրախութեան պատճառը: Ֆրանսիական առաջին կամ մեծ յեղափոխութիւնը (1789—1793) յայտարարել էր ամբողջ աշխարհին աղատութեան և հաւասարութեան սկզբունքները: Նա դարձաւ մի ահաւոր սպառնալիք միապետական կարգերի դէմ, ուստի Եւրօպան

միացրեց իր ոյժերը այդ սպառնալիքի դէմ: Առաջացաւ մի խաւար թէակցիա: Վիեննայի վիհաժողովը, երեք միապետների մէջ կազմված «արբազան դաշնագրութիւնը», աւատրիական մինիստր Մ'ետերնիխի ստեղծած երկաթէ սիստեմը ձնչում էին ազգերը, թոյլ չը տալով որ նրանց մէջ ազատամիրական դաղափարները արմատ բռնեն: Ճիշտ է, Սպանիայում, Իտալիայում և Յունաստանում տեղի ունեցան յեղափոխութիւններ, բայց գըրանք մեծ հետևանքներ չառաջացրին Եւրօպայի համար և հանդիպեցին միախմբված «արբազան դաշնագրութեան» արգելքներին. միայն Յունաստանն էր որ առանձին բախտ ունեցաւ:

Եւ ահա այդ միջոցներում ֆրանսիան յուշիւնան յեղափոխութեան միջոցով յիշեցրեց աշխարհին 1789-ի աւանդութիւնները: Բայց յուլիսեան յեղափոխութիւնն էլ, որքան և յուղիչ էր Եւրօպայի համար, առաջացրեց քաղաքական ձնչումներ, աւելի սաստկացրեց թէակցիան: Այնու ամենայնիւ, նա, իբրև աղատական մի շարժում, աղդեց ազգերի մտաւոր գործունէութեան վրա և հազորդեց նրան նոր գոյն, նոր ողի: Գերմանիայի մէջ յուլիսեան յեղափոխութեան ազգեցութեան տակ սկսվեց արմատական ուղղութիւն ու-

նեցող մի նոր գրական և գիտական շարժում։ Յեղափոխութիւնը մի հարուած էր, որ ոչնչացրեց այն ամենը, ինչին երկրպագում էր Գերմանիան. նա տապալեց նախկին կուռքերը և բարձր պատուանդանի վրա հաստատեց նոր պաշտամունքներ։

Մինչև երեսնական թւականները գերմանական գրականութեան մէջ տիրում էր մի ուղղութիւն, որ յայտնի է Ռոմանութիզմ անունով։ Ռոմանտիզմը իրական կեանքից հեռու էր կանգնած, երկրպագում էր միջին դարերին, նրանց գաղափարներին և կուլտուրական սկզբունքներին։ Ներկան, ժամանակակից կեանքը իր հարցերով, իր խլըրտումներով այդ գրական ուղղութեան տեսակէտից չափազանց հասարակ, առօրեայրան. էր, անարժան այնպիսի մարդկանց ուշադրութեան, որոնք ապրում էին մտաւոր բարձր շահերի համար։ Գերմանիայում բօմանտիզմը դարձաւ մի սաստիկ յետադիմական ուղղութիւն, որ միանգամայն հաշտ ու համեմաշխ էր քաղաքական դրութեան հետ։ Իդէալացնվում էր միջնադարեան քրիստոնէութիւնը, որ միացրել էր պետութիւնը, եկեղեցին, ժողովուրդը, գիտութիւնը, արտեստը և կեանքը։ Ամեն ինչ, որ վերաբերվում էր այդ միամիտ միջին դարերին,

փառաբանվում էր. նոյն իսկ կաթոլիկութիւնը, որի երկաթէ ճանկներից գերմանացիների մի նշանաւոր մասը ազատվել էր կիւթերի ջանքերով, անուանվում էր «կորցրած հայրենիք»։ Անցածը կուրութեամբ պաշտելը գերմանական գրականութեան միտքն ու հոգին դարձաւ և երկար ժամանակ հեղեղում էր գրական ասպարէզը բազմաթիւ անկենտան, իրականութեան հետ ոչինչ կապ չունեցող գործերով \*):

Գերմանիայի մէջ ամենից շատ յարգված և ծաղկած գիտութիւնը—փիլիսոփայութիւնը վերացական, իդէալիստական էր և եթէ մի անգամ ամպերի բարձրութիւնից յած էր իջնում՝ աշխարհային գործերով զբաղվելու համար, այդ միայն այն մաքով էր որ արդարացնէ շրջապատող իրականութիւնը։ Եւ որովհետեւ շրջապատողը յետադիմական էր, խսւար, ուսափի փիլիսոփայութիւնը յետադիմութեան գործիք էր դարձել իրաւագիտութեան մէջ տիրում էր «պատմական դպրոց» անունով յայտնի ուղղութիւնը, որ խիստ պահպանողականութիւն էր ուսուցանում։ Եւ ահա այդ երեք գործօնների—բօմանտիզմի,

\*.) Шерръ—„Исторія Всеоб. Літературы“, Спб., 1880, չ. II, էր. 262—263.

փիլիսոփայութեան և «պատմական դպրոցի» ազդեցութեան տակ գերմանական հասարակութիւնը քնածի պէս էր և միայն յուլիսեան յեղափոխութիւնը զարթեցրեց նրան:

Ենդափոխութիւնը բոլորովին անսպասելի էր գերմանացիների համար. նրանք կարծում էին որ եւրօպական ամբողջ կեանքը մտել է մի անշարժութեան մէջ, որի առաքեալներն էին գրականութիւնը, գիտութիւնը: Բայց ահա յուլիսեան դէպքերը վերջ տուին այդ անշարժութեան: Թէև քաղաքական ձնչումները աւելի սաստկացան, բայց նրանք անկարող եղան կանգնեցնել նոր հոսանքները, որոնք միանգամայն հակառակ էին մինչև այդ տիրող մտքերին: Գրականութեան մէջ զլուխ բարձրացրեց այն ուղղութիւնը, որ յայտնի է «Երիտասարդ Գերմանիա» անունով. հոչակառոր պրօֆէսօր Հեգելի փիլիսոփայական դպրոցում հերձուած տեղի ունեցաւ, առաջ եկաւ «Երիտասարդ Հեգելեանների» կուսակցութիւնը \*): «Երիտասարդ» անունը, որ իւրացրել էին գրական, և գիտական նոր ուղղութիւնները, ինքն ըստ ինքեան բնորոշում է թէ ինչ էին գրանք:

\*) Кар্তевъ—„Исторія Западной Европы въ Новое время“, չ. V, գլ. XV:

Գրական «Երիտասարդ Գերմանիա» ուղղութեան նախահայրերն էին երկու տաղանդաւոր հրէաներ—Լիւդվիգ Բեօրնէ և Հէնրիկ Հէյնէ: Բեօրնէ դեռ 1819 թւականից էր սկսել իր հրապարակախօսական գործունէութիւնը: Դա մի կրակոտ տաղանդ էր, որ անդադար քարոզում էր վերածնութիւն, ազատութիւն: Նրա հանճարեղ գրչից թոյն էր կաթում, նա ծաղրում էր գերմանացիների պակասութիւնները, անողորմ կերպով մերկացնում և մտրակում էր գերմանական կառավարիչների բթամտութիւնը, անշարժութիւնը: Այդ սարսափելի կծու, ոչնչացնող ծաղրը երեսում էր նրա իւրաքանչիւր գըրուածքի մէջ, գրաքննական խատութիւնները ահազին խոչընդոտներ էին յարուցանում նրա դէմ, բայց նա կարողանում էր անցկացնել իր մտքերը գրական քննադատութիւնների մէջ:

Բեօրնէ միակողմանիութեան հասնող քաղաքական և հասարակական գործիչ էր, անտես էր անում գեղարուեստի պահանջները կամ երկրորդական նշանակութիւն էր տաւմս նրանց: Եւ այդ կողմից նրա հակասականներն էր Հէյնէ: Սա որքան մեծ երգիծարան էր, այնքան էլ մեծ բանաստեղծ էր և իր քաղաքական գործունէութեան մէջ յաձախ

Անթարկիվում էր գեղագէտի ոգեսրութեան, մի բան, որ հաստատուն կուսակցական ուղղութիւն չէր թոյլ տալիս, հարկադրում էր հակասութիւնների մէջ ընկնել։ Շիտակ, անընկնելի Բեօրնէի և բանաստեղծ Հէյնէի մէջ այս պատճառով սասնութիւն առաջացաւ, որ վերջերում փոխվեց նոյն իսկ թշնամութեան։ Հէյնէ, որ տաղանդով անհամեմատ բարձր էր Բեօրնէից, նոյնպէս գործում էր թոյնով և մարակով. նրա նման կծու, անողորմ երգիծաբան աշխարհը չէ տեսել վերջին դարում։

Հէնց որ տեղի ունեցաւ յուլիսեան յեղափոխութիւնը, Բեօրնէ շտապեց զնալ Պարիզ։ Քիչ յետոյ նրա օրինակին հետեւեց և Հէյնէ։ Շուտով Գերմանիայում հաւարակվեցան Բեօրնէի հոչակաւոր «Պարիզեան նամակները»։ Տպաւորութիւնը ահազին էր։ Գերմանիան յափշտակութեամբ կարգում էր այդ հիանալի նամակները, որոնց մէջ Բեօրնէն դրել էր իր հուժկու տաղանդի ամբողջ ոյժը, ամբողջ կրակը։ Գերմանական իրականութիւնը անողորմ ծագրի և խայտառակութեան ևնթարկելով, Բեօրնէ բարձրացնում էր, պաշտում քրանսիական գաղափարները։ «Երիտասարդ Գերմանիան» քրանսիական գործիչների գալոցից էր քաղում իր ոգեսրութիւնը, եռանդը։ Իբրև վերածնութեան մո-

լուսանդ քարոզիչ, Բեօրնէ պախարակում էր ծուլութիւնը, յետամնացութիւնը, տղիտութիւնը, աղգային մնապարծութիւնը։ Առաջադիմութիւնը նա հասկանում էր իբրև հանրամարդկային մի գործ և ընդհանուր եղբայրութեան, ընդհանուր ազատասիրութեան, կոչ էր անում։

Գերմանական կառավարութիւնները, սաստիկ վախենալով այն ահազին աջողութիւնից, որ ունեցան «Պարիզեան նամակները», արգելեց այդ գիրքը. իսկ պահպանողականները սկսեցին ազմուկ յարուցանել Բեօրնէի դէմ։ Այսու ամենամիւ, երբ Բեօրնէ 1832-ին զնաց Գերմանիա, նրան ընդունեցին ամենաշերմ ոգեսրութեամբ և համակրական մնձոց ցոյցերով։ Այդ ընդունելութիւնը հարկադրեց նրան շարունակել իր նամակները, առաջվայ պէս թափելով նրանց մէջ իր սրտի ազնիւյուղմունքները։

Բեօրնէի քաղաքական դաւանանքների հիմնաքարը, ինչպէս ասացինք, հանրամարդկային բարօրութիւնն էր։ Բայց նա իր հայրենիքի հարազատ, սիրող զաւակն էր և ուղում էր տեսնել այդ հայրենիքը առաջաւոր, աղատ հոսանքների զլուխն անցած, սրբված իր հին կեղակից, առդորված մարդկայնութեան, արդարութեան և ազատութեան բառ։ Եւ-

րօպայում սկսված ազգայնական շարժումները չունեին համամարդկային բարօրութեան նպաստող լայն ու մեծ հասկացողութիւններ. ընդհակառակն, թթու ազգասիրութիւնը, չօվինիզմը, ատեղծել էր ցեղական նախապաշտամունքներ. Ամեն մի ազգ կարծում էր թէ ինքն է երկնքի ընարեալը, ամենից լաւը, հետեարար ինքն է միայն, որ արժանի է աշխարհի բարիքները վայելելու: Բեօրնէ այդ տեսակ ազգային կուրութեան անխնայ հակառակորդն էր. չօվինիզմը, անկած մեծ յետադիմական մի գործ, ատելի էր նրան, քանի որ չէր թոյլ տալիս ազգերի միաբան առաջադիմութիւն, այլ ընդհակառակն, մէջ էր բերում փոխադարձ կոյր ատելութիւն, նախանձ, մրցութիւն:

Իդէալ դարձնելով քաղաքական ազատութիւնը ռամկավարական ձևերի մէջ, Բեօրնէ համակրութեամբ էր վերաբերվում քրիստոնէութեան, որի հիմքն էր եղբայրասիրութիւնը: Քրիստոնէութիւնը նա համարում էր գեմօկրատիայի և մարդասիրութեան կրօն, հասարակ ժողովրդի կրօն: Թէև դաւանական տեսակէտից նա հաւատացող մարդ չէր, բայց և այդպէս, չէր համակրում քրիստոնէութիւնը մերժողներին: Իր կեանքի վերջին տարիներում Բեօրնէ գրեց «Ձրանսակեր Մենցէլ»

անունով նշանաւոր պատասխանը, որի մէջ իրան յատուկ սրամտութեամբ, իր սրտի ամբողջ կրակով պաշտպանում էր «Երիտասարդ Գերմանիան» խաւարապաշտ ազգամոլութեան և պահպանողական ազմուկների դէմ: Մենցէլ այդ բանակի բնորոշ ներկայացուցիչներից մէկն էր: Ակզբում ազատամիտ գըրող, Մենցէլ անցաւ յետադէմների բանակը և մի խիստ, անազնիւ արշաւանք սկսեց մանաւանդ Բեօրնէի դէմ, ծաղրելով նրա հրէական ծագումը: Շատ հետաքրքրական են մեզ համար այդ բանակուի մի քանի կէտերը: Բեօրնէն և նրա հետեւողները ծաղրում էին այն ճահճային հանդարտութիւնը, որի մէջ թաղված էր գերմանական ժողովուրդը, այն քունը, որի մէջ անշարժացած էր հասարակութիւնը: Մենցէլ դրա դէմ պատասխանում էր: «Այժմնան հանգստութիւնը լիապէս համապատասխանում է գերմանական բնաւորութեան, գերմանացիները լիապէս բաւական են նրանով: Բեօրնէ այդ դրութիւնը քուն է անուանում: Թող այդպէս լինի, բայց դա մի առողջ քուն է և երանի նրան, ով քնում է հանգիստ»: Այսպիսի դատողութիւնների վրա յոյս դնել չէր կարելի և Մենցէլ աւելի կըտրուկ միջոցի էր դիմում—մատնութեան: Այսպէս նա ասում էր թէ «Երիտասարդ Գեր-

մանիսան» աշխատում է ոչնչացնել քրիստոնէութիւնը և միտպետութիւնը, վերացնել ամուսնութիւնը, ընտանիքը, անբարոյականացնել հասարակութիւնը և այդպիսով քայլքայլ ու ոչնչացնել ամեն ինչ:

Բեօրնէից էլ խիստ ու անողոք էր իր ծաղրի մէջ բանաստեղծ Հենէն: Կրակ ու փրփրած թոյն էր նրա զրիչը և նա ոչինչ չէր խնայում ջարդելու, ոչնչացնելու համար: Տօմանափղմի հոգեհան հրեշտակը գարձաւ նա: Նա էր, որ ցոյց տուեց հին պաշտօնական աշխարհի ամբողջ անանկութիւնը և զարթեցրեց ձգտում դէպի նորը, աղատութիւնը: Նոր ժամանակի մարդարէն էր նա, զինված շանթերով, թոյնով, սլաքներով: Պահպանողականութիւնը իր վայնասունով, իր մատնութիւններով հասաւ իր նպատակին: Վերմանական կառավարութիւնների գաշնակցութիւնը 1835-ին մի որոշում հրատարակեց, որով հրաւիրում էր բոլոր վերմանական կառավարութիւնները քրէական օրէնքներով, արդելքներով, ոստիկանուական միջոցներով հալածել «Երիտասարդ Գերմանիայի» գըրուածքները հրատարակողներին և առածողներին: Բայց այդ միջոցը միայն զրգուց նրանց, որոնց դէմ ուղղված էր: Բանտերը, աքսորը անգօր էին. արմատական ուղղու-

թիւնը գերակշռող հանդիսացաւ և տարած իր յաղթանակը մինչև յիսունական թւականները:

Գրական թարմ, վերանորոգող հոսանքին միացաւ և վերմանական փիլիսոփայութիւնը, որ կամաց կամաց սկսեց հրաժարվել վերացական մետաֆիզիկայից ու մօտենալ իրական կեանքին, սկսեց հետաքրքրվել ոչ միայն բարձրաթոփչ գատողութիւններով, այլ և օրգայ քաղաքական հարցերով: Հեգէլի մահից (1831) յետոյ, նրա բազմաթիւ աշակերտները կուսակցութիւնների բաժանվեցան. «Ճախակողմեան» կամ «Երիտասարդ» հեգէլիան կոչվածները միացան զրականութեան մէջ զործող արմատական կուսակցութեան հետ, իսկ «աջակողմեանները», ընդհակառակն, պահպանողական հայեացքների էին հետեւում: Ճախակողմեանների մէջ չուտով փիլիսոփայութիւնը հիմնվեց պատմական կրիտիկայի վրա. Դաւիթ Շարաուս զրեց «Յիսուսի Կեանքը», որի մէջ կրօնական հասկացողութիւնները ենթարկեց զիտնական կրիտիկայի: Հին և նոր աշխարհայեցողութիւնների ընդհարումը, կրիւը նոր գաղափարների և անցած գնացած համոզմունքների մէջ՝ մի կենդանի հետաքրքրութիւն ծնեցրեց: Գերմանական բանաստեղծութիւնը նոր ողու թարգման

հանդիսացաւ և ժողովրդականացրեց այն հայեացքները, որ փիլիսոփայութեան արմատական ուղղութիւն էր քարոզում:

Այս մտաւոր եռանդուն շարժումը, որ մենք նկարագրեցինք ընդհանուր գծերով, անշուշտ արձագանք էր գտնում և Դօրպատում, իբրև մի ուսումնական կենարօնում, որ ամեն ինչ ստանում էր Գերմանիայից: Ստեփանոս Նազարեանցը իր բաժինը վերցրեց այդ շարժումից: Սա անկասկած է: Առանց սրան չէ կարելի գաղափարական անվախ մարտնչող Նազարեանց երեակայել: Որքան նմանութիւններ պիտի գտնենք նրա գործունէութրան և «Երիտասարդ Գերմանիայի» ուղղութեան մէջ: Որքան նման է նրա կուրե հայկական պահպանողականութեան դէմ՝ այն կուին, որ տեղի ունէր Գերմանիայում նրա ուսանողութեան ժամանակ...

Նա ընտրեց այնպիսի ֆակուլտէտ, ուր ամենից շատ պիտի նկատվէր գրականութեան, մտաւոր շարժման ոյժը. դա պատմութեան և լեզուագիտութեան բաժանմունքըն էր:

Իր մեղմ բնաւորութեամբ և զարմանալի աշխատասիրութեամբ Նազարեանցը սիրելի էր դարձել իր ընկերակիցներին և նոյն իսկ համալսարանի բեկտօրին: Մեկտօրը և նրա

կինը եղել են նրա համար այն, ինչ էին Պարրօտը և նրա կինը Աբովեանցի համար: Շաբաթվայ որոշ երեկոները բեկտօրի տանը լինում էին հանդէմներ, բայց «այդ հանդէմների խորհուրդը ոչ կեր ու խում էր, և ոչ թղթախաղ, այլ մատենագրական և գրասիրական զրոյցներ» \*): Այդ գրական երեկոյթներում, ինչ ասել կուզէ, արծարծվում էին և քննվում այն գրական հարցերը, որոնք այդ ժամանակ յնւզում էին գերմանական միաքը: Մի այնպիսի հմուտ զեկավար, ինչպիսին էր առաջնակարգ համալսարանի գլխաւորը, ինչարկէ աւելի մեծ հետաքրքրութիւն և աւելի հանդարտ ու անկողմնապահ լուսաբանութիւն պիտի հաղորդէր հարցերին ու վէճերին: Գուցէ հէնց այս է պատճառը, որ Նազարեանցը կատարելապէս նոր ուղղութիւնը չիւրացրեց. բօմանտիկ ուղղութեան շատ հետքեր էլ մնացին նրա մէջ, բայց այդ հետքերը այնքան ուժեղ չէին, որ թոյլ չը տային նրան հաստատ քայլերով կնալ նոր ուղղութեան ձանապարհով: Դա անցողական չըջանի մի մարդ էր. բօմանտիկ և բէալական ուղղութիւնների մէջ էր կանգնած, բայց

\*) «Հրապար. Զայն», ել. 10

աւելի հակված դէպի վերջինը, աւելի վերջինի առաքեալ, քան առաջինի:

Նազարեանցը աղքատ ուսանող էր, ապրում էր մի աղքատ գերմանուհուց վարձած մի սենեակում և պիտի բաւականանար այն փոքրիկ թոշակով, որ տալիս էր նրա բարերարը: Գտնվում էին, սակայն, բարեսէր մարդիկ, որոնք օգնում էին չքաւոր հայ ուսանողին. այսպէս, մի անյայտ բարեկործ դօրպատցի յաճախ ուղարկում էր՝ նրան փող և սպիտակեղէն: Նշանաւոր է, որ նազարեանցի բարերարների թւում էր և ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Ռովարօվ: Համալսարանի բեկտօրը զրել էր նրան աշխատասէր, յուսատու հայ ուսանողի մասին և կոմսը երեք անդամում ուղարկեց նրան 350 րուբլի ինքնազիր նամակներով: Իսկ երբ մի անդամ գնաց Դօրպատ, յիշեց նազարեանցին և հարցրեց բեկտօրից: «Ո՞ւր է ձեր սեաչեայ նազարեանցը, որի մասին զրել էլք»: Եւ երբ բեկտօրը ներկայացնում է նազարեանցին, մինիստրը ասում է նրան. «Բարեկամս, դու պիտի լինես Արեւելքի լուսաւորիչը»:

Դօրպատում նազարեանցը վերջացրեց իր ուսումը 1840 թւականին: Բայց «Դօրպատեան բարեմիտ մարդերի» շրջանից չը կտրվեց

նա, երբ պիտի հեռանար իրան հիւրընկալած քաղաքից՝ կեսնաքի մէջ տեղ բռնելու համար: Այդտեղ նա նշանվեց մի գերմանացի օրիորդի հետ, ապա գնաց Պետերբուրգ, ուր մնաց երկար և վերադարձաւ նորից Դօրպատ՝ ամուսնանալու համար: Ամուսնացել է, ինչպէս երեսում է, 1842-ին:

Այժմ սկսվում է մի նոր հարց: Դօրպատը պատրաստել էր երկու հայ երիտասարդ, որոնք լցված էին գործելու եռանդով: Բայց արդեօք հայկական իրականութիւնը սպասում էր նրանց, կարող էր տեղ տալ նրանց իր ծոցում:

Պատասխանը բացասական է:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԱՑԵՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՐՁՈՒՆՔՈՒԹԻՒՆ  
(1843—1858)

### I

Ի՞նչ էր սպառում ուսում առած երիտասարդներին:—  
Սրովեանցի իղձերը. նեա նեմակը Յովհաննես կարո-  
դիկոսին:—Ի՞նյակս ընդունեցին նեան հայրենինում.  
խաւարամիս մանաշիկոսուրին:—Նազարեանցը Պե-  
տքրուրզում. նա տեղ յէ գտնում:—Մրեւեթեան լեզու-  
ների ուսումնասիրուրին:—Պաշօն Կազամի համա-  
շաւանում:—Ցանկուրին գործելու հայերի մէջ. դի-  
մունն ներսին կարողիկոսին:—Առաջին մատենագրա-  
կան փորձեր:

—○—

Եւրօպական կրթութեան տաճարը, Եւրօ-  
պացի մարդկանց ընտանեկան և հասարա-  
կական կարգերը, յափշտակելով առաջին հայ  
երիտասարդներին, երջանկութիւն ճաշակել  
առլով նրանց, ներշնչեցին նրանց մէջ սէր և

նուանդ և միենոյն ժամանակ մի վեհ և բա-  
րերար զգացմունք արմատացրին նրանց հա-  
զու մէջ—անքաւականութիւն հայրենի ի-  
րականութիւնից: Դօրպատը մի պայծառ ու-  
լուսատու բարձրութիւն էր, որի զաղաթից  
պարզ երկում էր խաւարում նստած հայ ազ-  
գի ամբողջ գերախտութիւնը: Անհրապոյր,  
ողբալի տեսարան: Բայց նա չէ վախեցնում  
մեր երիտասարդներին, յուսահատութիւն չէ  
պատճառում նրանց: Գիտեն այդ երիտա-  
սարդները որ ճարը գանված է: Հիւանդու-  
թիւնը անբուժելի չէ: Գիտեն նրանք և մի  
աւելի իրախառնութիւն: Գիտեն որ իրանց  
կը հաւասարն, որ իրանց սպառում են և պի-  
տի հարցնեն թէ ինչպէս պէտք է բժշկվել:  
եւ բժշկութեան միջոցը լաւ յայտնի է, բա-  
ւական է լինել Դօրպատում, աշակերտել,  
սովորել իրացնել:

Դա մի հպարտ, երիտասարդական ինք-  
նավասահութիւն է: 1832 թւականին Արով-  
եանցը մի երկար նամակ է գրում նոր կա-  
թողիկոսացած Յովհաննէս Կարբեցուն: Այդ  
նամակի մէջ Արովեանցը, իր անհուն հայ-  
րենասիրական զեղուժները թափելով, իր ու-  
րախութիւնն է յայտնում կաթողիկոսի գա-  
հակալութեան առիթով, ամենախոնարհ որ-  
դիական զգացմունքներ է յայտնում նրան և

մի և նոյն ժամանակ պարտք է համարում դարձնել նրա ուշադրութիւնը այն խաւարի վրա, որ պատել էր հայերին: Շատ մեծ էր խեղճ երիտասարդի վիշտը. նա տեսնում էր որ իր շուրջը աշխատում են բոլոր ազգերը, ուստի և զիտութեան ետեից են ընկել, և միայն հայ ազգն է, որ ընկղմված է խոր թմրութեան և անչարժութեան մէջ: Թողնելով եւրօպական ազգերը, Արովեանցը ցոյց է տալիս օրինակներ հայերին աւելի մօտիկ ազգերից: Թիւրքաց սուլթանը, ասում է նա, իր անձը զրել է իր վայրենացած ազգը լուսաւորելու համար. և աւելացնում է. «Ո՞րպիսի նահատակութիւն»: Եզիզտոսի փաշան, բացի իր երկրում բազմատեսակ բարեկարգութիւններ մտցնելուց, Պարիզ ուղարկեց 40 արաբացի երեխաներ՝ ուսում և զիտութիւն սովորելու. որպիսի ազնիւ ձեռնարկութիւն: Սերբիայի իշխանը, որ նոր ազտես իր ազգը թիւրքերի ծառայութիւնից, նոյնպէս երեխաներ ուղարկեց եւրօպա: «ՄԵՆՔ միայն չը պիտի հետեւնք այս բանին, — հարցնում է Արովեանցը: — ՄԵՆՔ պիտի միշտնայենք մեր ազգի վատաքախտութեան և մերժենք նրան մեր օգնութիւնը...: Լուսաւորութիւնից է կանգնում մի ազգ, լուսաւորութիւնից են դուրս գալիս ամեն բարեկարգու-

թիւններ, լուսաւորութեամբ է հաստատվում հապատակների կապը իրանց իշխանաւորների հետ, սէր դէպի հայրենիք, սէր դէպի բարեկամները, հնազանդութիւն կայսրին, երախտագիտութիւն դէպի երախտաւորները, հայրենիքի պաշտպանութիւն»: Եւ վշտալի երիտասարդը երեսի վրա ընկած՝ աղաչում-պաղատումէ կաթողիկոսին վերացնել տղիտութեան խաւարը:

Սրանք երիտասարդական ցնորդներ էին, որոնք ցնդվեցան օդի մէջ, հէսց որ Արովեանցը սաք զրեց հայրենի հողի վրա: 1836-ին նա, ազնիւ իզձերով և սուրբ հաւատով լի, ներկայանում էր Յովհաննէս կաթողիկոսին: Յայնի է որ այս հոգեւորականը ներկայացնում է փառամոլ, կարծամիտ կղերականի ամենաթանձր տիպերից մէկը: Արովեանցին նա հանդիպեց «հաւատից հեռացած» խօսքերով և ասաց. «Դու լաւ կարող ես խմորել անմեղների միաքը, իսկ կրթել նրանց—քո գործը չէ»: Արովեանցը ուզում էր կատարել իր ուխտը, որ տուել էր նախ քան Դորպատ գնալը, ուզում էր կուսակրօն քահանայ դառնալ և նուիրվել կրթական գործին: Սակայն մոլեռանդ կղերը բացէ ի բաց մերժեց նրան: Արովեանցը տարի ու կէս մնաց Թիֆլիսում՝ օրական հացի կարօտ: Նրան առաջարկում էին պետական ծառայութիւն, բայց նա գեռ

յոյս ունէր իր ազգին ծառայելու։ Բարձրաստիճան պաշտօնեաներ միջնորդեցին, խընդրեցին նրա համար, բայց իզուր, գերմանական ուսում ստանալը, գերմանական ընտանիք սիրելն ու յարգելը ամենայն հայոց կաթողիկոսի աչքում լիւթերական գառնալ էր համարվում. իսկ զա նշանակում էր լինել դաւաճան, վատ հայ։ Այդքան վիրաւորական կերպով գուրս վանդվելով այն շրջանից, որ պիտի ընդունէր, հասկանար մի ուսումնական երիտասարդին, Արովեանցը վերջի վերջոյ հարկադրված եղաւ մանել պետական ծառայութեան մէջ և ստանձնեց Թիֆլիսի գաւառական գպրոցի տեսչի պաշտօնը։ Այդքայլը նա ստիպված էր անել չքաւորութիւնից, ինչպէս ինքն է խոստովանում։ 1839-ին, ազատվելով հոգեոր կոչումից, նա ամուսնացաւ գերմանուհու հետ և այդպիսով բոլորովին կարվեց հայ Ակեղեցականներից։ Բայց առանց կղերի աջակցութեան էլ նա կարողացաւ նուիրվել հայ երեսաների կրթութեան, բաց անելով դիշերօթիկ գպրոց, ուր աշակերտները, ինչպէս վկայում է գերմանացի ձանապարհորդ Վագներ, գեղեցիկ կարգում էին Գէօթէն ու Շիլէրը։

Այդ տիսուր գրութիւնն էր կանգնած և Նազարեանցի առաջ, երբ նա փիլիսոփայա-

կան գիտութիւնների կանդիդատի դիպլոմը ծոցում ուզում էր ասպարէզ գտնել իր համար։ Նրա ձգութիւնն էր ուսուցչութեան պաշտօն ստանալ. բայց ուրի Արովեանցի օրինակը նրան, իհարկէ, պիտի լաւ խրատէր։ Միակ հայ գպրոցը Կովկասում Ներսիսեան ուսումնարանն էր, որ 1837-ի Պօլօժենիէր հիման վրա անուանվում էր սևմինարիա, բայց նա էլ գտնվում էր շատ ողորմելի գրութեան մէջ։ Յովհաննէս Կարբեցին, իբրև Ներսէսի թշնամի, աշխատում էր խլել գպրոցի կալուաճները. բացի գրանից գպրոցը, նրա ծըրագրով, միմիայն հոգեորականների զաւակների համար պիտի գոյութիւն ունենար։ Կովկասի մասին Նազարեանցը չէր էլ կարող մտածել, գոնէ մի այդպիսի կաթողիկոսի ժամանակ։ Մնում էր Լազարեան ձեմարանը։

Դօրպատից Նազարեանցը գնաց Պետերբուրգ, ուր մնաց երկու տարի։ Ի՞նչ էր անում այդտեղ։ —Պատոր Վէօլէր ասում է թէ նա ուսումնասիրում էր արեելեան լեզուները։ Դա շատ հաւանական է։ Մի և նոյն ժամանակ Նազարեանցը աշխատում էր տեղ ըստանալ Լազարեան ձեմարանում։ Պետերբուրգում էր ապրում ձեմարանի հոգաբարձուն, Յովհակիմ Լազարեանի որդի Յովհաննէսը։ Նըրան դիմեց Նազարեանցը Լազարեան ձե-

մարանի թղթերում պահվել են Նազարեանցի երկու զրաբար ստանաւորները, որոնք զրված են «Պետրոսաշէն (Պետերբուրգ) քաղաքում» 1841 թւականի մարտի 30-ին և ապրիլի 19-ին \*): Դրանք ներբռնվեր են, նուիրված Լազարեան տոհմին (Երկրորդը յատկապէս Յովհաննէս Լազարեանին): Մարտի 30-ի ստանաւորը զրված է զատկի առիթով. Երեւում է որ Նազարեանցը գնացել էր չնորհաւորելու Լազարեանների զատիկը և, ինչպէս սովորութիւն էր, մասուցեց նրանց այդ ստանաւոր ուղերձը: Ահա, ի միջի այլոց, ինչ էր տառմ Նազարեանցը այդտեղ.

Թէ ոմն ի Հայս արժանաւոր անմահութեան  
Ստոյգ արդեամքը, Ծնտիր զոհիք ի շահ ազգի  
Այդ վես մատոյց քաջ վայել է ո՞ր այլ անուան,  
Թէ ոչ Զերում, Տեարք Լազարեան, շքեղ տոհմի:

Ուրա՛խ լեռուք, ուրախ լեռուք, զՁեզ Աստուած  
Կոչեաց լինել փառք եւ պարծանք Հայաստանի.  
Այս Մոսկովեան Աթէնք Հայոց որո՞յ ստեղծուած,  
Այո՛ մտաց, սրտի ճերոյ ազգասիրի...

\*) Այս ստանաւորները և մի քանի այլ թղթեր Լազարեան ճեմարանի արխիվից արտագըել է և ուղարկել է մեզ ճեմարանի ուսուցիչ պ. Խ. Յովհաննիսեան:

Միւս ստանաւորը չը զիտենք ինչ առիթով է զրված և նուիրված: Բայց մեզ համար հետաքրքրականն այն է, որ այդտեղ Նազարեանցը վկայում է որ շատ բարիքներ է վայելել Լազարեան ընտանիքից:

Մի՛ տարադէպ Յուևսցին Քեզ ազգի պաշտամն Ծնորհամանաշ սրտի գեղմուսք, նուագ արդար Քանի՛ արդէն առատ բարիք աղքերացան Ցիս բաղդաւորս Քօ յընտանեաց գերամեծար:

Ճքեզ այսօր գովեմ երգեմ,  
Իմ Յովհաննէս աստեղազարդ,  
Կեցցե՛ս Դու Ըստ Հայոց մաղթեմ  
Կեցցես անչէջ, Փայլե՛լ զուարթ:

Բայց այս ներբռները հետեանք չունեցան: Յովհաննէս Լազարեանը չը կամնցաւկամ չը կարողացաւ պաշտօն ապալ Նազարեանցին ճեմարանում: Ո՞ւր գնալ: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը չը գիտէր թէ ուր տեղաւորէր երիտասարդին: Զը կարողանալով գտնել մի յարմար պաշտօն, Նազարեանցը մատնվեց յուսահատութեան և անց էր կացնում Պետերբուրգում «սի և աշխծեալ» օրեր \*):

\*) «Լումայ» հանդէս, Թիֆլիս, 1898, I գ., ել. 270,

Վերջապէս, մինխստը կարողանում է մի տեղ գտնել կամ, աւելի ճիշտ ասած, ստեղծել Նազարեանցի համար: Կազանի համարանում բացվում են հայերէնի դասեր և Նազարեանցը ստանձնում է դասասուի պաշտօնը՝ 2300 բուրքի ոռմիկով: 1843 թւականի սկզբում մենք տեսնում ենք նրան կազանում: Նրա աշակերտաներն են ընդամենը չորս հոգի: Երկու ոռւս համալսարանում և երկու երեխայ երկու ոռւս համարանում է թիւն: Դրանց համար նա առաջին զիմնազիայում: Դրանց համար նա կազմում է քերականութիւն և բերել է տալիս Վենետիկում տպված հայերէն գրքեր, որոնց համար համալսարանը տուեց նրան 410 բուրքի թղթադրամ:

Սկզբում կեանքը կազանի նման մի յետ ընկած քաղաքում շատ ծանր էր Նազարեանցի համար: Իր մի նամակի մէջ նա նկարացի գրում է թէ ինչպէս կազան համելուց եօթ գրում է թէ ինչպէս կազան համարանում էր յետոյ, քաղաքը հրդեհի ճարակ դարձաւ: Օր յետոյ, քաղաքը հրդեհի ճարակ դարձաւ: Երեք ամսից յետոյ զիշերը հրդեհ պատճեց այն հիւրանոցում, ուր ապրում էր նա իր

II գ. եք. 253: Աւելորդ կրկնութիւններից խուսափելու համար յայտնում ենք որ նազարեանցի նամակների մի նշանաւոր մասը տպված է Թիֆլիսի «Լումայ» և Մուկնշանաւոր մասը տպված է Թիֆլիսի «Հայութ» գալովածուների վայլ «Հանդէս գրական և պատմական» ժողովածուների մէջ, որոնցից էլ մենք օգտվել ենք:

կնոջ հետ: Սարսափելի իրարանցման մէջ Նազարեանցը կիսամերկ գուրս է վազում և աշխատում է ազատել մնացին իրերը կրակից: այդ իրերով բեռնաւորված՝ նա գնում է օթեան գտնելու: Այդ պատահարները աւելի ևս գառնացնում են երիտասարդին և Աւետարանի «Մարգարէն իր գաւառում պատի չունի» ասացուածքը դառնում է նրա համար մի տանջող իրականութիւն: Նա շարունակ գանդատվում է իր վիճակից, համարում է իրան իր տղէտ հայրենակիցների անուշադրութեան գոհ: Այդ գառնութիւնը, այդ գանդատը մնաց Նազարեանցի գրուածքների մէջ մինչեւ նրա մահը: Իհարկէ, նա շատ իրաւունքներ ունէր այդպէս գանդատվելու: Դեռ երիտասարդ հասակից էր խոցոտվում նրա սիրաը, որ լի էր այնքան ազնիւ ձրգառումներով: Զգալով իր մէջ գործելու պատրաստականութիւն և ոյժ, նա տեսնում էր իրան հեռացրած, յետ մղված. և, իհարկէ, միայն ցաւել, միայն դառնանալ կարող էր, մանաւանդ որ անարժան մարդիկ հեշտութեամբ էին առաջ գնում և խրախոյսներ ըստանում: Գանդատների հիմքը, ընդհանրապէս, արդարացի էր: Բայց գանդատները շատ անգամ էին հասնում չափազանցութիւնների: Նազարեանցի մէջ բոյն դրեց մի կաս-

կոմուսութիւն, շատ դէպքերում նա նոյն իսկ չէր նկատում իր գործի աջողութիւնը, նրա առաջացրած ոգերութիւնը և գանգատվում էր այն ասիական բարբարոսութիւնների վրա, որոնք հայածում էին նրան:

Բայց գանգատները, մշտական դժգոհութիւնները չեին յուսահատեցնում նրան, չեին հարկադրում մոռանալ այդ անպարտաճանաչ ազգը, հեռանալ նրանից: Աշխատել պէտք է այդ ազգի համար—ահա ինչն է նազարեանչի խորին համոզմունքը: Եւ սկսում է աշխատել կազմանում, աշխատում է գանգատվելով, աշխատում է դժգոհութիւններ յայտնելով, բայց աշխատում է անպատար, չը խնայելով ոչինչ ջանք ու զրկանք: Այսիսի աշխատաւոր էր նու երկար տարիների ընթացքում:

Սրդէն 1843-ին, չը նայած կազմանում կրած իր չարչարանքներին, նա սպատրաստել էր «Բնդհանուր պատմութեան անցքերի համապատասխանութիւնը՝ սկզբից մինչև մեր օրերը», հառաջերէն լեզուով: Այդ աշխատութիւնը տպայի բարեկանութիւնը կազմակերպուած էր նամականիւր որդուն, որ գարեանի միւս որդուն, Խաչատրութիւն, որ գարեանի ճեմարանի հոգաբարձուի օգնականքի առաջարկան ճեմարանի հոգաբարձուի վրա էր: Նազարեանցը լսել էր որ Խաչականն էր: Նազարեանցը միտք ունի հրաւիրել նրան

ճեմարան՝ խորհրդի անդամի պաշաճնով: Ուստի նոյն 1843-ին ուղարկում է կազարեանին ուղարկն լեզուով զրված մի ձառ, որի մէջ խորհուրդներ էր տալիս թէ ինչպէս պէտք է կարգաւորել ճեմարանը և թէ առհասարակ ինչ կարելի է անել հայերի կրթութեան համար: Սակայն լուրը չը ճշտվեց, երկար ժամանակ պատասխան չը ստանալով կազարեանցից, Նազարեանցը մի նոր տոփթ է գտնուու յուսահատական մաքերին զիմելու և հաստատվում է այն կարծիքի մէջ, թէ հայերը իրանց աշխատաւորներին ձանաչել և զնահատել չը զիտեն:

Բայց այդ միջնորդին ծագում է մի նոր յոյս: Յովհաննէս կարբեցին վախճանվել էր. 1843 թւականին կաթողիկոս ընտրվեց Ներսէս Աշտարակեցին, որ նոյն տարվայ վերջին Քիշենեվից զնաց Պետարքուրդ և երկար մնաց այդտեղ: Նազարեանցը մի չնորհաւորական ուղերձ ուղարկեց Ներսէսին և մի նամակով էլ յայանեց նրան իր իզեկը և զգացմունքները: Ներսէսը Յովհաննէս կարբեցի չեր: Ահազին ժողովրդականութիւն վայելող այդ հոգերաբաննը, որ այնքան լաւ հասկացել էր իր ազգի կրթական կարիքները, հաւատ էր ներչնչում Նազարեանցին թէ այժմ կարելի է տեղափոխվել Հայաստան և զործել այնտեղ

մի այդպիսի կաթողիկոսի հովանաւորութեան տակ: Այդ պատճառով նա առաջարկում էր Ներսէսին բաց անել Էջմիածնում մի ճեմարան՝ հոգեորականների կրթութեան համար: Հայրենիք փոխադրվելու ցանկութիւնը աւելի սաստկանում է նրա մէջ մանաւանդ այն ժամանակ, երբ ծնվում է նրա անդրանիկ որդին և կազանում չէ ճարվում հայ քահանայ, որ մկրտէր երեխային: Ճարահատված, իսկազ հայրը հարկադրված է լինում ինքը կատարել մկրտութեան արարողութիւնը երկատարել մկրտութեամբ, մինչև որ հայ կու վկանների ներկայութեամբ, մինչև որ հայ քահանայ կը պատահէր, որ կը կատարեր մը կրտութեան ամբողջ ձէսը:

Բայց զիմելով Ներսէսին, առաջարկելով նրան իր ծառայութիւնները, Նազարեանցը կամու էր առնում մի հարցի առաջ, արդեօք կամնդ էր սուսում մասնաւորականների կողմանում սասացած մարդկանց: Արովեանկան ուսում սասացած որ գնահատութիւն ցի օրինակը հաստատեց որ գնահատութիւն առաջարելի է սպասել մանաւանդ հոգեորականների կողմից: Արդեօք Ներսէսը կարող կամնների կողմից: Արդեօք լեզու էր բացառութիւն կազմել և այս հարցի կը լինէր բացառութիւն կազմել և այս հարցի մէջ: Դժբախտաբար, այդ եռանդուն, լսելոք և հեռատես հոգեորականն էլ բացառութիւն կազմեց և Նազարեանցը նրա ուշադրութեան կազմեց և իրավակառութեան չարժանացաւ: Ներթեան և իրավակառութեան չարժանացաւ:

սէսը Արովեանցի վրա էլ ուշադրութիւն չը դարձրեց: Որքան էլ բարձր կանգնած լինէր նա իր դասակիցների մէջ, նախապաշարմունքը, որ յատուկ է այդ դասակարգին, թոյլ չը տուեց նրան ճանաչել և մեծարել համարձակախօս, ազատ գաղափարներով սնված հայ երիտասարդներին: Դա Էջմիածնի մի ընդհանուր պակասութիւնն էր, և Նազարեանցի դաւանանքներին հետեւող շատ մարդիկ խորթ, անհարազատ ճանաչվեցան Էջմիածնի կողմից:

Եւ այսպէս, Նազարեանցին մնում էր բաւականանալ արքունական ծառայութեամբ: Վեց տարիները, որ նա անցկացրեց կազանի համալսարանում, աւելորդ չէին: Համալսարանում այդ ժամանակ ծաղկած էին արելեան լեզուները, մանաւանդ արաբերէնը և սպասկերէնը: Արելեան լեզուների ֆակուլտը այնքան անուն հանեց և այնքան զրաւիչ էր, որ ուսանողները թողնում էին միւս ֆակուլտէտները և գալիս էին այդտեղի դասախոսութիւնները լսելու \*): Դա շատ նպաստաւոր հանգամանք էր Նազարեանցի համար, համալսարանում նա, իհարկէ, աւելի ուշադրութեան կարժանանար իր լեզուա-

\*) Այդպիսիների թւում էր և կոմս Լեվ Տօլստօյ, ուսւաց այժմեան տմենահոշակաւոր գրողը:

դիտութեամբ և աւելի ընդարձակ միջոցներ՝ կունենար արաբերէնն ու պարսկերէնը լաւ ուսումնասիրելու համար:

1843 թւականին Ստեփանոս Նազարեանցը պրօֆէսօրական մի շրջանի մէջ կարդաց մի համառոտ զեկուցում հայոց հին գրականութեան մասին: Յաջորդ տարին այդ աշտութիւնը հրատարակվեց համալսարանի պաշտօնական օրդանի մէջ <sup>\*\*</sup>), ուր տպագրվում էին պրօֆէսօրների աշխատասիրութիւնները, առաւելապէս արևելագիտութեան վերաբերվածները: Սա Նազարեանցի առաջին տպագրած աշխատութիւնն է, որ գրաւում է 49 փոքր ուժածալ երես: Երա վերնապիրն է. «ԵՇԵԼ Վզգլյած նա Իсторիո Գայկանской Լитературы до конца 13 етогдѣтия» (Համառոտ ակնարկ Հայկական գրականութեան վրա մինչև 13 դարի վերջը): Գրուածքը բոլորովին համապատասխանում է վերնապրին, չունի մի գիտական հետազոտութեան հանգամանքը: Կասենք աւելին. դանոյն իսկ մի ինքնուրոյն գործ չէ, այլ վերդանութիւններին համապատասխանում է չ. Սուքիաս Սօմալեանի գրած հայոց ցրած է Հ.

\*) Ученые Записки, издаваемые Императорским Казанским Университетомъ, 1844, кн. I.

գրականութեան համառոտ պատմութիւնից, որ հրատարակվեց Վենետիկում, իտալիրէն լեզուով, 1829 թւին: Իսկապէս դա պատմութիւն էլ չէ, այլ հայ հեղինակների մի ցուցակ՝ չորրորդ դարից սկսած: Հետաքրքրութիւն ներկայացնում է Նազարեանցի գրած առաջաբանը, ուր, ի միջի, այլոց կարգում ենք հետեւեալ տողերը.

Ճիշտ է, հայոց գրականութիւնը չունի արաբական, պարսկական, հնդկական և չինական գրականութիւնների ոչ հետաքրքրութիւնը, ոչ հարստութիւնը, բայց իր գանձերով, որոնք զեր չեն գնահատված պատմագրի և լեզու հետազօտողի կողմից, նա արժանի է ուշագրութեան: Գիտութեան զանազան ճիւզերին վերաբերվող գրողների մի անընդհատ շարք, IV դարի սկզբից մինչև մեր ժամանակները, գյուղին ստացաւ Հայաստանում, որ ունէր շատ սահմանափակ միջոցներ, զրկված էր քաղաքական ինքնուրոյնութիւնից, ենթարկված էր ճակատագրի հազարաւոր հարուածներին:

Այսպիսով Նազարեանցը ցոյց էր տալիս որ գիտէ արժանի մեծարանքներ մատուցանել անցեալ գործիչներին: Բայց միենոյն ժամանակ նա չէ շանում անցեալի գրական հարստութիւններից, իր ժամանակակից հայ գիտնականների նման ինքնագոհութեամբ

խունկ չէ ծխում ազգասիրութեան, բարձրացնելով և փառաբանելով մեր հին գրականութեան արժեքը, եղածը բաւական համարելով ժամանակակից հայի կրթութեան և առաջարիմութեան համար; Նա հարկաւոր է համարում մի գրական վերածնութիւն, իսկ դրա համար անհրաժեշտ է ունենալ նոր, ամենքին հասկանալի լեզու: Միայն այդ լեզուի միջոցով հայոց գրականութիւնը կը դառնայ մի կենսունակ ու զարգացող գործ:

Այս հայեացքները Նազարեանցի գրական գործունէութեան զվարար յենակէաներն են. այնպէս որ նա հէնց առաջին քայլից միանցամայն պարզ ցոյց էր տալիս իր գրական գէմքը: Նոր լեզուի հարցը նա դնում էր հըրապարակում ամենից առաջ: Ճիշտ է, այդ լեզուի մասին Նազարեանցից առաջ խօսել լեզուի մասին Նազարեանցից առաջ խօսել Արովեանցը, բայց նրա «Վէրք Հայաստան» Արովեանցը, բայց նրա «Վէրք Հայաստան»: Որ գրված էր գեռ 1841-ին, լոյս տեսնին», որ գրված էր գեռ 1858-ին: Մենք յետոյ նորից պիտի վերադառնանք այս հարցին: Առ այժմ շարունակնենք մեր պատմութիւնը:

Համալսարանի գիտնական հրատարակութեան մէջ ապված այդ փոքրիկ աշխատութիւնը, իհարկէ, շատ չէր կարող տարածվել հայերի մէջ, թէև Նազարեանցը ուղարկեց

իր ծանօթներին նրա առանձին հրատարակութիւնից մի քանի հատ: Ինչպէս երեսում է, Նազարեանցը չը կարողացաւ սկսել իր գրական գործունէութիւնը հայերէն աշխատութիւններով ամենից առաջ այն պատճառով, որ նիւթեական միջոցներ չունէր: Մենք պէտք է մի քիչ կանգ առնենք այս հանգամանքի վրա, որպէս զի հասկանալի լինի Նազարեանցի գործունէութեան մէջ մի գիծ, որ այնքան քիչ էր համապատասխանում նրա բնաւորութեան և դաւանանքներին:

Աչքի առջև ունենանք նախ ժամանակը: Այդ ժամանակի համար են բանաստեղծի իրաւացի և բնորոշ խօսքերը.

Դեռ չի գըրած՝ առաջ դու լա՛ւ միտք աքա,  
Ո՞վ է ևեղջիղ գըրուածքները առնողը \*):

Հայերէն գիրքը ընթերցող չունէր. գիրք տպագրելը քաջութիւն էր համարվում: Մեր խօսքը, իհարկէ, մասնաւոր, մասնաւանդ անյայտ մարդկանց մասին է: Գրական հրապարակի զվարար տէրերը Միիթարեաններն էին. նրանք էին համարձակ կերպով տանում հրատարակական գործը և տալիս էին գըրքեր, որոնք մեծ մասամբ համապատասխա-

\*) Գամառ-Քաթիպա, «Բարի խըստ»:

նուռմ էին այն ժամանակվայ ունենոր ընթերցողի մտաւոր պահանջներին։ Վենետիկեան զբքերը յայտնի են իրանց թանգութեամբ, և եթէ, չը նայած այդ արդելառիթ հանգամանքներին, նրանք իրանց ոսկեզօծ կաղմերով հայերի զրադարձներն էին զարդարում, այդ մեծ մասամբ պէտք է վերադրել այն հեղինակութեան, որ ձեռք էին բերել Մխիթարեանները իրեւ հեղինակներ և հրատարակիչներ։ Եւ սակայն Մխիթարեաններն էլ չեին կարող աջողեցնել իրանց զրքերի արագրութիւնը, եթէ չը լինէին մեկնասանները։ Մեկնասա հանդիսանում էին սովորաբար հարուստ վաճառականները կամ ունենոր պաշտօնեանները։ Տպագրական ծախսը հայթայթողը գառնում էր բարերար և շատ անդամ այդ բարերարին ծօնվում էին զովասանական ուղերձներ զրքի սկզբում։ Դա արդէն սովորութիւն էր։

Բարերարների օգնութեան դիմելը անխուսափելի անհրաժեշտութիւն էր և Նախուսափելի անհրաժեշտութիւնը էր և Նախուսափելի անհրաժեշտութիւնը մարդ, բաստորացած էր, որ իւրաքանչիւր մարդ, բաստորացած էր, գրվելով մի զրքի, պահանջում էր ժամանորդ զրքելով մի զրքի, պահանջում էր ժամանորդ զրքելով մի զրքի, պահանջում էր նաև ապականական տպիւթիւնը հասկանում էր Նախանջի տպելութիւնը հասկանում էր «մէկ ու կէս դահեկան» մի զարեանցը։ Տաղ «մէկ ու կէս դահեկան» մի

զրքի տաղագրութեան համար և պահանջել որ իր անունը տաղագրութեամբ անմահանայ, — դա մի երեխացական բան էր թւում Նազարեանցին և նա զիտէր, որ այդանդ լոկ դատարկ փառասիրութիւնն է խօսում։ «Հայերը—զրում է նա—փոխանակ սիրելու և փառաւորելու նրանց, որոնք ազգի կրթութեան համար ձիգ են թափում, իրանք են ուզում գովարձնվել մի քանի չնչին փողերի համար, որ ծախսում են հէնց իրանց շահի և օգափ համար, աճ, դա մի անրժշկելի մալորութիւն է, որի նմանը լուսաւոր ազգերի մէջ չէ նըկապում»։

Բայց ինչ կարելի էր անել։ Նազարեանցը յանձն չէ առնում բժշկել այդ մոլորութիւնը, այլ համառում է այն եղբակացութեան որ պէտք է «տկարների հետ տկար լինել յանուն ազգի և նրան օգնելու տենչանքի»։ Եւ ահա այդ նպատակով նա կարելի է համարում մեկնասաններին և բաժանորդներին խրախուսել այն եղանակով, ինչպէս նրանք են կամենում, այսինքն տպելով նրանց անունները և նոյն իսկ ներբռդներ նուիրելով նրանց։ Այս բանը գեռ այնքան խորիթ ու անհասկանալի չէր լինի, եթէ պատշաճաւոր չափ պահպանվէր։ Բայց Նազարեանցը մի քանի զէպքերում չափազանցութիւնների մէջ

ընկաւ, շոայլելով իր բաժանորդների հասցեին այնպիսի գովասանքներ, որոնց զրողը, յամենայն դէպս, Նազարեանցի պէս մի մարդը չը պիտի լինէր:

Սակայն ի՞նչպէս դատապարտենք դրա համար Նազարեանցին: Մենք դոնէ սիրո չենք անում դատապարտողի դեր կատարելու. պէտք է մտքով տեղափխութել այն ժամանակը, պէտք է իմանալ մի հայ զրողի դրութիւնը: Ահա մի փաստ: Կազան համանելուց յետոյ համարեա ամրողջ երեք տարի նա նամակագրութիւն ունի Պետերբուրգում գտնվող Եվրեամ վարդապետ Ալթունեանցի հետ և այդ դրութիւնների նիւթն է այն դրամական օժանդակութիւնը, որ պիտի հասցնէին նրան Պետերբուրգից՝ մի գիրք տապագրելու համար: Երեք տարի չէր լուծվում այդ գորդեան հանդուցը... Նազարեանցը ստիպված էր ազաշական նախակիններ գրել և կազարեաններին, որոնք էլ, վերջապէս, օգնեցին նրան առաջին հայերէն աշխատութիւնը տալադրել, բայց արդէն 1851թ., այսինքն համարեա 8 տարուց յետոյ: «Տկարների հետ տկար լինել»—սա մի ցաւալի սկզբունք է, կօմպրօմիսի սկզբունք: Եւ եթէ հաշտվում ենք այն բանի հետ, որ այդպիսի խօսքեր արտասանողը Ստեփանոս Նազարեանցի շրթունքներն են, պատ-

ճառն այն է, որ դրանք նրա դրաւոր վաստակների միայն արտաքին, հրատարակչական մասին էին վերաբերվում: Եւ վերջապէս միթէ հէնց այժմ էլ գոյութիւն չունի այդ միենոյն դրութիւնը...

Երկրորդ մասը չէ էլ կարելի համեմատել առաջին մասի հետ, այնքան հետաքրքրական է կազմված, աւելի մշակված, աւելի ընդարձակ. դա իսկ որ մի քննական տեսութիւն է:

Եւ այսպէս, իր երկու աշխատութիւններով Նազարեանցը տուեց մեր գրականութեան ամիսով պատմութիւնը, առաջին փորձ ուուսերէն լեզուով: Մեզ համար, իհարկէ, այնքան մեծ չէ այդ նշանակութիւնը, որքան այն, որ Նազարեանցը նորագոյն պատմութեան մէջ զրել է իր հոգին, իր դաւանակքները, իր ամբողջ ծրագիրը: Իբրև մի գիտնական աշխատութիւն, այս պատմութիւնը գուցէ այնքան արժէք միայն ունենայ, որ տալիս է ուուսերէն լեզուով հայոց գրականութեան պատկերը յաջորդաբար, դարից դար: Բայց նա մեզ համար շատ կարևոր է այն հայեացքների պատճառով, որ յայտնում է Նազարեանցը: Այստեղ մենք մի չոր ու ցամաք գիտնական հետազոտութիւն չենք գտնում, այլ հրապարակախօսի լայն, վառվուն սիրտ, որ դուրս է գալիս նիւթի նեղ սահմաններից, քարոզում է իբրև նոր ժամանակի մարդարէ: Այստեղ Նազարեանցը մեր առաջին գրական քննադատն է, որին զեկավարում են հասարակական որոշ իդէալներ: Եւ որովհետեւ այդ գրը Նազարեանցի ամբողջ գործունէութեան

## II

Հայոց գրականուրեան պատմութեան երկրորդ մասը: — Այդ աշխատութեան արժանաւորութիւնները: — Նազարեանցի ֆինադատուրիւնը. անցեալը, Միհրարեաններ, ներկան: — Նոր ժամանակի պահանջները: — Նոր լիզուի անհրաժեշտուրիւնը: — Ի՞նչ պիտի լինի գրականուրիւնը հայերի համար: — Մագիստրոսի ասիհան: — Գրի բողած սպառուրիւնը:



1846 թւականին Նազարեանցը ներկայացրեց կազմանի համալսարանին իր գրած զիսերտացիան՝ հայ-պարսկական դպրութեան մազիսարոսի աստիճանն ստանալու համար: Դա հայոց գրականութեան պատմութեան երկրորդ մասն է, 14-րորդ դարի սկզբից մինչև 1840-ական թւականները <sup>\*)</sup>:

<sup>\*)</sup> Ահա այդ աշխատութեան վերնագիրը. „Օճօրքն Իсторія Гайканской Письменности въ Но-вѣйшія времена“.

հիմնաքարն է, մենք պարտաւոր ենք հէնց  
այժմից, առաջին քայլից, մանրամասն կեր-  
պով ծանօթանալ նրա հայեացքների հետ: Չը  
մոռանանք և մի շատ կարեոր հանգամանք.  
այս գործից ճանաչեցին հայերը Նաղարեան-  
ցին, այս գործն էր, որ յայտնի դարձրեց նը-  
րա անունը, կրքեր ու թշնամութիւն յարու-  
ցեց մեր հին սերտանդի մէջ:

Նաղարեանցը այսպիսի առաջարանով է  
սկսում իր գործը.

«Ազգերը, ժամանակի և տարածութեան  
մէջ, ծագում են, ծաղկում են և ընկնում  
են կամ վերջնականապէս կամ թէ մի քա-  
նի դար ժամանակով, մինչև որ մարդկու-  
թեան հանձարը, աւելի նպաստաւոր հան-  
գամանքների մէջ, վերածնվում է իր դա-  
րաւոր գագաղից և վերանորոգված ոյժե-  
րով գնում է այն ճանապարհով, որ նա-  
խագծել է Նախախնամութիւնը երկրագն-  
տի ցեղերի համար: Ազգերի կեանքի երե-  
ւոյթների այս անընդհատ տեղաւութիւ-  
նըն ու մակընթացութիւնը, ինչպէս մի մեծ  
հայելու մէջ, պարզ արտայայտվում է լե-  
զուների և գրականութիւնների պատմու-  
թեամբ, որոնք, ինչպէս ազգային կեցու-  
թեան անփոփոխ հաւատարիմ՝ ուղեկիցներ,  
գնում են նրա հետ օրօրոցից մինչև գե-  
րեզման»:

Գրական այն շրջանը, որից Նաղարեանցը

սկսում է իր տեսութիւնը, անկրման, գերեզ-  
մանի մի շրջան է հայերի մէջ: Դա կաթօլի-  
կացած հայերի (ունիթօրներ) դարն է: Ու-  
նիթօրները աղաւաղեցին հայոց լեզուն, ամեն  
ջանք գործ էին գնում լատինացնել նրան,  
տալով նրան լատինական ձեեր: Այդ բաւա-  
կան չէ: Նրանք էին, որ մտցրին Հայաստա-  
նի մէջ Եւրօպայի սխօլաստիկան, թարգմա-  
նելով այնպիսի հեղինակութիւններ, որոնք  
ինչպէս ասում է Նաղարեանցը, «այնքան ան-  
օգուտ, այնքան աննշան են իրանց էու-  
թեամբ, որ նոյն իսկ նրանց վերնագիրները  
հազիւ պահպանվիլ են մի քանի տեղերում»:  
Ունիթօրների հակառակորդ տաթեեանները  
յափշտակութեամբ կարդում էին այդ թարգ-  
մանութիւնները, «կարծես թէ դրանք ամե-  
նահոչակաւոր կլասիկների ստեղծագործու-  
թիւնները լինէին և լոյս էին հանում աշ-  
խասութիւններ, որոնք հէնց միայն իրանց  
բարբարոսական ոճի պատճառով արժանի են  
յաւիտենական մոռացման»:

Սուած տանելով իր տեսութիւնը, Նա-  
ղարեանցը քայլ առ քայլ հետեւում է գրող-  
ներին և գրականութեան: «Հայոց գրակա-  
նութիւնը՝ ասում է նա—XIV դարից ըս-  
կսած աւելի ու աւելի թերգում էր դէպի  
անկում: XVII դարի ընթացքում զուր էին

ձգնում աղքի մի քանի ընտրեալները, ինչ-  
պէս Բարսեղ Բիթլիսեցին, Յակոբ Եղ-  
միածնեցին և Կոլոս Կ. Պօլսեցին \*), վե-  
րականդնել նրան։ Ապագայ ժամանակնե-  
րին էր թողնված գրականութեան երկ-  
րորդ ծաղկման վկայ լինելու փառքը և մի  
ուրիշ մարդուն էր վիճակված լինել հայերի  
հոգեոր վերածնութեան ստեղծողը։ XVIII  
դարը պիտի դառնար աղգային կեանքի այդ  
բարեբախտ յեղափոխութեան արժանայի-  
շատակ ժամանակը և Մխիթարը—այդ յե-  
ղափոխութեան գործիքը, Նախախնամու-  
թեան ընարեալը»։

Մխիթարի և Մխիթարեանների գործու-  
նէութեան մասին Նազարեանցը երկար է խօ-  
սում և միշտ մի առանձին հիացմունքով։ Նա  
հերքում է այն միտքը թէ Մխիթարը հաս-  
տատել է իր միաբանութիւնը՝ հայերին Հը-  
ռոմի գիրկը մտցնելու համար։ Իհարկէ, կար  
և կրօնական նպատակ, բայց նա առաջնա-  
կարգը չէր։

«Թողնենք կրօնական կողմը։ Հայկա-  
կան գրականութեան պատմութիւնը պի-  
տի նայէ Մխիթարեան միաբանութեան  
որպէս մի գիտնական Ակադեմիայի, որի  
անդամները, ինչպէս տրամադրում էին

\* ) Բարսեղ Գարգապետ, Բաղէշի գպրոցը ծաղկեցնո-  
ղը. Յակոբ Եջմիածնի կաթողիկոս էր, իսկ Կոլոսը—  
Կ. Պօլսի պատրիարք, բայց ոչ թէ XVII, այլ XVIII  
դարում։

սահմանված կարգերը, պարտաւոր են ըգ-  
րազվել զիտութիւնները մշակելով, փոխա-  
դարձարար հազորգելով միմնանց իրանց  
հետազօտութիւնների արդիւնքը»։ Եւ ահա  
ինչ է այդ Ակադեմիան։ «Մխիթարեանների  
Ակադեմիայի երեան գալը հայոց մտաւոր  
կեանքի ամենանշանաւոր դէպքն է։ Հայ  
ժողովուրդը մինչեւ այդ ընկղմնված էր խո-  
րին տգիտութեան մէջ, իսկ նրա լեզուն՝  
կատարեալ բարբարոսական գրութեան մէջ։  
Մխիթարը, որ իրաւացի կերպով անուան-  
վում է հայերի նոր լուսաւորիչ և երկ-  
րորդ Մեսրոպ, իր միաբանութեան հիմ-  
նարկութեամբ մի անխորտակելի պա-  
տուար կանգնեցրեց գրական խանգարման  
սաստիկ հեղեղումների դէմ»։

Եւ զիմելով իր ասածները հաստատող  
փաստերին, Նազարեանցը արժանաւոր գո-  
վեստներով է մեծարում Մխիթարեաններին։  
Այսպէս, խօսելով Մխիթար Աբբայի մեծ բա-  
ռարանի մասին, նա ասում է. «Սյամեան սե-  
րունդը սրբազն ակնածութեամբ է նայում  
այս անսովոր աշխատութեան, որ ծնունդ  
առաւ մի այնպիսի ժամանակ, երբ Եւրոպան  
էլ գրանից լաւ բան չունէր այս ճիւղում։  
Այս սրբազն ակնածութիւնը դառնում է  
հիացմունք, երբ մտածում ենք, որ հայերը  
այս ասպարէզում չունէին ոչ մի նախորդ։  
Մխիթարի ամենաընդունակ աշակերտների

մէջ նա յիշատակում է շատերին. Հ. Աղոնց Գիւլբերին անուսնում է «փայլուն խելքի և բազմակողմանի գիտնականութեան տէր մարդ», իսկ Հ. Գաբրիէլ Աւետիքեանի մասին ասում է. «Ա. Ղազարի վարդապետների մէջ ապրած արժանաւոր գործիչների շարքում յաւիտենական դալար փառքով ծաղկում է Հ. Գաբրիէլ Աւետիքեանի անունը»:

Իսկ իր ժամանակակից Մխիթարեանների մասին Նազարեանցը աւելի բարձր կարծիք ունի: «Մխիթարեան Ակադեմիան ոչ մի ժամանակ այնքան եռանդով չէ մշակել զիտութեան հողը, ինչպէս մեր ժամանակներում: Ակադեմիան կարողութիւն ունի ցոյց տալ նոյն իսկ այնպիսի մարդիկ, որոնք իրանց խելքով, զիտնականութեամբ և աշխատասիրութեամբ կարող էին պատիւ բերել ամեն մի զիտնական ընկերութեան Եւրօպայում: Մենք միայն կանուանենք Սօմալին, աւագ Աւգերեանին, կրտսեր Աւգերեանին, վերջապէս Ղուկաս Ինճիճեանին, որ Հայաստանի զրական ամենամեծ աստղերից մէկն է»: Արժանաւոր մեծարանը է մատուցանում Նազարեանցը Մխիթարեանների մանաւանդ մի գործին.

«Հայկական զրականութեան տարեգրութիւնների մէջ դարագլուխ է կազ-

մում նոր բառարանը\*), որ երեսն եկաւ երկու վիթխարի հատորներով և 4, աւելի քան 2200 երեքսիւնեան մանրատառ երեսներ: Այս զործը իսկապէս մեծ Մխիթարի նուիրական մտքի իրագործումն է՝ նրա երեք յաջորդների անդուլ աջակցութեամբ, այն է՝ Ստեփանոս Մելքոնեանի, Ստեփանոս Ագոնցի և Սուքիաս Սօմալեանի, սկսված է 1784 թւին երեք Մխիթարեանների ձեռքով, որոնք են Գաբրիէլ Աւետիքեան, Խաչատրուք Միւրմէլեան և Մկրտիչ Աւգերեան. զանազան տեսակ խոշնոգոտների և փոփոխութիւնների հանդիպելով, բառարանը վերջացաւ 1834-ին: Հայը, կարող ենք ասել համարձակ, պիտի հպարտութեամբ նայէ իր մայրենի զրականութեան այս փայլուն յուշարձանին, կաւելացնենք նաև—համեմատական բառարանագրութեան շրջանում եղած այս բարձր քաջագործութեան, որ իր նմանին է որոնում Եւրօպայում:

Գալով ոռւսահայերին, Նազարեանցը, ինձարկէ, այսպիսի ոգեորված զովասանքների առիթ չէ գտնում: Իուսահայերի զրականութիւնը այդքան մեծամեծ արգիւնքներ չունի: Եւ պատճառը հասկանալու համար Նազարեանցը վերցնում է կծմիածնի վանքը: Իրաւ, եթէ հայ վանականութեանն էր վերապահված հայոց մատենագրութեան մշակութիւ-

\*) «Բառագիրք Հայկագեան Լեզուի»:

նը, պէտք էր որ Էջմիածինը, իբրև հայ եկեղեցու վարչական կենարօն և նախապատիւ աթոռ, զոյց տուած լինէր մի ստեղծագործական եռանդ։ Բայց ահա ինչ է ասում Նազարեանցը։

«Էջմիածնի վանքի վարդապետների գրական գործունէութիւնը քիչ միտիթարական է։ Այս երեսյթը, որ կարող է միակողմանի, հետեւաբար և անարդար դիտողին թոյլ տալ անսպայման կերպով դատապարտել այդ վարդապետներին, արդարացուցիչ պատճառներ է գտնում այն բազմատեսակ թշուառութիւնների մէջ, որոնք այնքան դարերի ընթացքում ծանրացած էին այս նախաթոռ վանքի վրա։ Մի ժողովրդի մէջ, որ հազիւ նոր է սկսել ազատ չունչ քաշել, մի ժողովրդի մէջ որի պատմական բոլոր յիշողութիւնները, հոգեսոր բարոյական ամբողջ զիտակցութիւնը, բացի կրօնից և լոկ ֆիզիկական գոյութիւնից, խեղդված էին և պիտի խեղդվէին ասիական բռնապետութեան ճնշող լուծի տակ, — այդպիսի մի ժողովրդի մէջ մենք իրաւունք չունենք ենթադրելու մի բօպէական ծաղկման հնարաւորութիւն։ Զը կան թոփչքներ ինչպէս նիւթական, այնպէս էլ հոգեսոր աշխարհում։ Ամեն ինչ հետեւում է անհրաժեշտ յաջորդականութեան օրէնքին, ամեն նոր զարդացում ժամանակ է պահանջում և, այսպէս ասած, բարեբաստիկ հանգամանքների չունչ»։

Մենք զիտմամբ ենք բերում այս մանրամասն քաղուածքները։ Սրանք շատ պարզ վըկայում են որ Նազարեանցը զիտէր արժանապէս գնահատել անցեալը, տեղեակ էր այն բոլոր հանգամանքներին, որոնց ազգեցութեան տակ կազմվել է մեր ազգի պատմական ճակատապիրը։ Տեսնում ենք թէ ինչպէս է նա պատկառանքով և երախտագիտութեամբ մեծարում հին գրականութիւնը, գրաբար լեզուն և նրա նոր մշակողներին, Միթարեաններին։ Անհրաժեշտ է որ ընթերցողը լաւ միշտ այս բոլորը, որովհետեւ նազարեանցի հակառակորդները միշտ այն վայնասունն էին բարձրացնում թէ նա անարդում է հայոց հարուստ գրաբար լեզուն, անարգում է ազգի անցեալը, հարազատ հայչ և այլն։

Եյժմ տեսնենք թէ Նազարեանցը, անցեալին իր պատիւը տալուց յետոյ, ինչ պահանջներ ունի ներկայից։ Մենք կը բերենք նրա այդ աշխատութեան վերջաբանը թարգմանաբար, մի քանի տեղ համառօտելով նրան։

«Մի յետադարձ հայեացը զցելով այն ճանապարհի վրա, որ մենք անցանք հայոց նոր և նորագոյն գրականութեան շրջանում, մենք հանդիպում ենք այսաեղ անապատի տիւուր, անկենդան պատկերին, ուր զի-

տողի աչքի առաջ մէն մի անդամ բացվում է մի օվազիս, որպէս զի գարձեալ անհետանայ և տեղի տայ անպառւզ, միանման ձանձրացութիչ տարածութիւններին, մինչեւ որ վերջապէս հանդէս է զալիս մեր առաջ անուշահոտ ծաղիկներով ծածկված դաշտերի և հովիտների տեսարանը։ Մի խօսքով, մենք տեսնում ենք այստեղ մարդկային կեանքի խայտաբղէտ պատկերը—ման և վերածնութիւն իրանց անվերջ կըրկնութիւնների մէջ, նայած բարոյական պայմաններին, որոնց բերում է ժամանակը։

«Հայաստանը, խոր գիշերվայ դարերից յետոյ, սոսկալի բարբարոսութեան գարերից յետոյ, իհարկէ, արդէն ներկայացնում է իր մտաւոր վերածնութեան առաւօտը. նա կարող է այժմ ցոյց տալ զիտնական հայերի մի ամբողջ շաբք, որ անխոնջ գործում է մայրենի զիտութեան շրջանում։ Բայց այս ամենը, որքան էլ ցաւալի լինի այս խոստովանութիւնը, չունի և չէ կարող ունենալ ազգային նշանակութիւն հայերի ամբողջութեան համար։ Ճիշտ է, Միթարեանները հայ ժողովրդի հանձարին են թարերութիւն և այս ամսամանափակ մի թւի կողմից, բայց չէ կարող նոր կեանք ներշնչել հայ ժողովրդի ժամանակակից մարմին։ Հին ձեւը, որ այլևս չէ համապատասխանում նոր ծագած կեցութեան, որ, խորթ լինելով ժողովրդական կեանքին և հասարակաց գործածութեան, կորցրել է իր նշանակութիւնը, չէ կարող կրթական գործիք գառնալ ներկայի զաւակների համար։ Այդ հին ձեւը<sup>\*)</sup> անհրաժեշտու-

կարող նրան իր սեփականութիւնը համարել։ Դատապարտել հայերին անպայման կերպով կը նշանակէր չիմանալ ժամանակակից եւրօպացի մարդու զարգացման պատմութիւնը և պահանջել հայերից այն, ինչ օրինակներ չունի աշխարհի միւս աղղերի կրթութեան տարեզրութիւններիմէջ։

«Կատարեալ յարգանք մատուցանելով հայկական Ակագեմիայի փայլուն աշխատութիւններին, կատարելապէս հասկանալով եւրօպացիների զիտնական այն ուսումնասիրութիւնների զինն ու արժանաւորութիւնը, որոնք վերաբերվում են հայ ժողովրդի անցեալ կեանքի լուսաբանութեան, մենք այստեղ չենք կարող խլացնել մեր ներքին համոզմունքի ձայնը, որ Միթարեանների և եւրօպացի անհատների այդ ամբողջ ազնիւ ձգտումը, բաւարարութիւն տալով մեծ մասամբ լոկ զիտնական կարիքներին, կարող է գնահատութիւն գտնել հայերի մէջ միայն զիտցողների շատ սահմանափակ մի թւի կողմից, բայց չէ կարող նոր կեանք ներշնչել հայ ժողովրդի ժամանակակից մարմին։ Հին ձեւը, որ այլևս չէ համապատասխանում նոր ծագած կեցութեան, որ, խորթ լինելով ժողովրդական կեանքին և հասարակաց գործածութեան, կորցրել է իր նշանակութիւնը, չէ կարող կրթական գործիք գառնալ ներկայի զաւակների համար։ Այդ հին ձեւը<sup>\*)</sup> անհրաժեշտու-

\*) Խուզը գրաբար լեզուի մասին է։

րէն պիտի վերածնվի, մի սերտ, բարեկամական դաշն պիտի կապէ միշտ երիտասարդացող կեանքի հետ և ամեն կերպ պահպանէ նրան։ Մի խօսքով, պահանջվում է զարգացում մի նոր ազգային զրականութեան, որ համապատասխանէր մեր դարի պահանջներին։ Այս ձշմարտութիւնները, որոնց վազուց է ձանաչել Եւրօպան և որոնք շատ անգամ են իրակործվել ամեն տեղ ժողովրդական լեզուների և դպրութիւնների վերածնութեամբ, մինչեւ այժմ մեր ազգի ներկայացուցիչների համար զադանիք են մնում։ Մի իթարեանների Ակադեմիան, իր ամբողջ ուշադրութիւնը նուիրելով համարեա բացառապէս հին կեանքին, շատ քիչ բան է արել մինչեւ այժմ՝ զիտութիւնը կենդանի հասարակական կեանքի շրջանը մտցնելու համար։ Իսկ Ռուսաստանի հայերը այս մասին չեն էլ մտածել։ Այս տեսակ փորձերի ամեն մի առաջարկութիւնն անգամ այստեղ զրգուում է թշնամական կասկած, որպէս թէ խօսքը այն մասին է որ ինքնիշխան կերպով տապալվի հին հայոց լեզուի փառահեղ չէնքը և նրա փոխարէն դնվի պակաս ազնիւ, գուեհիկ բարբառը։ Միւս կողմից նկատվում է մի օտարութի հայեացք։ Անօգուտ են համարում յօրինել զրբեր հայերի ժամանակակից կրթութեան համար, որովհետեւ հայերը ընդունակ չեն հասկանալ նրանց։ Եւ այլնս ոչ մի քայլ դէպի ա-

ռաջ։ Որքան անհիմն է այն երկիւզը, որ իրը թէ ժողովրդական դպրութեան երեւան զալուն պէս զրաբարը կը կորչէ, այնքան էլ չարամիտ, անարժան բան է երեւում պահանջները որ հայ ժողովրդուրդը կորստեան մատնվի, որովհետեւ նա հնամաշ, արդէն մեռած ձեերի մէջ ընդունակութիւն չունի հետևելու եւրօպական քաղաքակրթութեան։

«Հայաստանի զիտութիւնը դեռ կրում է իր վրա միջին դարերի կնիքը։ Ծագելով, զարգանալով, ծաղկած զրութեան համնելով հոգեբորականութեան վճռական ազդեցութեան տակ, այդ զիտութիւնը մինչեւ այժմ էլ գեռ եկեղեցականների բացառիկ սեփականութիւնն է կազմում։ Ժողովրդը, իսկապէս, շատ քիչ մասնակցութիւն է ունեցել և շատ քիչ ունի իր գրականութեան ճակատագրի մէջ։ Դա բնական է և ուրիշ կերպ չէ կարող լինել։ Մինչեւ որ ազգը չէ հասել իր մտաւոր չափահասութեան, մինչեւ որ նրա մէջ չեն զարթել ինքնանանաչութիւն, զիտակցութիւն և այն միաքը թէ նա անկողոպաելի իրաւունք ունի իր սեփական լեզուն սրբագործելու, — մինչեւ այդ ժողովրդական կրթութեան զեկը պիտի վարեն եկեղեցու պաշտօնեաները։ Եկեղեցու զիտատօրական ազդեցութիւնից հոգեպէս ազատվելու առաջին ուրախառիթ սկզբնաւորութիւնը մենք արդէն տեսանք

թիւրքաց իշխանութեան տակ գտնվող  
հայերի մէջ \*):

«Մինչդեռ մեր օրերում մարդկային  
մտքի աջողութիւնները, որոնք ձեռք են  
բերվում հոգու և բնութեան շրջանում,  
հազարաւոր ձայներով յայտնագործվում  
են Եւրօպայի ազգերին, մինչդեռ Եւրօ-  
պայում լուսաւորութեան ճառագայթնե-  
րը, մարդկութեան բարեկամների աջա-  
կցութեամբ, մտել են և աւելի ու աւելի  
մտնում են, այսպէս ասած, երկրագործի  
խրճիթը և հասարակութեան բոլոր խա-  
ւերը, հայերը, միասին վերցրած, հազիւ-  
կարող են ցոյց տալ երկու պարբերական  
հրատարակութիւն ժողովրդական լեզուով  
(«Բազմավէպ» և «Արշալոյս Արարատեան»):  
Ժողովրդական գրականութիւն բոլորով  
վին չը կայ: Ուուսահայերի մէջ, որոնք ի-  
րանց աշխարհագրական դիրքով ծածկված

\*.) Նազարեանցը առանձին հաճութեամբ արձանա-  
գրում էր որ թիւրքահայերը ուուսահայերից աւելի առա-  
ջազէմ են, հիմնել են բարեգործական և կրթասիրական  
ընկերութիւններ: Խսկ այստեղ նա նկատի ունի Սկիւտա-  
րի ճեմարանը Կ. Պոլում, ինչպէս նաև այն գալոցական  
հաստատութիւնները, որոնք հիմնվում էին աշխարհա-  
կանների, գլխաւորապէս կրթասէր ընկերութիւնների  
ձեռքով: Նշանաւոր է որ պօլսեցի հայերը դեռ 1830  
թւականից բաց արին օրինութական գպրոցներ. Խսկ քա-  
ռասնական թւականների սկզբում գործում էին գրական  
և կրթական ընկերութիւններ, որոնցից մէկը հասարա-  
կաց գրադարան էլ էր բացել:

են արևմուտքից, ինչպէս նաև հեռացած  
են ուուսաց քաղաքակրթական կենտրօն-  
ներից, գրութիւնը ներկայացնում է ամեն  
մի հոգեսոր շարժման կատարեալ բացա-  
կայութիւն»: Երանք չունեն նոյն խսկ լաւ-  
դպրոց. և սակայն չէ կարելի ասել թէ  
միջոց չունեն, որովհետև շատերը վաճա-  
ռական են և հարուստ: «Բայց ինչ պա-  
կասում է հայերին և ինչ պահանջվում է  
այժմ ամենից շատ—լուսաւոր, փորձառու  
հայեացքի տէր մարդկին են, մարդկի, ո-  
րոնք անկեղծաբար համակրեն իրանց ժո-  
ղովրդի և գարի պահանջներին:

«Հայ սոզգի, որպէս արևելքի ամենազլիսա-  
ւոր քրիստոնեայ մի ազգի կոչումը պատ-  
մութեան մէջ ուրիշ մի բան չէ կարող  
լինել բայց միայն այն, որ ճանաչէ իր  
անցեալը, իմանայ թէ ինչ յարաբերու-  
թիւններ ունի գէպի ներկան և, ընդու-  
նելով իր մէջ Եւրօպական կրթութեան  
ծաղիկները, նորից մշակէ նրանց իր կեր-  
պով և այդպիսով իր խաւերի մէջ ժողո-  
վրդական կեցութեան պայմանները կեան-  
քի հրաւիրէ: Բայց ինչ ճանապարհներով  
մեր գարի հայը պիտի հասնէ իր հնու-  
թեան յիշատակարանների ըմբռնման, երբ  
գրա բանալին կորած է ժամանակի հե-  
ղեղների մէջ: Ի՞նչպէս ժողովրդական գր-  
բականութիւն ծնվի մի տեղ, ուր գեռ  
ընդհանուր լեզու գոյութիւն չունի, ուր  
չը կան հանրամատչելի խօսքեր՝ գաղա-  
փարներ և զգացմունքներ արտայայտելու

համար: Դժուար է երեակայել զարգացում մի ժողովրդի մէջ, որի բանաստեղծը և իմաստասէրը հարկադրված են իրանց հոգու պատկերները սովորական, կենդանի լեզուից մեռած լեզուին փոխադրել, երբ հարկաւոր է մտքից անցնել ձեին»:

Այս պատճառով՝ նազարեանցը առաջարկում է մշակել մի ժողովրդական լեզու, հիմք ընդունելով արարատեանը, իսկ միւս բարբառներից փոխ առնել բոլոր աղնիւ տարրերը: Նա դէմ է այն մտքին թէ պէտք է նախ քերականութիւն կազմել: Քերականութեամբ լեզու չի ստեղծվի. երբ կը կազմակերպվի լեզուն, ապա կը գայ և քերականութիւնը:

Ամենից առաջ հարկաւոր են, իհարկէ, դպրոցներ: Հայերի պատմութեան, աշխարհագրութեան և հնութիւնների վրա պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել. դրանց հետ կը լինեն և ուրիշ զարգացուցիչ առարկաները:

Ուստաստանում հայ դպրոցների համար անպատճառ պարտաւորութիւն պէտք է դարձնել, եւրօպական լեզուների թւում, սլաւոնական-ուստասական լեզուի, Ուստաստանի աշխարհագրութեան և պատմութեան խոր ուստամնափրութիւնը, միայն այս պայմանով կարելի է հոգեոր - բարոյական մերձեցումը Ծուսաստանի և նրա հպատակ հայերի մէջ»:

Դասաւանդութեան լեզուն պիտի լինի պարզ ժողովրդական հայերէնը՝ դաստիարակութեան գործը հեշտացնելու համար:

«Ամեն մի զգացմունք, ամեն մի մտապատկեր, ամեն մի գաղափար, որ ազգային կեղել մէջ գցվում է պատանի հայի հոգու մէջ, կարող է և պարտաւոր է այնտեղ խոր արմատներ տարածել: Լեզուն և գրականութիւնը իսկոյն ծնունդ կառնեն, երբ հայ գրագէտները կը սկսեն գրել կենդանի ներկայի համար, իւրաքանչիւր այն անհատի համար, որ ունենալով առողջ միտք, կարողութիւն ունի կարգալ և հասկանալ որ և է զիրք: Սակայն նկատի առնելով երիտասարդութեան կարիքները, մենք կը կամենայինք որ նախ կազմվի հասկացող մարդկանց մի ընկերութիւն, որ ժողովրդական լեզուով դասազգոեր մշակէր զիտութեան զանազան ծիւղերին վերաբերեալ»:

Բացի դպրոցներից, նազարեանցը անհրաժեշտ է համարում մի պարբերական հրատարակութիւն, «որ ատար իր էջերի մէջ յօդուածներ ընդհանուր պատմութիւնից, աշխարհագրութիւնից և վիճակագրութիւնից (մանաւանդ հայոց և ուստաց), հետաքրքրական տեղեկութիւններ բնագիտութիւնից, նոյնպէս և տեղեկութիւններ հայերի ներկայ զրութեան մասին զանազան պետութիւնների մէջ, եւրօ-

պական աղքերի քաղաքական և եկեղեցական դրութեան մասին, գիւտերի մասին և այն»:

Իր խորհրդածութիւնները նազարեանցը վերջացնում է հետեւել խօսքերով.

«Եյսպէս է մեր կարծիքը ներկայի պահանջների մասին, այն չափազանց կարեր խնդրի մասին, որ դրեւ է ոռւսահայերի առաջ մեր XIX դարի լուսաւոր ողին: Ամեն ինչ, որ գոյութիւն ունի ժամանակի մէջ, մի տեղ գրաւելու և պահպանելու համար, անհրաժեշտորեն պարտաւոր է հետեւել իր դարի շարժման, մասնակցել մարդկութեան աջողութիւններին, անդադար վերածնվել, անդադար կատարելագործել իրան. ապա թէ ոչ, իրեւ հակասութիւն ժամանակակից ոգուն, իրբեմի բան, որ տեղ չունի կեանքի մէջ, նա մանվան պատիժ է արտասանում ինքն իր վրա և վազ թէ ուշ պիտի դառնայ շատակեր ծերունի կռոնոսի անբարբառ զոհը: Եյսպէս է ժամանակի պատղամախօսութիւնը Ռուսաստանի հոգի վրա ապրող հայկացեան սերունդների ապագայի մասին. կամ դէպի առաջ դարի հետ, կամ քարացում և հոգեւոր-բարոյական մահ: Հայ ժողովրդի ազգասէրները, մենք յոյս ունինք,—եթէ սա կենդանի երևակայութեան ցնորդ չէ կամ ազնուութեամբ բըռնկված հոգու պատրանք—ականջ կը դընեն խորհրդաւոր կերպով աղաղակող ժամանակի ձայնին և գործի կը կպչեն, ան-

զրգուելի հաւատ ունենալով Ամենաբարձրեալի օգնութեան վրա և հաստատապէս համոզված լինելով որ սրտազին ողջոյն կը ստանան բարեմիտ, լուսաւորութիւն սիրող, ամեն մի օգտակար ձեռնարկութիւն մեծահոգութեամբ խրախուսող ուռաց կառավարութեան կողմից: Sapienti sat!»:

Ինչպէս տեսնում էք, սա միայն հետազոտութիւն չէ, դիսերտացիա չէ, այլ և գրօշակ, ծրագիր, հրապարակախօսութիւն: Այստեղ նազարեանցը նախ և առաջ մանրամասն ծրագիր էր մշակում իր համար. այստեղ է ամփոփված «Հիւսիսափայլի» ողին, այստեղ ենք տեսնում այն սազմերը, որոնցից կազմվեցան նազարեանցի հրատարակած հայերէն գրքերը, նրա Այրենարանը, «Հանդէս Նոր Հայախօսութեանը»: Վերջապէս այստեղ մեր առջևն է ապագայ հայ հրապարակախօսը իր վերանորոգչական-առաջադիմական գործունէութեան սկզբունքներով: Այստեղ այդ ըստ կը բունքների ամփոփումն է: Ապագայում նազարեանցը միայն պիտի զարգացնէր, լայն կերպով բացատրէր այդ սկզբունքները, պաշտպանէր նրանց իր կրծքով: Այն, ինչ այստեղ խօսում է ժամանակի ոգու, պահանջների, ժողովրդական կրթութեան և գրականութեան մասին, նազարեանցը կրկնել է շատ անդամ,

համարեա մինոյն բառերով։ Այնպէս որ Նազարեանցը դեռ 1846 թւականին «Հիւսիսափայլի» խմբագրի դերումն էր։

Ինչպէս նկատեցիք՝ Նազարեանցի՝ ամբողջ ծրագրի էութիւնը, ծուծը, կորիզը աշխարհաբար լեզուի և գրականութեան դատն է։ Եթէ մենք վերցնենք նրա գրական ամբողջ գործունէութիւնը, ակզերք մինչև վերջ, կը տեսնենք որ այդ երախտաւոր մարդու մատուցած ծառայութիւնների մէջ ամենախոշորը, ամենաթանկագինը, ճիշտ որ, մայրենի լեզուի, մայրենի գրականութեան դատի ողեարգած, տաղանդաւոր պաշտպանութիւնը ու ժողովրդականացումն էր։ Տեսնենք այսեղ թէ ի՞նչ էր աշխարհաբար լեզուի հարցը և ի՞նչ տեղ ունի Նազարեանցը այդ հարցի մէջ։

Եղել են մարդիկ, որոնք, անչափ ողեարգելով Նազարեանցի գործունէութեամբ, ասել են թէ Նազարեանցը ստեղծեց աշխարհաբար լեզուն։ Սխալ և անհիմն է այս դատողութիւնը։ Աշխարհաբար լեզուն միայն մի ստեղծող ունի, և դա հայ ժողովուրդն է։ Նազարեանցից շատ առաջ էլ գոյութիւն ունէր աշխարհաբար լեզուն մեր գրականութեան մէջ։ Կասենք աւելին—Նազարեանցը չէր որ յարուցեց աշխարհաբարի հարցը. նրանից առաջ

կային մեզանում՝ մարդիկ, որոնք պնդում էին թէ գրաբարը մեռած լեզու է, պէտք է զարգացնել աշխարհաբարը։ Ո՞չ. գրաւոր հ ժողովրդական լեզուների հարցը մեզանում գրաբաւոր հարց էր, որ բարգվել ու դժուարացել էր մեր պատմական կեանքի ընթացքում։

Մեր գրականութիւնը սկսվում է հինգերորդ գարից։ Այդ գարում մենք տեսնում ենք մի կանոնաւոր, հարուստ գրական լեզու։ Բայց դա ժողովրդի լեզուն չէ։ Այս լեզուի հետքեր գտնում են նոյն իսկ հինգերորդ գարի գրաբար լեզուի մէջ։ Ժամանակի ընթացքում գրաբարը աւելի և աւելի հեռանում է ազգի ընդհանրութիւնից, անհասկանալի է դառնում նրան։ Ժողովրդական լեզուն աշխատում է բռնել նրա տեղը գրքի մէջ, բայց ի զուր, գրաբարը նուիրագործված էր իբրև եկեղեցական լեզու, գրականութեան միակ տէրերը հօգեսրականներն էին և նրանց էլ պահպանում էին այդ արհեստական դարձած, մեռած լեզուն։ XIII գարից ժողովրդական լեզուն աւելի մեծ ջանքեր է անում։ Որ նուածէ իր իրաւունքները, դառնայ միջնորդ գրքի և ժողովրդի մէջ։ Բայց նրան արհամարհում են, անտես են անում։ Քանի որ տպիտութիւնը, համատարած խաւարը գրա-

կանութեան կատարեալ անկումն էր պատրաստում, կենդանի բարբառը սկսում էր աւելի և զարգացնել իր տիրապետութիւնը և եթէ վերջնականապէս յաղթել իր բախտաւոր ախոյեանին չէր կարողանում, գոնէ աղձատում ու այլանդակում էր նրան իր խառնուրդով: Կարելի էր կարծել թէ վերջ ի վերջոյ գրաբարը կը լուծվի աշխարհաբարի մէջ: Բայց ահա հիմնվում է Միսիթարեան միարանութիւնը, որ փրկում է գրաբար լեզուն: Աշխարհաբարը նորից ընկնում է, նորից ամփոփվում է ժողովրդի մէջ և իր այդ խոնարհ ու ցած դիրքից ականատես է լինում թէ ինչպէս գրաբարը աճում, ծագկում, զարդարվում է: Հին լեզուն յարութիւն առաւ, վերակենդանացաւ, բայց գրանից չը փոխվեց հին պատմական իրողութիւնը, զարձեալ չը կար մեզանում ժողովրդական զրականութիւն, դարձեալ հայերէն զիրքը անհասկանալի էր ընդհանրութեան: Փառահեղ գրաբարը ակամայ ստիպված էր խոստովանել իր անկարողութիւնը: Հարկ էր զիմնել աշխարհաբարին:

Բայց այդ դիմումը չէր նշանակում թէ գրաբարը պէտք է գերեզմանի մէջ թաղվի: Գրաբարը թաղելը մի սոսկալի սրբազնութիւն էր համարվում հին ժամանակներից:

Զը կարողանալով լուծել երկու լեզուների բարդ հարցը կամ աւելի ճիշտ ասոծ՝ անկարող լինելով հասկանալ ժողովրդական զըրականութեան ահազին նշանակութիւնը, մեր նախնիքները միայն պատպէս էին վարվում. գրքի լեզուն գրաբարը պիտի լինի, ոամկօրէնը (աշխարհաբարը) վայրենութիւն: Ե նրան կարելի է տանել միայն իրոք մի անհրաժեշտ չարիք: Իսկ անհրաժեշտ էր այդ չարիքը այն պատճառով, որ շատ անդամ և շատ գէպքերում էր հարկաւոր լինում զիմնել ժողովրդին: Այդ գէպքերում էլ կարելի էր գրել այնպէս, որ ոամիկ ամբոխը հասկանայ: Այսպէս ահա մենք տեսնում ենք բժշկաբաներ, տնտեսական խրատներ, որոնք թարգմանվում կամ գրվում են համարեալ աշխարհաբար լեզուով, որովհետև հասարակ ժողովուրդը պիտի կարդար: Նոյն իսկ եկեղեցին էլ չը նայելով որ գրաբարը դարձել էր կանոնական լեզու, ստիպված էր մի երկուերեք գէպքում տեղի տալ անողոք պահանջին և գործ ածել աշխարհիկ լեզուն: Այսպէս է, օրինակ, այն հարց ու փորձը, որ անում է քահանան պսակի ժամանակ. այսպէս են «գանձ» անունով յայտնի այն ողբերը, որոնք երգվում են գերեզմանի վրա, սգաւորներին լացացնելու համար:

Նոյն այդ հայեացքը մնաց և զրաբարի վերածնութեան ժամանակի Միլիթար Աերաստացին հասկանում էր որ զրաբարով ժողովուրդը դաստիարակել չի լինի. ուստի նա կազմեց և աշխարհաբարի քերականութիւն, զրեց իր «Քրիստոնէականը» աշխարհաբար լեզուով: Նրա աշակերտներն էլ մեզք չեին համարում յաճախ թողնել հարուստ զրաբարը և գործ ածել իրանց զրքերի մէջ խեղձու աղքատ աշխարհաբարը: Այդ փորձերը վրդովմունք չեին պատճառում հայ զիտնականներին, որովհետեւ աշխարհաբարը նպատակ չէր, այլ միայն միջոց: Ժողովրդին պէտք էր զրքեր տալ հասկանալի լեզուով. և հայ գրողներին մնում էր ակամայ գործ ածել ժողովի լեզուն իրրեւ միջոց զրքերը սիրել տալու, նոյնպէս և իրրեւ միջոց ժողովուրդը ունի զրաբարը տանելու: Եւ աշխարհաբարը, ծառայելով այդպիսի մի երկրորդական նպատակի, չեր մշակվում, չեր հարստացնվում, այլ վերցնվում էր այնպէս, ինչպէս կար ժողովրդի մէջ: Աւելորդ էր մշակելը, նոյն իսկ վնասակար. չը որ այդ գէպքում զրաբարը պիտի թուլանար, գուցէ սասակի վըտանգվէր:

Սյսպէս էին վճռել Միլիթարեանները. իսկ նրանց վճիռը արդար և պարտաւորական էր

ամբողջ ազգի համար: Վենետիկում XIX դարի սկզբում բաւական թւով աշխարհաբար զրքեր լոյս տեսան: Երբ հարկաւոր եղաւ պարբերական հրատարակութիւններ ըսկան, Միլիթարեանները, առանց երկար մըտածելու, ընտրեցին աշխարհաբար լեզուն: Բայց նպատակը մի և նոյնն էր: Ահա ինչ էր զրում յայտնի զրագէտ և ուսումնական Հ. Խոճիճեանը «Եղանակ Բիւզանդեան» պարբերական հրատարակութեան մէջ.

«Որովհետեւ մէկ մեծ պատճառն ալ, որ կարդալէն ետ կը կենայ մեր ազգը՝ է զրբարառ լեզուն չի հասկընալը, հարկ է վարպետներուն մէկդիւրին (խօլայ) եղանակ մը կերպմը գտնալու. հարկէն ծնողքներուն՝ որ իրենց տղոցը վրայ սէր (հավէս) ցըցնեն զրաբար լեզուն սորվեցընելու, ու անչափ ատեն թողան դպրատան մէջ, որչափ որ պէտք է մէկ տղի մը: Ինչ զարմանակի բան է, կը տեսնանք ժողովրդեան մէջ որ ուզողը մէկ տարվան մէջ երկու տարվան մէջ հոռմերէն կամ ֆունկերէն խօսիլ կը սորվին. իսկ մեր զրաբար լեզուն միայն հասկընալը հազիւ մէկ քանի հոգին կրնան սորվիլ ան ալ մէկ քանի տարվան մէջ: Ասոր պատճառը աս է որ՝ լեզու մը սորվիլ կը լայ մէջը մտնելով, չի նայելով որ մէկէն աղէկը սորվիմ, սիսալ չի բանեցնեմ: Մեր զրաբար լեզուն զրեր են մտվընին որ գժար է սորվիլ, անկէց յոյ-

սերնին կարելով սէր չեն ձգէր սորվելու, սորվօղներուն քով սէր չըլլալով, սորվեցնողներն ալ սէր չեն ունենար սորվեցնելու, անով գրաբառ լեզուն մնացեր է հեռու օտար լեզու մը, թէպէտ և է մեր լեզու Հոռոմը առաջ իր լեզուն կը սորվի, եաքը տաճկերէն և փոէնկերէն, մեր ազգը ունի ջանք ամմէն լեզու սորվելու, միայն իրեն լեզուի վրայ հոդ չունի: Ո՞րչափ ամօթ է որ օտար ազգ հիմա սկսաւ հայերէն սորվիլ, իսկ մեր ազգը ձգեր է իր լեզուն, օտարինը կը սորվի... Հիմակվան ատենը մեր ազգին մէջ միայն գրաբառ հասկընալ պէտք է՝ որ գրքերը հասկընան»...

Միւս նշանաւոր Մխիթարեան հայագէտը, Հ. Մկրտիչ Աւգերեան, զրում էր 1842-ին իր «Դեղ կենաց» գրքի վերջաբանում:

«Անանկ է նէ՝ մեր ազգին մէջն որ կուղենք Աստուծով ծաղկեցնել զներքին և զարտաքին զիտութիւնն, է՞ն առաջ պիտո՞ր ջանանք գրագիտութեան գուոը բանալ. գուոը զոց է նէ, ինչով կը բացուի. յայտ է թէ բալլիքով. զրոց զիտութեան բալլիքը նըն է. յայտ է թէ զրոց լեզուն. որ է ասել զրաբառ կամ զրաբարբառ... Եւ սակայն ցաւալի փորձը՝ ցաւին կէօրէ դեղ տալը հարկաւոր աւենալով՝ հարկաւորեց մեզ որ շատ բան չէ թէ միայն պարզ և զիւրիմաց գրաբառ ընենք, հապս նաև աշխարհաբառ գրքեր ալ հա-

նենք... Բան հասկըցող մարդը կը հասկընայ՝ որ ժողովուրդին հալը հասկընալէն կուգայ սանկ բան ընելը. բայց մէյմ ալ ինձի հարցընելու ըլլան նէ, ուրիշ բան ալ կլսեն. աղէկ, աղէկ, ամմա ինչուան երրազգերնիս անզրագէտ մնայ ու մեզ ասանկ բանի պարտաւորէ, և չի թողու որ աւելի առաջ երթայ ամեն զիտութիւն և իմաստութիւն ազգին մէջ»:

Եւ այսպէս, Մխիթարեանները ստիպված էին զրել աշխարհաբար: Գրաբարի այնքան նուրբ, զեզեցիկ մշակումը օգուտ չը բերեց. Ժողովուրդը չը զիտեր լեզուն, մնում էր զանգատվել այս իրողութեան վրա և ճարահատեալ աշխարհաբար գրել: Մինչդեռ հայոց գրականութեան առաջնակարգ ներկայացուցիչները այսպէս էին անում, Զմիւռնիայում 1839-ին բողոքական միսիօնարները հիմնեցին «Շտեմարան Պիտանի Գիտելեաց» ամսագիրը, որի առաջին համարում յայտարարում էին.

«Մեր Շտեմարանը աշխարհաբառ լեզուաւ պիտի ըլլայ: Գրաբառ լեզուին զերազանց ճոխութեանը և զեղեցկութեանը վրայ մենք տգէտ չենք: Բայց քանի որ ան ազնիւ լեզուն ազգին մեծ մասը չի հասկընար, և քանի որ ճշմարիտ մարդասիրութիւնը միշտ շատերուն օգուտին կը նայի՝ քան թէ քիչերուն բաղձանքը կա-

տարելու, արժան դատեցինք որ մեր  
Շտեմարանը ռամկօրէն ըլլայ, Ատելի է մե-  
զի գիտութիւնը կղպափի տակ դնել, որ  
աղքածը և տգէտը չի կրնայ առնել ա-  
նոր համը: Ասիկա ջուրը ու օդը անոնց-  
մէ արգիլել է: Սակայն չենք ըսեր թէ գր-  
րաբառը բոլորովին հալածական պիտի  
ընենք մեր Շտեմարանէն»:

Բողոքականների այս գործը ազնիւ մըր-  
ցութիւն առաջացրեց: 1840 թւականին  
Զմիւռնիայի հայ երիտասարդութիւնը սկսեց  
հրատարակել «Արշալոյս Արարատեան» լրա-  
գիրը, որ նոյնպէս աշխարհաբար էր, բայց և  
գրաբառը բոլորովին հալածական չէր անում:  
Իսկ 1843-ին սկսվեց Վենետիկում «Բազմա-  
վէպի» հրատարակութիւնը: Գաբրիէլ վար-  
դապետ Այվազօվսկին էր խմբագիրը և նա  
մի լաւ մշակված, գեղեցիկ արևմտեան աշ-  
խարհաբար մտցրեց այդ ամսագրի մէջ: Բայց  
ինչ էր դա նշանակում: Այվազօվսկին բաց-  
արձակ կերպով յայտնում էր որ պէտք է  
աշխարհաբարը հետդիետէ մշակել, մօտեցնել  
գրաբարին և ձուլել նրա հետ:

«Մեր միաքը—ասում է նա <sup>ոչ</sup> միայն  
գրաբառ լեզունիս ետ ձգել, կամ աշխար-  
հաբառը գրոց լեզու դարձընել չէ, հապա-  
ընդհակառակն՝ գրաբառը գիւրաւ ծաղ-  
կեցընելուն հնարքը գտնել ու սորվե-

ցնել է»: Ի վերջոյ խորհուրդ է տալիս  
«ուսմիներու և տղոց համար պէտք և-  
զած գրքերէն զատ՝ ուրիշ ամեն գիրք մեր  
բուն հայրենի ազնիւ և պատուական լեզ-  
ուովը շարագրել, որ է գրաբառը» \*):

Մեր բերած այս կտորների մէջ երեսում  
է ազգի այն ժամանակվայ ընդհանուր կար-  
ծիքը աշխարհաբարի մասին: Աշխարհաբար  
գրելը այն ժամանակ յանցանք չէր համար-  
վում, ինչպէս կարծում են ոմանք մեզանում:  
Ընդհակառակն, նա թոյլատրվում էր, բայց  
մի յայտնի նպատակով: Հէնց այդ էր պատ-  
ճառը, որ երբ 1830-ական և 1840-ական  
թւականներին Մօսկվայում լոյս տեսան մի  
շարք կրօնական գրքոյներ աշխարհաբար  
լեզուով, ոչ ոք աղմուկ ու աղաղակ չը բարձ-  
րացրեց: Տպվեց մի մեծ աշխատութիւն քրիս-  
տոնէական և մահմեդական կրօնների մա-  
սին, տպվեց աւետարանի թարգմանութիւ-  
նը, տպվեցին բրօշիւրներ, և ամենքն էլ ըն-  
դունելութիւն գտան ժողովրդի մէջ:

Եթէ մի երկու քայլ էլ առաջ անցնենք,  
կը տեսնենք որ քառամնական թւականների  
վերջերում և յիսունականների սկզբում տ-  
ուաջ է գալիս աշխարհաբար բանաստեղծու-

թիւնը. Գամառ-Քաթիպան սկսում է երդել,  
նրա հայրը «Արարատ» լրագիրն է հրատա-  
րակում մաքուր աշխարհաբարով։ Դարձեալ  
չը կայ կոիւ ու դիմագրութիւն։ Ինչու Որով-  
հետև գրաբարը շարունակում էր մեծարվել,  
ոչ ոք նրա տիրապետութեան դէմ չէր։ Ռու-  
սահայերի մէջ էլ այն կարծիքն էր տիրում  
որ պէտք է աշխարհաբարը կամաց-կամաց  
մօտեցնել գրաբարին։ Նոյն իսկ Խաչատուր  
Արովեանցն էլ երազում էր մի այսպիսի ա-  
պարայ. նա երանի էր տալիս այն ժամա-  
նակին, երբ «մեր աղզը քիչ-քիչ կարողանայ  
էս կորած գանձը գտնել»։ Նա սկսում է իր  
«Զանգին» աշխարհաբարով և վերջացնում  
է գրաբարով։ Կարծողներ կան թէ նա այդպէս  
արաւ, որպէտքի կարողանայ աշակերտներին  
աստիճանաբար մօտեցնել գրաբարին <sup>\*)</sup>։

Այսպէս ահա տեսնում ենք որ շատերն  
էին գրում աշխարհաբարով և ոչինչ մնդք  
դործած չէին համարվում։ Իսկ Նազարեանցը  
նոյն աշխարհաբարի պատճառով գառնում  
է թշնամի, յարուցանում է իր դէմ հալա-  
ծանքներ, ենթարկվում է ամենախիստ յար-  
ձակումների։

Ինչիցն էր սա;

<sup>\*)</sup> «Կոռնկ», 1861, հլ. 545։

Եւրօպական մաքին, ազգերի պատմու-  
թեան լաւ ծանօթ այս գործիչը շատ լաւ  
գիտէր որ գրաբարը մեռած է և երբէք այլիս  
յարութիւն չի առնի, որքան էլ աշխատեն  
նրան կոկել և զարգարել։ Որ նա անկարող  
է գործածական լեզու գառնալ—դա մի ան-  
հասկանալի քմահաճովք չէ, մի հանելուկ չէ,  
այլ մի բնական շատ հասարակ երեսյթ։ Այդ-  
պէս է եղել բոլոր ազգերի մէջ, այդպէս պի-  
տի լինի և հայերի մէջ։ Լեզուն վերանորոգ-  
վում է, լեզուն պիտի կենցանանայ ժամա-  
նակի պահանջներին համաձայն. սա նոյնքան  
բնական է և օրինաւոր, որքան այն, ինչ  
կատարվում է երկնքի տակ՝ բնութեան սահ-  
մանած օրէնքներով։ —Նազարեանցը ունէր  
իր առջև համանման երեսյթների մի պմբողջ  
շարան։ Ահա յունական լեզուն. —նա այլեւ  
Հռմերոսի և Ստրաբոնի լեզուն չէ։ Ահա լա-  
տիներէնը. քանի նոր լեզուներ են ծնվել  
նրանից։ Հայերի վիճակակից մի քանի ազ-  
գութիւններ—սերերը, չէիները իրանց վե-  
րածնութեան հէնց առաջին օրերում զգա-  
ցին որ պէտք է դէն գնել հին, անհասկա-  
նալի լեզուն, զործ ածել ժողովրդականը։ Այդ  
հիմքի վրա վերածնվեց ուսւաց գրականու-  
թիւնը։ Նոյն իսկ այնպիսի երկրներում, ուր  
վերածնութեան հարց չը կար, լեզուի վերա-

նորոգումը դարձեալ պահանջ էր։ Ապացոյց՝ ֆրանսիական լեզուն XVII դարում, յղկված, մշակված, նրբացրած էր նա, մի չատ փարթամ ծաղիկ էր, բայց անհոտ ծաղիկ, որովհետեւ բուցրած էր անքնական, արհեստական կերպով։ Եւ Մալհերը ասում էր թէ գեղեցիկ, արտայացտիչ լեզու սովորելու համար չը պէտք է դիմել ֆրանսիական Ակադեմիային, այլ պէտք է գնալ առևտրական հրապարակները և լսել ժողովրդի բարբառը։ Եւ ֆրանսիական լեզուն էլ ապագայում վերանորոգվեց ժողովրդական տարրերի օգնութեամբ։

Հարց էր, հայերը պիտի բացառութիւն կազմէին։ Նազարեանցը վրդովվում էր, լըսելով իր շուրջը՝ «այս»։ Նա պահանջում էր որ գրաբարը համարվի ընդ միշտ գերեզման մտած։ Ոչ միայն չէ կարելի նորից հանել գերեզմանից այդ թանկագին դիակը, այլ և աւելորդ է, զուր ժամավաճառութիւն է։ Աշխարհաբարը այդգիտակիստրուկը չը պիտի լինի, այլ անկախ, կենտրոնի լեզու. առանցնրան չը կայ առաջադիմութիւն, չը կայ վերածնութիւն. ընդհակառակն, գրաբարը պիտի ծառայէ նրան, պիտի տայնրան իր հարստութիւնները և ինչը մի կողմ քաշվէ իրեւ հնադարեան հանդուցեալ։ Նոր ժամանակը նոր պահանջներ է բե-

րել. պահանջվում է ժողովրդական լեզու՝ գիտութիւնները, առաջադիմութեան լոյսը ժողովրդականացնելու համար։ Քաղաքակրթունը չէ ներում որ ազգերը կանգ առնեն, անշարժանան։ Ով չէ քայլում, նա պիտի յետ մնայ, մահանայ։ Այդ ստիպողական անողոք պահանջը դրված է և հայերի առաջ. կամ դէպի առաջ, դէպի կենդանութիւն, կամ քարցում։ Դէպի առաջ տանողական աշխարհաբարն է. գրաբարը քարացում է։

Ահա Նազարեանցի իսկական գերը աշխարհաբարի հարցի մէջ։ Ոչ ոք մինչեւ այդ չէր խօսել այդպէս։ Դարերի ընթացքում ժողովրդական լեզուն լոիկ-մնջիկ այդ էր ասում. նա բաղխում էր խուցերի դռները, խնդրում էր իրան ներս ընդունել։ Բայց նըրան չէին լսում, մանաւանդ չէին հասկանում։ Եթէ լինէին հասկացողներ, եթէ աշխարհիկ լեզուն իր իրաւունքները ստացած լինէր գէթ Միսիթար Սեբաստացու ժամանակից, հայի մտաւոր աշխարհը այն չէր լինի, ինչ էր XIX դարի սկզբում, հայն էլ կունենար ընդհանուրից սիրված հանրամատչելի, կոկ լեզու, այդ լեզուով իր ազգային հանձարը կարտայայտէր, կը դաստիարակվէր։ Բայց ազգերի կեանքի մէջ, ինչպէս ասում է Նազարեանցը, թոփչըներ չեն լինում։ Պէտք

էր սպասել երկար ժամանակ, մինչև որ դուրս կը գան մարդիկ, որոնք կը սապալեն աշխարհաբարի շուրջը կուտփած և նրան խեղդող նախապաշտամունքները, լայն ճանապարհ կը հարթեն նրա առջև: Այդպիսի մարդկանցից առաջինը մեզանում Ստեփանոս Նազարեանցըն էր:

Նրա ուժեղ, սուր ծակող ձայնը մի ցընցող նորութիւն էր այն բազմութեան համար, որ խորապէս համոզված էր թէ զրաբարից պէտք էր սպասել և գիտութիւն, և լոյս, թէ աշխարհաբարը մի ժամանակաւոր, անցողական բան է, մի անկոչ ու գոեհիկ հիւր, որին կարելի է մի-մի թոյլ տալ զրեի մէջ մտնել, երբ հարկաւոր է ստորին, ուամիկ ամբոխի հետ խօսել: Բնական էր որ ցընցող նորութիւնը համարվէր մի անլուր սըրբապղծութիւն, մի սոսկալի հայհոյանք: Այդպէս էլ եղաւ:

Իր այդ դիսերտացիայի համար Նազարեանցը ստացաւ հայ-պարսկական դպրութեան մագիստրոսի գիտնական աստիճանը: Գրուածքը թէն ոռուերէն լեզուով էր և լոյս տեսաւ փոքր քանակութեամբ, բայց վրդովմունք և զայրոյթ պատճառեց հայ «գիտնականներին»: Գիտնական անունով այն ժամանակ, ինչպէս յայտնի է, պատւում էին նրանց,

որոնք լաւ գիտէին զրաբար լեզուն ու զրականութիւնը, ուսուցանում և զրում էին խրթին լեզուով: Նազարեանցի հակառակորդներից մէկը մի առանձին հապարտութեամբ շարում է այն գիտնականների անունները, որոնք ոսւսահայերի պարծանքն էին: Դրանք են. Սարգիս և լիսկոպոս Զալալեանց, Մակր Մսերեանց, Ստեփանոս քահանայ Մանդինեանց, Գրիգոր քահանայ Տէր-Աւագեանց (շուշեցի), Աբէլ վարդապետ, Յակոբ Կարինեանց և այլն \*):

Այն խիստ լեզուն, որ գործ էր ածել Նազարեանցը հայկական գիտնականութեան, նրա պաշտած կուռքի և զրաբար զրականութեան դէմ, բորբոքեց հին սերունդը: Նազարեանցի գլուխն թափվեցան յանդիմանութիւններ: Դժգոհ էին ամենքը, դժգոհ էր նոյն իսկ Ներսէս կաթողիկոսը \*\*): Մի վարդապետ և մի աշխարհական պատրաստվում են գուրս գալ Նազարեանցի դէմ, ցոյց առաջ նրա սխալները և սաստել որ նա այլ ևս չը վստահանայ այդպիսի ձեռնարկութիւն ըսկել» \*\*\*), Երևում է, որ Նազարեանցը իր բա-

\*) Արարատեան—«Ախալանք գրոցն Վարդապետացն Կրօնի», Թիֆլիս, 1858, եր. 12:

\*\*) «Ճահիսաթուն. կենսագր.» եր. 197:

\*\*\*) Արարատեանց—«Դիմագ.», Թիֆ., 1858, եր. 21:

բեկամների նամակներից իմանում է թէ ինչ  
ընդունելութեան է արժանացել իր գործը,  
ատամների ինչ կրծառց է պատճառել: Եւ  
ահա 1847 թւի փետրվարի 23-ից Յովհան-  
նէս եպիսկոպոս Շահխաթունեանցին գրած  
իր մի նամակում նա թափում է իր սրտի  
ամրող թոյնը.

«Թող—ասոմ է—պատուական Հայրա-  
պետը (Ներսէս) զատապարտէ ինձ որքան  
կամենում է: Օտարների բարերարու-  
թեամբ ես ուսում ստացայ օտար աշ-  
խարհում. և այժմ էլ իմ երեսի քրտին-  
քով վարում եմ իմ պաշտօնը և իմ ըն-  
տանիքի հետ կերակրվում եմ ուսաց  
կայսրի դրան մօտ. հայերին ես չեմ կա-  
րուում, և հայերը անկարող են իմ դա-  
տաւորը լինել. այլ ինչ կամենում էի անել  
և կամենում էի անձնուրաց հայրենասիւ-  
րութեամբ, ոչինչի տեղ զնելով իմ հայ-  
րենիքի անպիտան վարմունքը դէպի ինձ,  
կարող եմ և ջանել, որովհետեւ անամնա-  
միտ մարդիկ, խափաններով իմ բոլոր քայ-  
լերը, չեն թողնում ինձ առաջ զնալ: Կաշ-  
խատեմ եւրօպացիների համար, կը գրեմ  
լատինական, գերմանական, ֆրանսիական  
և անգլիական լեզուներով՝ այս ազգերի  
համար, որոնք հայերից լաւ գիտեն պատ-  
ռել հայկական գլուխութիւնը»:

Դարձեալ նրան դառնացնում է «մարդա-  
րէն իր գաւառում պատիւ չունի» իրակա-

նութիւնը: Բայց այն խօսքերը թէ նա այլ  
և չի աշխատի հայերի համար, լոկ վրդով-  
ված սրտի մի բօպէական բռնկում էին: Նա  
պիտի աշխատէր, այդպիսի մարդիկ չեն կա-  
րող լուռ ու մունջ մնալ, չաշխատել: Այս  
բանը երեսում է հէնց նրանից, որ միենուն  
1847-ին նա համաձայնութիւն է տալիս Ա-  
րովեանցին զնալ Թիֆլիս, ուր ինքը, Արով-  
եանցն էլ, պիտի գար երեանից՝ միասին զոր-  
ծելու «ազգօգուտ նպատակով»: Եւ եթէ այդ  
մտադրութիւնը չաջողվեց, պատճառն այն  
էր, որ Արովեանցը հարկադրված է լինում  
երեան վերադառնալ Թիֆլիսից, չը կարողա-  
նալով, խօլերայի պատճառով, չարունակել  
իր ձանապարհորդութիւնը դէպի Պետերբուրգ:  
Իսկ յաջորդ տարին Արովեանցը անհետ կոր-  
չում է:

Հետաքրքրական պիտի լինէր տեսնել եր-  
կու վաղեմի բարեկամներին միասին գործելիս:  
Երկուսն էլ նոյն զաղափարով տողորված,  
բայց տարբեր կերպով գործելիս,—ինչպէս  
պիտի միարանվէին: Արովեանցը քնքշասիրտ,  
լացող բանաստեղծ էր: Մինչև իսկ մայրենի  
լեզուի անհրաժեշտութիւնը ցոյց տալու համար  
նա աղաջում պազատում էր նորահաս երի-  
տասարդներին, մեռնում էր նրանց անունին,  
դուրբան էր զնում նրանց արեին: Նա զի-

տէր որ իր աշխարհաբար զբուածքների համար իրան պիտի անուանեն տղէտ, բայց յանձն էր առնում այդ նախատինքը ի սէր ժողովրդի։ Մինչդեռ Նազարեանցը սառն, անողոք պահանջող էր, զինված խիստ դատապարտութիւններով, սուր սլաքներով։ Նա ազացուցանում էր որ տղիտութիւնը զբարամոլութիւնն է և ոչ թէ աշխարհաբար զրելք։ Իբրև մի հմուտ, հասկացող բժիշկ, նա առանց հաճոյաբանութիւնների ցոյց էր տալիս հիւանդութիւնը և յայտարարում էր թէ փրկութիւնը դանակի և խիստ դեղերի մէջ է...

## III

Նոր դիւերտացիա։—Փիրդուսիի եւ պարսկական բանասկեղծութեան ուսումնասիրուրիւնը։—Պրօֆէկուօրական պաշօն Լազարեան ճեմարանում։—«Փորձական չունի»։—«Վարդապետարան Կոնի»։—«Առաջին հոգեղէն կերակուր»։—«Հանդէս նոր Հայախօսութեան»։—«Գիւլյան»։—«Պաշոս եւ Վիրդինիա»։

—○—

Հայկական գրականութեան նուիրված ուսումնասիրութիւնից յետոյ Նազարեանցը ըսկեց պատրաստել մի նոր դիսերտացիա՝ արևելեան լեզուների գոկտօրի աստիճան ըստանալու համար։ Դիսերտացիայի պաշտանութիւնը տեղի ունեցաւ 1849 թւի սկզբում և Նազարեանցը ստացաւ գոկտօրի աստիճան։ Իսկ դիսերտացիան տպվեց Կազանում նոյն թւին։

Եյս անգամ Նազարեանցը իր ուսումնասիրութեան առարկան էր գարձրել հայերի դրացի, հայնրի վրա գարերի ընթացքում ահազին ազդեցութիւն արած պարսիկների

զրականութիւնը։ Նա վերցրել էր միայն պարսկական բանաստեղծութիւնը. զիսաւոր նիւթն էր աշխարհանոչակ Ֆիրդուսին և նրա անմահ «Շահ-Նամին»։ Բայց այդ առիթովնա տալիս էր և պարսկական բանաստեղծութեան համառօտ պատմութիւնը ամենահին, մաղդեղական ժամանակներից մինչև XV դարի վերջը<sup>\*)</sup>:

Մի կողմ թողնելով այդ ուսումնասիրութեան բովանդակութիւնը, որ ինքն ըստ ինքեան հետաքրքրական է իրրե մի անձանօթ զրականութեան պատմութիւն, մենք, Նազարեանցի աշխարհայեցքները պարզելու համար, երկու խօսք կասենք նրա ներածութեան մասին։ Այդտեղ հեղինակը փառարանում է XIX դարի լայն մարդկայնական ոգին։ Նա ասում է թէ այժմ այլ ևս այն ժամանակը չէ, երբ համաշխարհային պատմութիւնը արհամարհում, անտես էր անում եւրոպական աշխարհից գուրս գտնվող ազգերը, կարծես թէ դրանք գիտութեան ուշադրութեան անարժան բաներ են, մարդկութեան կորած գաւակներ։ Գիտութիւնը ամբողջ

<sup>\*)</sup> Ահա այդ աշխատութեան վերնագիրը „Աբուլ-Կասум Ֆердусի Տուսկի, творецъ книги царей, известный подъ названиемъ Шахъ-Намэ“.

մարդկութեան է պատկանում և մարդկային բոլոր ցեղերը պիտի տեղ ունենան նրա մէջ, դրաւեն նրա ուշադրութիւնը։ «Արևելիան քաղաքակարթութեան անսահման գոյնդգոյն» պատկերներից մէկը այդ համամարդկային ոգուն իր կարողութեան չափով ներկայացնելու համար էլ Նազարեանցը գրել է իր այդ աշխատութիւնը։

1849 թւականի փետրվարի 23-ին գրած իր մի նամակով Նազարեանցը դիմում է Խաչատուր Լազարեանին, հաւատացած լինելով որ նա հետաքրքրվում է իր, Նազարեանցի, ցոյց տուած առաջադիմութիւններով։ Այդտեղ նա պատմում է թէ ինչպէս ինքը պաշտպանեց իր գիտերտացիան, ովքեր էին պաշտօնական ընդդիմախօսները, ինչպէս համալսարանը վճռեց յատկացնել նրան գոկտորական աստիճանը, որ գիտնական ամենաբարձրը աստիճանն է։ Այսուհետեւ նա կարող էր պրօֆէսօրի պաշտօն ստանալ։ Նազարեանցը գանգատվում է որ իրան առհասարակ առաջ չեն քաշում. և այդ բանի վրա նա չէ էլ զարմանում, քանի որ հայերն էլ սառն են դէպի իրանց ուսումնականները։ «Իմ կամքն ու խորհուրդները լաւ յայտնի են իմաստուն իշխանիդ—ասում է Նազարեանցը.՝ բայց ձեր կամքն ու խորհուրդները ինձ ան-

ծանօթ են և տարակուսական են մնում մինչև այսօր։ Բայց ես կրկնում եմ այստեղ. մեր ազգի շինութիւնը և կործանումը քաջափայլ իշխանիդ կամքից և խոհականութիւնից է կախված. վարձկանների ձեռքը, օտարների ձեռքը, որոնց սիրտն ու միտքը միայն ձեր հայկական արծաթի վրա են մեխված, չը պիտի շինեն հայի տունը, այլ արժանաւոր և սրտացաւ հայերի ձեռքը, ես խօսում եմ այն հայերի մասին, որոնք եւրօպայապէս կրթված են և հայապէս զգում են»։

Պարզ է այս ակնարկութիւնների միտքը։ Նազարեանցը նորից փորձում էր պաշտօն ստանալ Լազարեան ճեմարանում։ Այս անգամ նա աջողութիւն է գտնում։ Նոյն 1849-ի ամառը Նազարեանցը, իր ընտանիքը ուղարկելով Դորպատ, կնոջ ազգականների մօտ, ինքը գնում է Պետերբուրգ, ուր ապրում էր Խաչատոր Լազարեանը։ Այդտեղ նա նորից սկսում է աշխատել որ տեղ ստանայ Լազարեան ճեմարանում։ Վերադառնալով Մօսկվա, նա իջնում է Լազարեանների տանը և սիրալիր հիւրասիրութիւն է դանում այդտեղ։ Խաչատոր Լազարեանը համաձայնվում է տալ նրան պարսիկ և արաբական գաղրութեան դասերը, ինչպէս նաև լատիններէնը, նշանակելով տարեկան ոռժիկ 1360 բուրլի։

Նազարեանցը ուրախութեամբ է ընդունում այդ առաջարկութիւնը։ Կազանի կեանքին նա չը սովորեց վեց տարվայ ընթացքում. ամենազլիսաւոր հրապոյրը, որ ձգում էր նրան Մօսկվա, այն էր, որ այդտեղ կար հայկական շրջան։ Հասկանալի է որ այս հըքապոյրի գիմաց ոչինչ էր ոռձկի պակասութիւնը. Նազարեանցը յոյս ունէր թէ պակասը կը լրացնէ կողմանակի միջոցներից։ Ո՞րպիսի քաղցր տպաւորութիւն է նա ստանում, տեսնելով իր արիւնակից եղբայրների պայծառ և ուրախ դէմքերը։ Նա ինքն էլ ուրախանում է մանկական անկեղծութեամբ և գրում է. «Այժմ ատելութիւնը թող վերանայ և մեր մէջ տարածվի սիրոյ և հայրենասիրութեան ոգին. այսպէս և ոչ թէ մի ուրիշ կերպով մեր խոցոտված ազգը գարման ու գեղ կը գտնէ իր համար»։ Դեռ վարդագոյն էր իրականութիւնը այդ իդէալիստ մարդու համար։ Երկար չէր տեի և նա կը տեսնէր որ իրան շրջապատզներից շատերը երես պիտի դարձնեն իրանից։

Բայց ինչ էլ լինի, Նազարեանցի կեանքի մէջ տեղի ունեցաւ մեծ փոփոխութիւնը, նա պրօֆէսօրի պաշտօնով տեղափոխվեց Մօսկվա և այստեղ կարող էր աշխատել հայերի համար։ Թէ ինչպէս ոգեսրիչ ազգեցութիւն

ունեցաւ նրա վրա այդ տեղափոխութիւնը, երեսում է հետեւեալ հանգամանքից:

Դեռ 1847-ին նա սրատրաստել էր մի զբուածք հողերանութեան մասին: Դառնացած այն վրա, նոյն իսկ թշնամական ընդունելութիւնից, որ վատ նրա հայկական գրականութեան պատմութիւնը, նա ուղարկեց իր այդ աշխատութիւնը Շահսաթոնեան և Կոլիսկոպոսին իրեն նոռէր, ափսոսալով որ այդ բանը գրել է հայերի համար: Սակայն Մօսկվայում նա անհրաժեշտ պէտք է զգում գրել այդ իսկ հայերի համար, ուսափ հարկաւոր է համարում հրատարակել ամենից առաջ այդ իսկ «Հողերանութիւնը», աւելացնելով մի ընդարձակ առաջարան: Այդ առաջարանն աւելի խիստ էր քան կազմանում հրատարակած ոռուսերէն զիրքը. նոյն ցաւեցնող հարցերն էին լեզուի, ոոր զրականութեան, առաջադիմութեան մասին:

Փորձով զիտէր Նազարեանցը, թէ ինչ արամագրութիւն է տիրում հայ զիտունների մէջ իր այդ հայեացքների վերաբերմամբ, ուստի միջոցներ է ձեռք առնում, որ այդ աշխատութիւնը կարելի լինի անփոփոխ հրատարակել: Տպագրելու թոյլտութիւն պէտք էր ստանալ հայոց թեմական առաջնորդից: Նազարեանցը ուղարկում է ձեռագիրը Պե-

տերբուրդ, այնտեղի հոգեսոր կառավարութեան գլխաւոր Եփրեմ վարդապետին, որ իր բարեկամն էր և ինդքսում է նրա հոգացողութիւնը «Թէի, ասում է նա, խնդիրքի և պաղասանքի տեղ չը կայ այնտեղ, ուր խօսում է անիւաչառ արդարութեան բերանը, բայց մեր հայերի մէջ միշտ անդուրեկան նն արդարախօսի խօսքերը, նախամեծար պաշտվում և վարձատրվում են կեղծաւորութիւնը, ստախօսութիւնը և շողաքարթութիւնը, մինչդեռ արդարախօս ու ճշմարիտ ազգասէրը ոչ միայն անվարձ է մնում, այլ և բամբասվելով, հալածվելով և անարգվելով դատապարտվում է»: Ուրեմն և հարկաւոր է բարեկամների պաշտապանութիւնը, որ ճշմարտութիւնը գոնէ հրապարակ գուրս գայ, որպէս զի ընթերցողներին մնայ նրան ընդունելը կամ չընդունելը: «Ինչ խօսել եմ առաջարանի մէջ, մերայիններից շատերի սուտ անձնասիրութիւնը պիտի խոցոտէ — շարունակում է Նազարեանցը նոյն նամակի մէջ. — բայց մեր խիզճը անարատ է Ասածւծու և մարդկանց առջև. ինչ ասել եմ, ազգը սիրելով և նրա բարին ցանկալով եմ ասել և ոչ թէ թշնամի լինելով նրան»:

Հենց այդ իսկ առաջարանը փրկելու համար էր, որ Նազարեանցը իր ձեռագիրը ու-

դարկեց Խաչատուր Լազարեանցին, ինդրելով նրա աջակցութիւնը։ Այդ իսկ պատճառով էր, երեխ, որ գիրքը նուիրված էր Լազարեանի փոքրիկ որդի Յովհաննէսին, Լազարեանների վերջին ժառանգին, որ վախճանվել էր մանուկ հասակում, սոսկալի վիշտ և յուսահատութիւն պատճառելով ծրնողներին։ Լազարեանի անունը, վախճանված մանուկի յիշատակին նուիրված ուղերձը, որ դրել էր Նազարեանցը իր գրքի սկզբում, ապահովութիւն էին որ աշխատութիւնը հոգեոր իշխանութեան գրաքննութեան կողմից վտանգի չէր ենթարկվի։ Գլխաւորը, իհարկէ, բուն «Հոգեբանութիւնը» չէր, այլ առաջարանը։ Ինքը Նազարեանցն էլ խոստովանում է այդ։

Արգելվներ չեն լինում, զիրքը թոյլարդ վում է ամբողջովին և 1851 թւականին Մօնկայում լոյս է տեսնում Նազարեանցի առաջին հայերէն աշխատութիւնը, մանր տառերով տպած մի բարակ գիրք, «Յաղագս Փորձական Հոգեբանութեան ձառ» վերնագրով։

Առաջին բանը, որ զարմացնում է մեզ այդ գրքի մէջ, այն է որ նա գրված է մի ծանր, արհեստական գրաբարով։ Նազարեանցը գրաբարով էր հանդէս գալիս, առաջարանն էլ, որ աշխարհաբարի դատն է պաշտպանում,

գրաբար է։ Ինչու է այդպէս։ Նազարեանցը շտապում է պատասխանել թէ ինչու։ Նա կամեցել է ցոյց տալ հայերին թէ ինքն էլ գիտէ գրաբար։ Ահա ինչու է գրաբարը ընտրել՝ հայերին հոգեբանութեան պէս մի առարկայի հետ ծանօթացնելու համար։ Միամիտ էր Նազարեանցը։ Հենց առաջին քայլից նա սըստալ էր գործում։ Նա գրաբարից քննութիւն էր տալիս հասարակութեան, և ահա զտնվեցան մարդիկ, որոնք ցոյց տուին թէ նա, ճիշտ որ, չը գիտէ գրաբար լեզուն, այսինքն այնպէս չը գիտէ, ինչպէս գիտեն նրանք, որոնց նա տգէտ էր անուանում։

Պէտք է, իհարկէ, հաւատալ Նազարեանցի անկեղծութեան։ Բայց մենք, հեռուից դիտողներս, տեսնում ենք և ուրիշ պատճառ, որ գուցէ նա չէր էլ զգում։ Բանն այն է, որ Նազարեանցը, պաշտպանելով աշխարհաբարի դասը, ինքը չէր գործ ածում աշխարհաբարը։ Նրա բոլոր, մեղ յայտնի, նամակները մինչև 1850—1852 թւականները զրված են, գրաբար լեզուով։ Եւ եթէ մենք ուզում ենք հասկանալ այս տարօրինակ երևոյթի պատճառը, պէտք է դիմենք իրան, Նազարեանցին։ Նա մեղ ասում է թէ առաջադիմութիւնը թոփչքներով չէ կատարվում։ Ահա այդ նոյն օրէնքն էլ խօսում էր նրա մէջ, Ժա-

մանակի ոգուց, նախապաշտրմունքներից մի-  
անդամից չեն ազատվել մեր առաջին գրա-  
կան գործիչները։ Նալբանդեանը, Գամառ-  
Քաթիսան էլ գրաբար են գրել, լաւ զգալով  
որ դա չը պիտի լինի իրանց լեզուն։ Հետա-  
քրքրական է, որ Միքայէլ Նալբանդեանն էլ  
գրել է մի գրաբար «Ճառ»՝ աշխարհաբար  
լեզուի առաւելութիւնները և իրաւունքները  
ցոյց տալու համար \*):

«Փորձական Հոգեբանութիւնը» մի հա-  
մառօտ կօմպիլիացիա է զանազան հեղինակ-  
ներից։ Փոքրիկ, սեղմված հոգեբանութիւնը,  
գրաբար անմարս ոճով զրված, ապահովա-  
պէս անհասկանալի պիտի մնար բազմու-  
թեան համար։ Նազարեանցը, ժողովրդի մը-  
տառը շահերը պաշտպանելով, ժողովրդա-  
կան գրականութիւն պահանջելով, այդ զըր-  
քով գալիս էր ցոյց տալու թէ ամենից ա-  
ռաջ ինքը չէ հասկանում թէ ինչ պահանջ-  
ներ ունի ժողովաւրդը։ Մի քանի խելօք բան,  
օրինակ մայրենի լեզուի նշանակութեան մա-  
սին, կարելի էր, իհարկէ, քաղել այդ գրքից։  
Բայց ովքեր պիտի քաղէին։ Գրաբար իմա-  
ցողները, այսինքն, ինչպէս ինքը, Նազար-  
եանցն էր ասում, մի փոքրիկ դասակարգ։

\*.) «Հանդէս Գրականական և Պատմական», 1895, № 6.

Բայց թողնենք բուն զիբքը. բաւական է  
և այն, որ կազմողը խոստովանում է թէ իր  
աշխատութեան օգուտը և կարևորութիւնը  
այնքան հոգեբանութեան մէջ չէ, որքան ա-  
ռաջաբանի մէջ։ Դիմենք այդ առաջաբանին։

Նազարեանցը իրաւունք ունէր զգուշու-  
թիւններ ձեռք առնելու, ազդեցիկ միջնորդ-  
ներին զիմելու՝ այդ առաջաբանը անվնաս  
պահպանելու համար։ Այդանդ Նազարեանցը  
առաջին անգամ բանում է յարձակողական  
դիրք. այդ առաջաբանը նրա առաջին բանա-  
կոփւն է հակառակորդների դէմ։ Դա մի ամբողջ  
մեղադրական ճառ է, որ շպրավում էր կեղծ,  
անգործ, ինքնագո՞ն ազգասէրների դէմքին։

Վէճը բոլորվում է նոյն հիմնական հարցի  
շուրջը—աշխարհաբարը իրրև ժամանակակից  
գիտութեան և կրթութեան գործիք, գիտակ-  
ցական վերանորոգում կենդանի լեզուի մի-  
ջոցով։ Այդ հարցին մենք այլ ևս չենք դի-  
մի, քանի որ մանրամասն խօսել ենք նրա  
մասին վերևում։ Հետաքրքրականը այսուեղ  
ինքը, վէճն է։ „Կավказъ“ լրագրի 1850 թւա-  
կանի համարներից մէկում Սլիվիցկի անու-  
նով մէկը աշխատում էր ջրել Նազարեանցի  
հայեացքները գրաբարի մասին։ Սլիվիցկի, թէն  
օտարազգի, հայկական պահպանողականու-  
թեան դաղափարների արտայայտիչն էր և

Նրա բերանով խօսողները հայ գրաբարեաններն էին: Եւ ինչ էր ասում այդ բերանը:

Իզուր են կարծում, ասում էր Սլվիցկի, թէ գրաբարը մեռած է. այդ մշակված, հարուստ լեզուն կարող է և գործածական դառնալ: Ապացոյց՝ Կալկաթայի հայոց դպրոցը, որի շնորհիւ կալկաթայի հայերի բարձր դասակարգի գործածական լեզուն գրաբարն է: Իզուր են ասում նոյնպէս թէ զրքերը ժողովրդի համար չեն, որովհետեւ գրված են գրաբար լեզուով: Այստեղ Սլվիցկի հիացած է հայ ազգի վրա: «Ուր որ ապրում են հայերը, այնտեղ երեան է գալիս նրանց ինքնուրոյն ազգային բնաւորութիւնը, որի բնուրոց յատկութիւնն է առետրական և մըաւաւոր գործունէութիւնը»: Հիացած է նա մանաւանդ այն սիրոյ վրա, որ հայն ունի դէպի իր զրքերը: Կիսազրագէտ մանրավաճառն անգամ, ասում է նա, զնում է հայերէն զրքեր, դարսում է իր տանը: Հարցնում էք թէ ինչ զրքեր են սրանք. և հայը խորին ակնածութեամբ ասում է. սա Մովսէս Խորենացին է, սա Զամշեանն է, սա Եղիշէն է: Ի՞նչ է պակասում հայերին:—Ըստ երեսլթին, ոչինչ. նրանք երեկի վաճառականներ են, ունեն բարեկարգ դպրոցներ Կալկաթայում, Վենետիկում, ունեն տպարաններ, զրքեր:

Նազարեանցը խիստ, կարուկ պատասխաններ է տալիս հակառակորդին: Այդ պատասխանների մէջ կան մտքեր, իրողութիւններ, որոնք առաջին անգամ էին մատուցվում հայերին իրեն զառն գեղնատներ:

Հնդկասահանցի հայերի վերաբերմամբ նա ասում է թէ այդ մի բուռն գաղթականութիւնը չէ կարող օրինակ դառնալ. եւրօպական գիտութեան ապացուցած ճշմարտութիւններին պէտք է հաւատալ և ոչ թէ Կալկաթայի հայերին: Ուր է այդ հայերի լուսաւորութիւնը. ուր են այն գիտնական մարդիկը, որոնց որպէս թէ պատրաստել է Կալկաթայի դպրոցը:

Գալով հայերի վաճառականութեան, Նազարեանցը դրա մէջ էլ հիացմունքի արժանի բան չէ գտնում:

«Հայերը, —ասում է նա, —կորցնելով թագաւորական թագը, ցան ու ցիրպանդխտելով, անտուն և անհայրենիք, ծառայ և սարուկ բոլոր ազգերի Ապիայում, եւրօպայում և Աֆրիկայում, նիւթեական կենդանութեան մի միակ հնարը վաճառականութեան մէջ էին գտնում: Սակայն հայերի վաճառականութիւնը գնալով յետամնաց դառնաւ, որովհետեւ եւրօպացիների վաճառականութեան պէս չէր, որ աճել է և ծաղկել քաղաքակրթութեան

զարդացման հետ զուգընթաց: Հայ վա-  
ճառականները լոկ միջնորդներ են, առ-  
նող-ծախողներ, իսկ իրանք չունեն վա-  
ճառաշահական նիւթերի գործարաններ,  
որովհետեւ զուրկ են զիտութիւնից: «Հայ-  
երի մէջ չը կայ վաճառականների ընկե-  
րութիւն, որով կարելի է լինում միլիօններ  
խաղացնել գործի մէջ և միլիօններ աշխա-  
տել, այլ ամեն մէկը իր զումարի չափով առ-  
նում է և ծախում: այս առանձնութիւնը  
և ընկերական ոգու պակասութիւնը նոյն-  
պէս հետեանք են այն բանի, որ ազգը  
անկիրթ է, լուսաւոր չէ: Միանգամայն  
կասեմ: հայոց վաճառականութիւնը չէ  
հաստատված բարոյական հիմքերի վրա,  
այլ հայրերից որդիներից: անցնելով ժա-  
ռանգութեամբ և սովորութեամբ, պաշտ-  
վում է իրեւ աւելի հեշտ ճանապարհ նիւ-  
թական բարեկեցութիւն ձեռք բերելու  
համար: Եւ սա է պատճառը այն տիսուր  
և ողորմելի տեսարանի, որ համարեա ամ-  
բողջ ազգը վաճառականներից է բաղկա-  
ցած, իսկ մի հատ զիտնական չը կայ, ո-  
րովհետեւ զիտութիւնը յարգ չունի, ուրե-  
մըն և զիտութիւն որոնողներ չը կան. քանի  
որ իւրաքանչիւր արժանաւորութիւն զը-  
րամով է չափում և զրամն է, որին  
նուիրվում է ամեն մի ուխտ և փափազ:  
Հայոց վաճառականութիւնը մինք ամեն  
արդարացի պարծանքից անմաս ենք հա-  
մարում և աւելի նախատինք, քան թէ  
փառք հայկական անուան համար»:

Ասում են թէ հայերը հարուստ ազգ են:  
Բայց ինչով է ճանաչվում մի ազգի հարս-  
տութիւնը, չէ որ այն մեծագործութիւննե-  
րով, որոնք լինում են ազգի օգտին: Բայց ուր  
են այդ մեծագործութիւնները, ուր են այն  
մեծամեծ գանձերի պառողներն ու արդասիք-  
ները, որ այնպիսի շտապով և տագնապով  
հաւաքում և կուտում են հայ վաճառական-  
ները: Միայն մի հատ բացառութիւն կայ—  
Լազարեանների տունը. սակայն մի ծաղկով  
գարուն չէ լինում:

Ապա անցնելով հայերի գրասիրութեան,  
Նազարեանցը այստեղ էլ ջարդում է գրա-  
բարեաններին: Ի՞նչ օգուտ, ասում է նա,—  
որ հայերը գնում են գեղեցիկ տպած, ոսկե-  
զօծ զբքեր, գարսում են իրանց տանը, բայց  
չեն հասկանում թէ ինչ կայ նրանց մէջ: «Ի՞նչ  
օգուտ, եթէ զբքերի մէջ ամփոփվածը անիմա-  
նալի է զբքի տէրերի համար, ուրեմն և չէ կա-  
րող որեէ կերպով գառնալ լուսաւորութեան  
առիթ խաւարի մէջ նստածների համար»:

Իր այդ առաջին պայքարի մէջ Նազար-  
եանցը շատ անդամ է յարձակվում իր ժա-  
մանակի ազգասիրութեան վրա: «Ճանաչել և  
սիրել հայրենի ազգը ոչ թէ անպտուղ և ոը-  
նոտի շատախօսութեամբ—որ մի դժուար բան  
չէ, քանի որ անձի զրկանք չէ պահանջում

յօդուտ մարդկութեան,—այլ կենդանի և ճըշ-  
մարիտ արդիւնքով, այն է հետախուզող մըտ-  
քով քննելով իր սպզի սէտքերը և փութով  
դարման գանելով—այսպիսի գիտակցական  
ազգասիրութիւն չը կայ ոռւսահայերի մէջ,  
որոնց համար շատ և շատ երջանկութիւն է,  
եթէ ամեն մէկը կարողանայ վայելել մարմ-  
նական բարեկեցութիւն»։ Ահա ինչ լեզուով  
գիտէր խօսել Նազարեանցը։ Զը մոռանմակ.  
նա մենակ էր այդ ժամանակը. ճանապարհ  
բացողը, ճանապարհ հարթողը նա էր մե-  
նակ։ «Հայութիւն առանց հայաբար մտածե-  
լու և խօսելու մենք բարբարոսութիւն ենք  
համարում», բացականչում է նա:

Եւ այս անգամ նա, իհարկէ, աւելի շատ  
լսողներ ունէր, քան առաջին անդամ, երբ  
խօսում էր իր գիտնական գիտերացիայի  
էջերից։ Այդ լսողը հէնց այն գասակարգն  
էր, որի գէմ ուղղված էին նրա հարուած-  
ները։ Կարդացին զրաբարեանները, աւելի ևս  
կատաղեցան։ Զը կարդաց ժողովուրդը, որ  
կարողանար դատ անել երկու կողմերի մէջ։  
Իսկ չը կարդաց այն պատճառով, որ այդ բո-  
լորը զրաբար էր զրված։ Իր յետագայ նա-  
մակներից մէկում նա ասում էր թէ «Հոգե-  
բանութիւն» հրատարակելով նա հասաւ իր  
նպատակին. կիրքը ցոյց տուեց որ, ինչպէս

ասված էր առաջաբանի մէջ, հին լեզուով  
զրված զրքերը անօգուտ են ժողովրդին, ո-  
րովհետեւ ոչ ոք նրանց չէ հասկանում։ Եւ նա  
այլ ես չը կրկնեց այդ ապարդիւն փորձը։  
1853 թ. լոյս տեսաւ նրա երկրորդ հայերէն  
աշխատութիւնը, որ միենոյն ժամանակ նրա  
առաջին աշխարհաբար գրուածքն է։

Չենք զարմանում այդ երեսյթի վրա։ Աշ-  
խարհաբար զրելը մեզանում արդէն սովո-  
րութիւն էր գառնում, երբ Նազարեանցը  
հրատարակեց իր այդ գործը։ Ուրիշ բան որ  
չորսնենք, բաւական է և «Արարատ» շաբա-  
թաթերթը, որ համարեա մի տարի հրատա-  
րակվեց Թիֆլիսում, սկսած 1850 թւակա-  
նից. այդտեղ տպվեց, օրինակի համար, Գա-  
մառ-Քաթիպայի «Զարմայր նահապեաի մա-  
հը», մի բանաստեղծութիւն, որ միենոյն ժա-  
մանակ աշխարհաբարի կատարեալ յաղթա-  
նակն էր իր գեղեցկութեամբ։ Ամբողջ տար-  
բերութիւնը այն էր, որ մինչդեռ ուրիշ աշ-  
խարհաբար գրուածքները անցնում էին ա-  
ռանց աղմուկի, Նազարեանցի այս մի գործն  
էլ մի ամբողջ փոթորիկ յարուցեց։

Այդ աշխատութիւնը կոչվում էր «Վար-  
դապետարան կրօնի», հասարակաց հայախօ-  
սութեամբ»։ Ամենից առաջ մեր ուշադրու-  
թիւնը զրաւում է այս հանգամանքը. — Նա-

զարեանցը, աշխարհական, ժողովրդական կը բթութեանքարողիչ, սկսում է այդ ժողովրդական գրականութիւնը մի կրօնական գրքով: Ի՞նչ կարիք կար: Ի՞նչպէս էր որ մի աշխարհական մարդ կրօնի դաստիլրք էր կազմում, աստուածաբանական հարցերի մէջ էր մանում:

Այս հարցերը շօշափում են Նազարեանցի ստացած կրթութեան մի գլխաւոր յատկութիւնը: Նախ և առաջ նկատենք, որ Նազարեանցը խոր հաւատացող քրիստոնեայ մարդ էր: «Մեր նոր հայախօսութիւնը սկսանում ենք մի սուրբ առարկայով, որպէս քրիստոնէական կրօնի վարդապետութիւնն է, — ասում է նա «Վարդապետարանի» առաջարանի մէջ. — կրօնը ամենայն ազգերի մեծ դաստիարակիչ մայր լինելով, այլ և հիմն ամենայն ազգային լուսաւորութեան, մենք ևս արժան տեսանք այն փոքր ի շատէ լոյսը, որ մեր նուաստութեան միջնորդութենովը կարող էր հասանել մեր ընկերներին, հիմնել և հաստատել կրօնի ուսման վրայ»: Եւս սա Նազարեանցի ծրագրի հիմնաքարն էր մինչեւ նրա կեանքի վերջը: Ի՞նչպէս կազմվեց նրա մէջ այս համոզմունքը:

Յիշենք նրա ստացած կրթութիւնը Ներսիսեան դպրոցում, ամբողջովին կրօնական, ամբողջովին հիմնված գրքերի վրա:

Այնուհետև նա ուսում է ստանում գերմանական դպրոցում, մեծանում է գերմանական ընտանիքի մէջ: Կրօնական հիմքը չը պիտի թուլանար, այլ ընդհակառակն, աւելի ևս պիտի զարգանար մի այդպիսի միջնավայրում, ուր բողոքական ջերմեռանդութիւնն էր տիրում: Ի՞նչպէս երեսում է, Նազարեանցը առանձին սէր ունէր դէպի աստուածաբանութիւնը. իր նամակներից մէկում նա ասում է թէ գերմանական ճոխ աստուածաբանութեան հետ լաւ ծանօթէ ի ինքը և շատ է կարդում յայտնի աստուածաբանների գործերը: Այսքանը բաւական է որ մինք հասկանանք թէ ինչն էր ստիպում նըրան առաջին և եթ քայլից մանել եկեղեցու դաւանական հարցերի մէջ:

Դարձեալ զրբի առաջարանն է, որ զրաւում է մեր ուշադրութիւնը: Նազարեանցը, մինչեւ սեփական ամսագիր ունենալը, զրբերի առաջարանների միջոցով էր իր մտքերը քարոզում: «Հոգերանութեան» առաջարանի մէջ մենք տեսանք որ նա պաշտպանում էր աղքայնութեան գլխաւոր հիմք կազմող լեզուն: Այժմ այստեղ նա զիմում է երկրորդ հիմքին կամ, ինչպէս նա է ասում, «հոգեղին անօթին» — կրօնին: Ահա ինչ է ասում նա.

«Եւրօպացի բանագէտ և իմաստուն

մարդերի բերանից ուսանում ենք թէ մի ազգի համար իւր լեզուն, կրօնը և իւր քաղաքականութիւնը այն մեծախորհուրդ և խորախորհուրդ անօթները (ամանները) են, որ ընդունելով իւրեանց մէջ աստուածեղէնը և մարդկեղէնը՝ պիտոյ է ածեցուցանէին, ծաղկազարդէին և պաղաբեր շինէին: Հայերը՝ ինչպէս նոցաներկայ դրութիւնն է՝ ունին միայն երկու հոգեղէն անօթ՝ լեզուն և կրօնը. քաղաքական անօթը՝ արդարի մի անչափելի մեծակշիռ անօթ, իւր և օտարի մեղքովը ոչնչացել է և չը կայ այժմոււ: Ուրեմն հայերի իմացական և բարոյական գործակատարութեան հանդէսը մնացել է լեզուն և կրօնը»:

Գիտենք ինչպէս էր նա նայում լեզուին: Մնում է տեսնել թէ արգեօք կրօնի հարցում էլ նազարեանցը ունի նոր խօսք, ունի անբաւականութեան պատճառներ:

—Ունի, այս: Քննութեան և վերլուծութեան վրա հիմնված բողոքական աստուածաբանութիւնը այս անզամ էլ նրա ուղեցոյցն էր, լուսաւորում էր հայերի մէջ աննկատելի մնացած պակասութիւնները:

Հայերը հոչակված էին իբրև կրօնասէր ժողովուրդ: Դարերի ընթացքում նրանք, չը նայած սոսկալի տանջանկներին, հաւատարիմ էին մնացել իրանց ազգային եկեղեցուն: Սրանից էլ ինչ մեծ ազացոյց որ այդ ժո-

ղովուրդը ամբողջապէս լցված է քրիստոնէութեան զաղափարներով: Բայց նազարեանցը մտնում է այդ ժողովրդի մէջ, որոնում է գիտակցութիւն գոնէ կրօնի վերաբերմամբ, և չէ գտնում: Կայ ծէս, կայ քրիստոնէական արտաքին կնիք,—իսկ հոգին: «Արդարի—ասում է նա դառնութեամբ—հետ և ամենահեշտ էր քրիստոնէի անուն կրել իւր վերայ, արտաքին արարողութիւններով ընկերանալ քրիստոսաշէն եկեղեցուն, բայց այդպիսի քրիստոնէութիւնը ոչ մի այլ բան չէր, եթէ ոչ մեքենապաշտութիւն և անձնախարէութիւն»:

Կենդանի լեզուն իբրև կամուրջ եւրօպական լուսաւորութեան և ժողովրդի մէջ, իսկ կենդանի կրօնը իբրև կամուրջ քրիստոնէական բարոյականութեան և ժողովրդի բարքերի մէջ—այս է նազարեանցի հաւատամքը: Ուրիշ խօսքերով՝ նա կամենում է որ իր ազգը լուսաւորված լինի և բարոյական, ինչպէս լեզուի հարցում նա անհաշտ թշնամի էր ամեն մի մեքենայականութեան, ամեն մի արհեստականութեան, այնպէս էլ կրօնի հարցում նա պահանջում էր կենդանութիւն, իշրական, անմիջապէս շփումն քրիստոնէական վարդապետութեան հետ: Քրիստոնեայի պարտաւորութիւնը ծէսերի և արարողութիւն-

ների մեքենայական կատարումը չէ. դաղա-  
փարը ինքն ըստ ինքեան պիտի մատչելի լի-  
նի հաւատացողին, պիտի կատարեալ գիտակ-  
ցութեամբ պաշտվի, որպէս զի արդիւնքներ  
ցոյց տայ, պաղատու լինի:

Բայց ինչ անել քրիստոնէութիւնը այդ-  
պէս ժողովրդականացնելու համար: Նազար-  
եանցը ասում է. «Զենք և չենք մոռանում  
մեր սուրբ թարգմանչաց հրաշալի հայկաբա-  
նութենով մեզ պարգեած աստուածաշունչ  
գիրքը, որ մեր քրիստոնէութեան աղբիւրն  
է, թէպէտ՝ ցաւ է ասել՝ աղբիւր ծածկեալ և  
թագուցեալ, ըստ որում անհասկանալի է  
ժողովրդին»: Այստեղից Նազարեանցը, առա-  
ջին անգամ մեզանում, հանում էր իր այն  
պահանջը որ պէտք է աշխարհաբարի թարգ-  
մանել ս. Գիրքը: Այդ պահանջը նա աւելի  
պարզ դնում է «Վարդապետարանի» մէջ.  
«Աստուածաշունչը—ասում է նա—պիտոյ է  
լինի առաջին գիրք ամենայն հայ քրիստոնէի-  
տան մէջ, նորա դռները պիտոյ է բաց հարձակ  
լինէին մեծի և փոքրի համար, և ոչ թէ միայն  
տասն ու քսան հին լեզու իմացողհայի համար»:

Սա արդէն մի պահանջ էր, որի հետ եր-  
բէք չէր հաշտվի հայկական պահպանողակա-  
նութիւնը: Նազարեանցը նոր աղմուկի և ի-  
րարանցման առիթ էր տալիս «տասն կամ քը-

սան հին լեզու իմացողներին»: Բայց նա ոչ  
միայն չէր քաշվում այդ «գիտնականներից»,  
այլ և իր պարտքն էր համարում մերկացնել  
նրանց հասարակութեան առաջ: Նա ասում է.

«Հայոց խզալի ազգը, երկար ժամա-  
նակ անուսում մնալով, շատ փոքր կամ  
ամեննեին ոչինչ ծանօթութիւն չունենա-  
լով եւրօպական բազմօրինակ լուսաւո-  
րութեան մասին, այլ և բոլոր ազգի ու-  
սումնականութիւնը փակուած մնալով ա-  
քեղայիկան խցերի մէջ և քանի մի միա-  
կողմանի գիտնականների ձեռքում, կար-  
ծիք է յառաջացել ազգի մէջ, որպէս թէ  
Քերականութիւն և ծարտասանութիւն մի  
այնպիսի գերազանց ուսումն է, որով պի-  
տոյ էր չափել և կշռել ամենայն գիտու-  
թիւն, մինչև որ հայոց հասարակ մարդը  
և՝ քերականութեան և ծարտասանու-  
թեան անունը տալով կամ լսելով, մտա-  
ծում է թէ ինչ իմաստութիւն կայ և չը  
կայ աշխարհիս վերայ՝ նոցա մէջ է պա-  
րունակված»:

Բողոքելով այդ հին, քարացած մեթօդի  
գէմ, Նազարեանցը ցոյց էր տալիս թէ հայ  
գիտունները որքան յետ են մնացել ժամա-  
նակից: Հայ երեխան, ասում է նա, քաղցած  
ու ծարաւ է, նա ուրիշի հացի մուրացկան  
է գարձել: «Հայութիւն քարոզելով, հայու-  
թիւն հրամայելով, հայութիւն պահանջելով,

ոչինչ բան չի յառաջանայ. այստեղ հարկաւոր է գործ, գործ մեծ և հոգաբարձութիւն միաբան»։ Ահա այդ գործի տեսակէտից Նազարեանցը բնորոշում է թէ ինչ պիտի լինի մի հայ գործիչը։ «Այսպիսի արդար հայրենասիրական գործի մէջ հարկաւոր չէր փառասիրութիւն. օգուտը, աղզի ճշմարիտ օգուտը, պիտոյ է լինի ամենայն խելօք և արժանի հայի առաջին և վերջին նպաստակը»։ «Եւ աղզի օգուտը յառաջ տանելու համար—շարունակում է նա յետոյ—ոչ ով ծառայ չէ, ոչ ով պարոն չէ. այլ ամենեքեան պարտական են մշակ լինել, արդար և ջերմեռանդ մշակ, մեծատունը իւր առատ արծաթովը և գիտնաւորը՝ իւր աշխատասէր զրչովը»։

Մշակ լինելու պահանջը ամենից առաջ ինքը, Նազարեանցը իրագործեց իր օրինակով։ Սրենեան լեզուների գոկտօր, Լազարեան ճեմարանի սլրօֆէսօր, նա սկսեց մի շարք այնպիսի մանր-մունք աշխատութիւններ, որոնց մի ուրիշը նրա տեղ անվայել կը համարէր կատարել։ Նազարեանցին քննադատողների մէջ եղել են այնպիսիները, որոնք ջանք են թափել ապացուցանելու թէ նա գիտնական չէր և զրանով ուզեցել են նսեմացնել Նազարեանցի նշանակութիւնը։ Բայց ապացոյցների կարօտութիւն չը կայ։ Եթէ

գիտնականը միայն նա է, ով իր առանձնասենեակից դուրս չէ գալիս, կեանքի հետ կապ չունի և աշխատում է իր մասնագիտութեան համար միայն, պարզ է ուրեմն, որ Նազարեանցը գիտնական չէր, թէև կարող էր լինել։ Արաբական և պարսկական հարուստ գրականութիւնները կարող էին բաց անել նրա առջև հետազօտութիւնների մի լայն ասպարէզ։ և թաղվելով այդտեղ, նա կարող էր իր համար անուն ստեղծել, անուն, որ միայն մի նեղ շրջանում յայտնի կը լինէր, թէև աւելի պատուաւոր տիտղոսով։

Սակայն Նազարեանցին գիտնական փառքը չէր զրաւում։ Նա տեսնում էր որ հայ երեխան այրբենարան չունի, տեսնում էր որ դպրոցում տիրում է հին տիրացուական գիտութիւնը, որ ոչ ոք տեղեկութիւն չունի բնական գիտութիւններից, որ զրական հրապարակում չեն երեւում զեղարուեստական երկեր, որոյն միջոցին, երբ Նազարեանցը այսպիսի մտքեր էր քարոզում, նոյն լազարեան ճեմարանում կար և հայ գիտնականի տիպը։ Դա Մկրտիչ Էմինն էր, որ 1849-ին հրատարակեց «Բնտիր հատուածք» և 1850-ին իր սեփական հետազօտութիւնը՝ «Վէպք հնոյն Հայաստանի»—զրաբար լեզուով։ Նա հոչակվեց իբրև հայագէտ, եւրօպական գիտնա-

կանների մէջ անուն հանեց: Բայց ի՞նչ արաւ հայ ժողովրդի համար:—Ոչինչ: Իր դիսնականութեամբ հանդերձ նա մնաց Սալլանթեանի հարազատ աշակերտ, գրում էր զըրաբար, հակառակ էր աշխարհաբարին, հակառակ էր նազարեանցին: Նա մշակ չէր:

Մշակը նազարեանցն էր, համեստ կոչումով մի աշխատաւոր, աւելի պարզ և ամենքին մատչելի ցանկութիւններով: Նա զիտնականներին անծանօթ մնաց, բայց դրա փոխարէն շատ լաւ յայտնի դարձաւ իր ազգին, որին ծառայեց իր բոլոր ոյժերով և որի համար բաց արեց նոր ժամանակի դուռը:

«Մշակ, արդար և զերմնուանդ մշակ»—ուրիշ պաշտօն նազարեանցը երբէք չէ էլ ցանկացել: Ինչու, ասում են, նա զրեց «Վարդապետարան Կրօնի», չը լինելով աստուածաբան, հոգեորական:—Հէնց այն պատճառով, կը պատասխանենք մենք, որ ցոյց տայ թէ ինչպէս կարող է զիտութեան տէր մարդը, իր գարի լուսաւոր գաւակը, հասկանալ քրիստոնէութիւնը, ո. Գիրքը: Եւ իրաւ, այս աշխատութեան մէջ մենք տեսնում ենք մի մարդու, որ աշխատել է հաշտեցնել բիբլական պատմութիւնները ժամանակակից գիտութեան հետ, որ ազատ հայեացքներ է զրել այնտեղ, ուր կոյր սիսոլաստիքական

աստուածաբանութիւնը դարերից ի վեր անշարժ, քարացած հասկացողութիւններ է գըրեկը, թոյլ չը տալով որ իր ասածների գէմ որ և է առարկութիւն անէ բանականութիւնը, առողջ դասողութիւնը, վերջապէս զիտութիւնը: Հին հասկացողութիւններ սըրբացրած կրօնը նոր ժամանակի մարդու համար համոզիչ լինել չէր կարող: Նազարեանցը, հաւատացող քրիստոնեայ լինելով, իբրև զիտութեան մարդ, պարտաւորական չէր համարում քարացած մնալ հրէական տարեգրութիւնների և միջնադարեան աստուածաբանների վրա: Այսպէս, հետեւելով Շարառուսի հայեացքներին, նա հրաշքները չէր հասկանում տառացի մաքով, այլ աշխատում էր գտնել նրանց մէջ այլաբանութիւն և այդպէս էլ բացատրել շատ պատմուածքներ: Հակառակորդների համար մի շացնող նորութիւն էր և այն, որ նազարեանցը դուրս է եկել եկեղեցական հայրերի լոնդոնած տեսութիւններից և տեղ տեղ զիմել է ընդհանուր պատմութեան, բնական զիտութիւններին: Այսպէս, չին կարողանում ներել նազարեանցին, որ նա համարձակվել էր ասել թէ կարելի է ենթադրել որ միւս մոլորակների վրա էլ ապրում են բանաւոր էակներ: Եւ ի՞նչ էին բերում դրա գէմ:—Այն, որ եկեղե-

ցական գրականութեան մէջ չը կայ մի այդ-  
պիսի բան \*):

«Իմ խորհուրդը,—ասում է նա իր նա-  
մակների մէջ—այն էր միայն, որ այդ կրօ-  
նական և բարոյական գիրքը, որ պարունա-  
կում է իւր մէջ Քրիստոսի աւետարանի ոսկի  
հատիկները և ոչ թէ Հայոց յիմար արեղա-  
ների ծովուծ աստուածային բանը, տարած-  
վի ժողովրդի մէջ»: Իսկ մի ուրիշ տեղ նա  
բացատրում է թէ ինչ է հրէական պատմու-  
թիւնը: «Աստուածաշունչ մատեանը է ոչ մի-  
այն մի կրօնուսոյց և բարոյախօս մատեան.  
Նա է միանգամայն և մի հոյակապ, անզին  
յիշատակարան մարդկութեան նախնի վիճա-  
կի, ուր ժողոված ու ամփոխած են հազա-  
րաւոր գարերի փորձեր, զննութիւնք, ծա-  
նօթութիւնք և իմաստութիւնք, և այս պատ-  
ճառով կարօտ փիլիսոփայական բազմահայ-  
եաց տեսութեան, եթէ արժան էր մեզ վերա-  
հասու լինել նորա ձշմարտութիւններին, որ  
բոլոր վարագուրած են ասիական ծաղկա-  
ւէտ երեակայութեան գեղեցիկ պատկերնե-  
րի, առակների, հայելի օրինակների զգես-  
տով, որ միակ ոճն է ասիական ազգերի գաս-  
տիարակութեան և իմաստութեան: Այս պատ-

\*) «Ճռաքաղ», 1859, եր. 174—182:

կերները մերկացնել, այս ստուերը դէպի լոյս  
փոխարկել—ահա ձշմարիտ քրիստոնէական  
դիտութեան լուծանելի խնդիրը»:

Ահա «Վարդապետարանի» արժանաւորու-  
թիւնները: Ահա թէ ինչու այնքան էլ աւե-  
լորդ չէր որ նազարեանցը զրեց այդ գիրքը:  
Դէտք է խոստովանել որ նազարեանցը, գտնը-  
վելով բողոքական աստուածաբանութեան  
ազգեցութեան տակ, իր այդ զբքում ցոյց է  
տուել համակրանք բողոքական եկեղեցու  
սկզբունքներին: Հասկանալի է թէ ինչ սար-  
ափի պիտի պատճառէր այդ հանգամանքը  
հայ դիտուններին: Մինչև այդ՝ նազարեանցը  
հայոց լեզուի, հայոց անցեալի թշնամին էր  
համարվում: Այդ գեռ ներելի կը լինէր: Բայց  
ահա գտնում են որ նա հայոց եկեղեցու թշշ-  
նամին էլ է: Այդ մէկն արդէն ներել չէր լինի,  
որովհետեւ կրօնը ամեն ինչ էր հայի համար:  
Մինչև իսկ հայրենիքի հասկացողութիւնը  
դոյցութիւն չունէր մեր կրօնասէր հայ դի-  
տունների համար: Առաքել վարժապետ Արա-  
րատեանը, «Վարդապետարանի» դէմ հրատա-  
րակած իր մի զրքոյկի մէջ, բորբոքվում է  
նազարեանցի այն խօսքերից թէ հայերը ան-  
տուն անտէր են: «Առած է—ասում է վար-  
ժապետը—թէ իմաստունները հանգիստ են  
սիրում, յիմարները՝ հայրենիք: Աստուծուն

է պատկանում ամբողջ Երկիրը, աշխարհը և նրա բոլոր ընակիչները։ Ապա ուրեմն որտեղ էլ լինենք, այստեղ էլ մեր տունն է և մեր հայրենիքը, և բարեկամները և ազգականները և սիրելիները»\*), Ահա այսպիսի թշնամիներ էին դուրս գալիս Նազարեանցի դէմ։ Եւ դրանց ձեռքում ամենաթունդ զէնքը, ինչպէս կը տեսնենք, այս «Վարդապետարանն» էր։

Դեռ թողնենք թշնամիներին։ «Վարդապետարանը» Նազարեանցի առաջին աշխարհար աշխատութիւնն է և մենք պարտաւոր ենք մի քանի խօսք ասել այդ աշխարհարի մասին։

Մեր նոր լեզուն այժմ էլ վերջնականապէս մշակված չէ, չէ ընդունել ամենքի համար անվիճելի, պարտաւորական կազմակերպութիւն։ Եթէ չափազանցութիւն լինի ասելը թէ իւրաքանչիւր հայ գրող ունի իր առանձին կանոնները, գոնէ անհերքելի կը մնայ այն, որ համարեա իւրաքանչիւր գրող ունի իր առանձին հասկացողութիւնը լեզուի կանոնաւորութեան մասին։ շատ քիչ կարելի է գտնել մեզանում մարդիկ, որոնք աշխատած չը լինեն բարենորոգիչ հանդիսանալ լե-

\* ) «Ալսալանք», ել. 18:

զուի հարցում։ Նազարեանցը, իրրե մի մարդ, որ առաջին անգամ զրեց աշխարհաբար գրականութեան ստիպողական հարցը և առաջիններից մէկն էր, որ սկսեց գործադրել այդ լեզուն, ի հարկէ պիտի լեզուի կանոններ ու ձեեր էլ մշակեր իր համար։ Զենք կարող ասել թէ նա սկզբից և եթ անսխալ կերպով ըստունեց նոր լեզուի հարստութեան, ձկունութեան զաղանիքը։ Հասկանալով որ դա պիտի լինի ժողովրդական լեզու, նա, այնուամենայնիւ, աւելի գրաբարին մօտ մնաց, քան գործածական լեզուի ձեերին։ Ինչ ասել կուզի որ դրա մի զիսաւոր պատճառն էլ այն էր, որ Նազարեանցը հեռու էր ժողովրդից, նրա խօսակցական լեզուի ազդեցութեան տակ չէր գտնվում։ Հայրենիքից հեռու մի աել, հայկական մի փոքրիկ գաղթականութեան մէջ, որպիսին էր Մօսկվան, լեզուն հեշտ կարող էր զրկվել իր հիւթերից, չորանալ։ Բռն Հայաստանում չը կար գրականութիւն աշխարհաբար լեզուով։ Աբովեանցի «Վէրք Հայաստանին» դեռ չէր հրատարակված, Մօսկվայում դեռ նոր էին ըսկան հրատարակել մեր ժողովրդական երգիչների—Սայաթ-Նովայի և միւս աշուղների երգերը։ Այսպիսի հանգամանքների մէջ նաւարեանցը չէր կարող միանդամայն ազատա-

վել զրաբարի խնամակալութիւնից և ստեղծել մի բոլորովին պարզ ու կենդանի լեզու:

Սաենք այդպիսի բան անհնարին էլ էր կատարել. լեզուն էլ, ինչպէս և տմեն մի կենդանի օրգանիզմ, ևնթարկված է յաջորդաբար զարդանալու օրէնքին: Նազարեանցը լու էր հասկանում այս բոլորը: Նա չէր ասում թէ ինքն է առաջին և վերջին խօսքի տէրը նոր լեզուի մշակման գործում: Նրա կարծիքով, զրաբարը պիտի տեղի տայ աշխարհաբարին, բայց մի աշխարհաբարի, որ ժողովրդի գործածական լեզուն չէ: «Վարդուպետարանի» առաջարանի մէջ նա ասում է.

«Խօսելով մի նորահայ լեզուի վերայ՝ որ կարող էր լինել այժմեան լուսաւորութեան յարմար ճանապարհ, ոչ մտածել ենք երբէք և ոչ մտածում ենք, որպէս թէ այդ նորախօս լեզուն պէտք է լինէր այն գուենկական ուամկախօսութիւնը՝ խանդարված ամենայն տեսակ այլազգի բառերով, ամենեին ոչ. այդ աղաւաղեալ և վայրենացեալ լեզուովը չէ կարելի ոչինչ գործ յառաջ տանել, այլ և ոչ մի առողջամիտ կրթեալ անձը՝ խօսելով իւր ընկերի հետ՝ արժան կը համարէր ծառայանալ տգէտ խառնիճաղանճի լեզուին: Ամենայն ազնուամիտ հեղինակ, կամենալով օգուտ բերել իւր աղզին և ձեռնառու լինել նորա լեզուի շինութեանը՝ պար-

տական էր տղմի մէջ կորած ընկերը գէպի իւր կողմը վեր քաշել և ոչ թէ ինքը ցած իջանել նոյն իսկ ապականութեան մէջ»:

Այս արհամարհական վերաբերմունքը գէպի ժողովրդի զործածական լեզուն պատճառներից մէկն էր որ նազարեանցը, ինչպէս ցոյց է տալիս և մեր այստեղ բերած կտորը, աւելի զրաբարի ձևերին կպաւ քան թէ աշխարհաբարի ոգուն, հիմքերին և և նրա լեզուն մնաց միշտ մի տեսակ շինծու, արհեստական, կարինետային, այսինքն զուրկ հայրենի հողի և օդի ազգեցութիւնից, կենդանի հիւթերից: Իւրաքանչիւր վերանորոգիչ մի յայտնի չափով միակողմանի աղանդաւոր է: Եւ նազարեանցը, իբրև աշխարհաբար զբող, ունէր այդ հիմնական պակասութիւնը: Ոչ միայն ինքը մնաց իր ընտրած ուղղութեան հաւատարիմ, այլ և ազգեց ուրիշների վրա էլ, իբրև խմբագիր ուղղելով և իր կանոններին ենթարկելով ամեն մի գրուածք: Այնպէս որ մեր աշխարհիկ լեզուի զարգացման պատմութեան մէջ նազարեանցի լեզուն զըրբաւում է մի բաւական աչքի ընկնող շրջան, որը յարմար կը լինէր անուանել «Մօսկվայի շրջան»: Մօսկվայի ենք ասում, որովհետեւ ուրիշ տեղ նա գոյութիւն չունէր և մեր աշխարհաբարը սկսեց մօտենալ ժողովրդա-

կան լեզուին միայն բուն հայարնակ տեղերում, Անդրկովկասում:

Նազարեանցի աղանդաւորութեան մի նըշան էր և այն, որ նա աշխատում էր թարգմանել այնպիսի օտար բառեր, որոնց համանիշը չը կայ հայերէնի մէջ, թէն միենոյն ժամանակ ընդունում էր որ օտար բառեր պէտք է մտցնել հայերէնի մէջ և ինքն էլ մըտցնում էր: Յիշենք միայն նրա գիտնական տիտղոսը. «գօկտօր» բառը նայամառութեամբ թարգմանում էր «վարդապետ» և այդ պատճառով էլ երբեմն նոյն խոկ սրամիտ ծաղրի էր ենթարկվում իր հակառակորդների կողմից, որոնք ցոյց էին տալիս այդ սխալը, անուանում էին նրան «անվեղար վարդապետ» և այլն:

—○—

Նոյն 1853 թւին Նազարեանցը հրատարակեց իր «Առաջին Հոգեղէն Կերակուր» անունով աշխատութիւնը: Դա առաջին աշխարհաբար զասագիրքն է մեզանում \*), ըսկզում է այբբենարանով և պարունակում

\* ) 1850 թւին Վենետիկում չ. Արսէն Բագրատունին հրատարակեց «Նոր Այբբենարան», որի մէջ բացատրութիւնները և մի քանի վարժութիւններ աշխարհաբար լեզուով էին:

է իր մէջ երեխայի առաջին տարիների ընթերցանութեան նիւթերը:

Այս գրքի մասին երկար խօսելու կարիք չը կայ: Հարց կարող է լինել միայն այն մասին թէ որքան նա համարատասախանում էր իր ժամանակի մանկավարժական հասկացողութիւններին, որքան Նազարեանցը կարողացել է հեշտացնել զասատութեան եղանակը: Քննել այդ հարցը այժմ դժուար է, որովհետեւ յիսունական թւականների մանկավարժական իդէալները շատ հեռու են մեր ժամանակի հասկացողութիւններից: Մեզ համար բաւական կը լինի համեմատական չափը. — Ենչ ունէինք մենք և ինչ առեց Նազարեանցը:

Բուն այբբենական մասում, որ պիտի տառագիտութիւն սովորեցնէր երեխաներին, Նազարեանցը այնքան էլ չէ կարողացել հեռանալ հին մեթօդից. նոյն բա, թէ, թը վարժութիւնները, նոյն միավանկ, երկու, երեք, չորս և աւելի վանկեր ունեցող բառերի կոյտեր: Նորութիւնն այն էր, որ երեխան այբուրէնից յետոյ չը պիտի ամիսներ մաշեցնէր սաղմուը վանկերով կարգալու վրա, մի բթացնող, կատարելապէս մեկենայական աշխատանք, որ նուիրագործել էր հին մեթօդը, — այլ պիտի անցնէր պարզ ու հասկանալի լե-

զուով դրած մասին, որ պարունակում է իր մէջ աղօթքներ, բարսյական խրատներ, առակներ: Բայց այստեղ Նազարեանցը, խոյս տալով մի ծայրայեղութիւնից, ընկել է մի ուրիշ ծայրայեղութեան մէջ: Այսպէս, «Քանի մի ընտիր խօսքեր» վերնազրի տակ շարժած են բազմաթիւ հին մարդկանց ասածները և երեխան անդադար պիտի հանդիպէր Պղատօն, Թեմիստոկլէս, Սկիպիոն, Ապոլոգորոս և այլ այսպիսի անունների, չիմանաւով իհարկէ, թէ ինչ են դրանք և թէ ինչու ինքը պիտի իմանայ այդ խորթ անունները: Ստացվում էր դարձեալ նոյն մեքենականութիւնը:

Նազարեանցը զգում էր որ հայ ժողովրդի կրթութեան նուիրված մարդք պիտի լինի հանրապիտակ, Էնցիկլօպեդիստ: Այդ ժողովուրդը ոչինչ չը գիտէր և նրան պէտք էր սովորեցնել ամեն ինչ—բնական պատմութիւն, ֆիզիկա, աստեղաբաշխութիւն, թուաբանութիւն: Ահա այդ բոլորն էլ նա մտցրել է իր այս գասագրքի մէջ: «Ցանկալի էր մեզ, պատուելի հայ ծնողներ, սրանից աւելի բաներ զնել ձեր երեխաների առջեր,—ասում է Նազարեանցը գրքի վերջաբանում,—բայց կասկածելով թէ մի գուցէ ծանրաբեռնէի նոցա միտքը, և իմ փոքր գիրքս փոխանակ

օդուտ բերելոյ՝ ձանձրութեան պատճառ լինէր, բաւականացայ փոքր ի շատէ տեղեկութիւն տալով այն առարկաների մասին, որոնց վերայ հիմնած է մեր ժամանակի լուսաւորութիւնը»: Նպատակը լաւ է, բայց կազմողը չէ կարողացել չափ ճանաչել և այն բանը, որից նա վախինում էր, այսինքն «Ճանձրութեան պատճառ» լինելը, ինքն ըստ ինքեան կար գրքի մէջ, որ Կթէ «Փոքր գիրք» է կոչվում, պատճառն այն է, որ տպված է չափ մանր տառերով: Չափազանցութեան մի օրինակ կարող է գառնալ հէնց այն, որ Նազարեանցը գնում է հայ երեխայի առաջ այն ՅՅ պետութիւնների անունները, որոնցից կազմված էր Գերմանական դաշնակցութիւնը, մինչդեռ հայալնակ քաղաքներից մի քանիսի անուններն են միայն դրված: Երեխան այդ գասագրքից համարեա ոչինչ չը պիտի իմանար իր ազգի հայրենիքի և պատմութեան մասին: Դա աւելի օտար լեզուից թարգմանված մի գասագրքի է նման: Նշանակենք մի սրտառուչ հանգամանք: Միշտակելով Դօրպատի անունը, Նազարեանցը զըրում է: «Այս քաղաքումն էր իւր կրթութիւնը ստացել Խաչատուր Ապովեան՝ երեւելի Հայկաղունը որ ավան՝ շուտով թառամեցաւ իւր ազգի համար»: Դասագրքի մէջ

մացրած այս խօսքերը ցոյց են տալիս թէ Նազարեանցը նրապիսի սրբազն պատկառանքով էր վերաբերվում իր հոչակաւոր ընկերին; 1853 թւականին Արովեանցը դեռ յայտնի չէր հայ ազգին. առաջին անգամը Նազարեանցն էր նրան անուանում երեկի հայ, թէն գուցէ չը գիտէր էլ թէ Արովեանցը գըրած ունի «Վէրք Հայաստանի»:

Վերջացնենք մեր խօսքը այս գրքի մասին, աչքի առաջ ունենալով նոյն համեմատական չափը: «Առաջին Հոգեղին Կերակուրը» եթէ անաջող էր իբրև դասագիրք, շատ օգտակար, խելօք մի բան էր առհասարակ իբրև ընթերցանութեան զիրք: Նա ամբողջապէս մի նորութիւն էր հայ ընթերցողի համար: Եւ այդ նորութիւնը իր ազգին տալու համար խեղճ Նազարեանցը որքան աշխատած պիտի լինի, որքան դէս ու դէն ընկած: Երբ արենելեան լեզուների պրօֆէսօրը կազմում է թուաբանութիւն, աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, մենք պէտք է իմանանք որ նրան զեկավարում էր մի անհուն սէր դէսի իր ազգի լուսաւորութեան գործը:

Բայց այդ սէրը պիտի արտայայտվէր աւելի մեծ գործի մէջ: Դասագիրքը տարրական հասկացողութիւններ կարող էր տալ:

Նազարեանցը միաժամանակ աշխատում է պատրաստել աւելի ընդարձակ նիւթեր հայ ընթերցողի լայն զարգացման համար:

Այդ զարմանալի աշխատասիրութեան արդիւնքն էր «Հանդէս Նոր Հայախօսութեան» ստուար գործը, բազկացած երկու հատորից, որոնք լոյս տեսան 1857 թւականին: Գործի միայն ծաւալը բաւական է ցոյց տալու թէ որքան ջանք ու աշխատանք է թափել Նազարեանցը. երկու հատորները միասին կազմում են 1005 երես, մեծ ութածալ, տպած մանր տառերով\*): Աշխարհաբար լեզուն ուսահայերի մէջ գեռ չը տեսնված մի յաղթանակ էր տօնում: Նազարեանցը այժմ, իսկ որ, ապացուցանում էր որ նոր լեզուն կարող է և պիտի լինի լուսաւորութեան, կըրթութեան գործիք:

Մարդիկ, որոնք չէին կամենում որ Նազարեանցը մի լաւ բան արած լինի, որոնք ամբողջ սրտից ցանկանում էին նրան ոչնչու-

\*) Թէ ինչ տպաւորութիւն է թողել ծաւալը ժամանակակիցների վրա, երեսում է նրանից որ Արարատեանը նիւթերի «Դիմագրաւ» գլուխիկի մէջ ասում է որ եթէ «Հանդէս առաջին հատորը մեծ տառերով տպված լինէր, դէսի» առաջին հատորը մեծ տառերով տպված չափ մի բան և այն ժամակը դասմաւուրքի չափ մի բան և այն ժամակը «վայ գնողին և ընթերցողին»:

թիւն և անյայտութիւն, երկու հատոր «Հանդէս»-ի դէմ այն էին գտնում զիլիաւուրապէս, որ գրանք դասագրքեր են երեխաների համար, իսկ իբրև դասագիրք՝ դրանք բոլորովին անպէտք բաներ են: Դասագիրք—այս, այս անունը կարելի է ընդունել «Հանդէսի» վերաբերմամբ. բայց դասագիրք ոչ թէ երեխաների համար, այլ ամրող ժողովրդի համար: Բծախնդրութիւն և աններելի բծախնդրութիւն է այդ ստուար հատորները համարել փոքր երեխաների ընթերցանութեան համար նշանակված գրքեր, հիմնվելով, երեխ, այն բանի վրա, որ մի քանի յօդուածներում կազմողը դիմում է ընթերցողին «մանուկներ», «երեխաներ» բառերով: Որ «Հանդէսի» մէջ կան մանկական ընթերցանութեան յարմար կտորներ էլ, այդ չէ կարելի ուրանալ: Բայց դատելով գործի ամրող ութիւնից, դա «Առաջին Հոգեղէն Կերակուր»-ի ծրագրով կազմված մի ընդարձակ ժողովածու է, որի մէջ ընթերցանութեան օգտակար նիւթեր կային թէ երեխաների, թէ երիտասարդների և թէ չափահասների համար:

«Մեր խորհուրդը այն լինելով—ստում է նազարեանցը—որ մի յարմարաւոր ընթերցանութեան զիրք տայինք ազգին, թէ արժանապէս ժամանակ անցուցանե-

լու և թէ իւրեանց միտքը ձոխացնելու այնպիսի ծանօթութիւններով որ հարկաւոր էին մեր ժամանակի փոքր ի շատէ կրթեալ հայ մարդուն, այլ և իւրեանց սիրաը և զգացողութիւնքը աղնուացնելու գեղեցիկ գաղափարներով թէ բարոյական և թէ կրօնապաշտական մասին. մեր խորհուրդը այն լինելով, որ տայինք ազգին մի բազմօրինակարար դասախրակիչ և առաջնորդող զիրք, որ լցուցաներ նոցա իմացական և հոգեոր պիտոյքը, ընտիրընտիր եւրօպական ազբիւրներից հանեցինք զանազան իմաստալից գրոյցք»:

Նպատակը յայտնի է ու պարզ—տալ հայ ընթերցողի ձեռքը գրական և զիտական մի ժողովածու, որ լինէր մի տեսակ էնցիկլոպեդիա ինքնակրթութեան համար: Եւ իբրև այսպիսի նպատակի ծառայող մի աշխատութիւն՝ «Հանդէսը» շատ բազմակողմանի է և հարուստ: Ի՞նչ ասէք որ նախատեսած ըլ լինի նազարեանցը: Նա տալիս է թեթև ընթերցանութեան նիւթ առակների, պատմուածքների ձեռվ, տալիս է ընազիտութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, բուսաբանութիւն, բանաստեղծութիւն, կենսագրութիւն, հանգարանութիւն և այլն և այլն: Կարելի է առարկութիւններ անել այս կամ այն յօդուածի դէմ, կարելի է համաձայնվել որ

մոսացված են բաժիններ, օրինակ որ պահասում է և բրօպական գեղեցիկ դպրութիւնը, որի տեղը բանել են արենելեան զրոյցները։ Բայց ընդհանուր առմամբ, առհասարակ, պէտք է զարմանալ, հիանալ Նազարեանցի յամառ, տոկուն աշխատափրութեան վրա, որ այսպիսի պատկառելի գործ է տուել։ Նկատվում է Նազարեանցի դաստիարակչական բարձր ձգտումը—ծանօթացնել հայ ընթերցողին ընութեան, մարդկութեան հետ։ Սա մի ահազին ծառայութիւն է, եթէ նկատի ունենանք մի շարք սերունդներ, կըրթված և սնված միջնադարեան աստուածաբանութեան, կեղծ-կլասիկական բանաստեղծութիւնների, ճարտասանութեան, Կովկանի փիլիսոփայութեան վրա։ Սալլանթեանների դարը անցնում էր. նրա փոխարէն, մեր գրականութեան մէջ էր մտնում տասնիններորդ դարը, բնագիտութեան, հետազօտութեան, դրական ուսումնասիրութիւնների դարը։

Զենք ասում թէ Նազարեանցն էր բերում հայերին այդ դարը։ Պարտաւոր ենք արձանագրել, որ գերմանական ուղղութիւնն էր այդպէս կերպարանափոխում մեր մտաւոր աշխարհը. իսկ գերմանական կրթութիւնը ամենից առաջ արտայայտութիւն է գտել

մեզանում Վիեննայի Միսիթարեան միաբանութեան միջոցով։ Նազարեանցից չառ առաջ, 1840-ական թւականների սկզբից, մենք գտնում ենք Վիեննայի հայ վանքում մի գարմանալի հոսնդուն և օգտակար գործունէութիւն. կրօնական ուղղութիւնից անկախ, այնտեղ ծաղկում է զիտական ուղղութիւնը։ Հրատարակվում է տարինների ընթացքում մի ամբողջ զիտական գրադարան, այդտեղ կայ ընդարձակ ֆիզիկա, կինդանաբանութիւն, բուսաբանութիւն, ափեզերագրութիւն, օգերեաբանութիւն, հողագործութիւն, վաճառագիտութիւն, արհեստագիտութիւն. հըրատարակվում են առանձին մենագրութիւններ ընդհանուր պատմութիւնից, թարգմանվում են և հեղինակվում են վանական տեսակէտին համապատասխանող վիզական և թագորօնական գրուածքներ։ Եւ այս բոլորը աշխարհաբար լեզուով։

Նազարեանցը առաջինն էր ոչ թէ հայոց գրականութեան մէջ, այլ ոռւսահայերի մէջ, որ այդ նոր ուղղութեան առաջնորդը հանգիսացաւ. Մի հատ մարդ, առաջնորդը հանկանների, առանց յարմարութիւնների, չունենալով ձեռքում մշակված հարուստ լեզու, նա չը սարսափեց դժուարութիւններից և 1000 տպագրած մեծագիր երեսների վրա տուեց

իր ազգին այն, ինչ կարողացել էր քաղել եւրօպական շքեղ գրականութիւնից։ Ուր ին այդպիսի տոկուն աշխատաւորներ, ազնիւ, եռանդուս մշակներ։ «Հանդէսը» ունի յօդուածներ, որոնք այժմ էլ հետաքրքրութեամբ կը կարգացվեն։ Քրիստովոր Կօլումբոսի և Մարտին Լութերի կենսագրութիւնները այժմ էլ կարող են այդպիսի ժողովածուների զարդ կազմել։ Նազարեանցի օրեւրից շատ ժամանակ է անցել, պատմական գիտութիւնը ահազին առաջադիմութիւն է զործել. բայց կարող ենք ցոյց տալ մեր զբուականութեան մէջ ըէֆօրմացիայի մի այնպիսի մանրամասն, առաջաւոր գաղափարներով առզորված պատմութիւն, որպիսին տուել է Նազարեանցը «Հանդէսը» երկրորդ հատորում...

Իրաւունք ունէր Միքայէլ Նալբանդեանցը, գրելով «Հանդէսի» առաջին հատորի թողած տպաւորութեան տակ, հետեւեալ տողերը. «Այս բոպէիս մեր սիրաը լցուած է մի հոգեպայծառ ուրախութեամբ;...Սհա մեր նոր մատենագրութիւնը խելով մի հնացած ու վաստակած ծերունու ձեռքից՝ դորա կարգից դուրս երկարատե քաղաքական իրաւունքը, որպէս ժամանակի հարազատ որդի, յառաջ է խաղում մեծ մեծ քայլերով և տանում է

իւր հետ միասին և մեր ընթերցող ազգը»\*): Դեռ շատ քչերն էին այսպէս մտածողները: Բայց այս քչերի համար որպիսի մեծ միսիթարութիւն էր գործելը, քրաինք թափելը: Երանց սուրբ ջանքերով ոչ միայն գոյութեան իրաւունք էր ստանում նոր լեզուն, այլ և ստեղծվում էր նոր գրականութիւն։ Գեղեցիկ ժամանակներ։ Եւ այդպիսի ժամանակներում «Հանդէսի» պէս մի հսկայ գործ կատարողը չէր կարող չոգեորել իր դեռ սակաւթիւ կողմնակիցներին։ Այդ ողերութեան արայայտութիւն կարող ենք համարել նալբանդեանցի այս խօսքերը. «Հեղինակը (Նազարեանցը) կարող է միսիթարիւլ, որ իւր աշխատութիւնը, իւր տարիներով չարչարանքի վաստակը դարձած է այս բոպէիս մի յաւիտենական գեղեցիկ արձան, որով պիտոյ է անմանանայ նորա միշտ գեղեցիկ անունը»։ Երիտասարդական ողերութեան մէջ ներելի են և չափազանցութիւնները. «Հանդէսը» մենակ չէր կարող անմահացնել Նազարեանցի անունը։ Եւ այդ բառերը մեզ համար միայն այն նշանակութիւնն ունին, որ ցոյց են տալիս թէ որքան հիացած էին այն երիտասարդները, որոնք հասկանում էին Նազարեանցին։

\*) «Հիւսիսափայլ», 1858, № 1:

իսկ ինքը, Նազարեանցը:—Եա էլ ոգևորվեց և չափազանցութիւնների մէջ ընկաւ: Երկու խոշոր հատորների ապագրութեան հանգստմանքները վերին աստիճանի խրախուսական էին: Գործը պահանջում էր խոշոր ծախսեր. բայց Նազարեանցին օգնեցին. Մօսկվայում և այլ քաղաքներում փող հաւաքեցին տպագրութեան ծախսերի համար. միայն Պետերբուրգի հայերը առաջարկեցին Նազարեանցին 1500 րուբլի օժանդակութիւն: Եւ ահա Նազարեանցը, խրախուսված ու ոգևորված, առաջին հատորի առաջարկանում՝ փառաբանում է գրքի բարերարներին: Այտեղ այլ ևս դառնացած, գանգատաւոր Նազարեանցը չէ: Այժմ նա հաւատում է, որ ոռուսահայերն էլ զգում են իրանց օգուտը, գիտեն խրախուսել իրանց գործիչներին: «Այսուհետեւ տգէտ և խարերայ հոգիքը չննկարող ճնշել և շիջուցանել պայծառացեալ ճշմարտութեան յաղթող լոյսը», ասում է նա և բերելով իր գլխաւոր մեկենասների անունները, գրելով այդ անունները «հայրենակիցների սրտի տախտակի վրայ», նա համում է այն աստիճանին, որ ասում է. «Հայոց ազգը թնդ ճանաչէ իւր բարերարքը, թնդ մըխիթարյի տեսանելով, թէ և իւր հասարակութեան մէջ կայ առաքինութիւն, կայ պատ-

րաստականութիւն ընծայաբեր լինել մարդկութեան հոգեղջն օգտի համար: Թնդ քաղցրանայ նորա սիրաց տեսանելով քանի մի վարդեր և մանուշակներ կանաչած այն հողի վերայ, ուր մինչև այժմ բուսանում էին փուշ և տատասկը»:

Անշուշտ, չափազանցութիւններ են սըրանք, սաստիկ ոգեսորութեան զեղումներ: Տկարների հետ տկար լինել էր որոշել Նազարեանցը իր ազգի օգտի համար: Այստեղ այդ թուլութիւնը համարեա ծայրայեղութեան էր հասնում: Բայց մենք գարձեալ չենք կարող գատապարտել այդ ոգեսորութիւնը, այդ չափազանցութիւնը, որովհետեւ երևակայում ենք այն անկեղծ, մաքուր յափշտակութիւնը, որ տիրած պիտի լինէր Նազարեանցի սրտին, իր բազմամենայ աշխատանքները այդպէս պատկած տեսնելիս: Երևակայեցէք դուք էլ. երեակայեցէք հայ հեղինակին կէս գար սրանից առաջ, նրան շրջապատող հանգամանքները, նրա դէմ յարուցած թշնամութիւնը, աղմուկը և յանկարծ այսպիսի ուշագրութիւն հասարակութեան կողմից: Անկարելի էր չը յափշտակվիլ: Այդ յափշտակութիւնը, եթէ կամենում էք, շատ էր հարկաւոր. «Հանդէսի» տպագրութիւնը ցոյց էր տալիս որ կարելի է և ամսաղիբ

հրատարակել, և մենք համոզված ենք որ Նազարեանցը հէնց այդ միջոցին հաստատապէս վճռեց «Հիւսիսափայլի» սկիզբը դնել: Իրականութիւնը, ճիշտ է, այնքան էլ վարդագոյն չէր և չուտով, շատ չուտով Նազարեանցը էլի բողոքաւորի դիրքում պիտի լինէր: Բայց այս տեսակ անհրապոյր իրականութեան մէջ հարկաւոր է ոգեսրութիւն, յափառակութիւն մի պատահական երևոյթից, մի խրախուսիչ հանգամանքից: Ուրիշ կերպ գործ ու գործիչ չեն տուածանաց այդպիսի հասարակութեան մէջ:

Մատենագրական տեսակէտից շատ հետաքրքրական կը լինէր որոշել թէ ինչպէս է կազմել Նազարեանցը իր այդ երկու ստուար հասորները. արգեօք բոլոր յօդուածները թարգմանութիւններ են թէ ինքը Նազարեանցն էլ ունի իր սեփական աշխատութիւնը իրեն հեղինակ կամ կօմպլիկատօր: Դժբախտաբար, այս հարցը չէ կարելի լուծել. Նազարեանցը հարկաւոր չէ համարել ցոյց տալ թէ որտեղից է վերցրել և ի՞նչպէս է վերցրել յօդուածները (միայն մի երկու յօդուածի տակ կան յիշված աղբիւրները): Եւ սա բընորոշ է այն ժամանակվայ դրական բարքերի տեսակէտից: Միայն Նազարեանցը չէր այսպէս, միւսներն էլ օգտավում էին ուրիշների

գրուածքներից, թարգմանում էին, բայց հարկաւոր չէին համարում յիշել աղբիւրները:

Ի վերջոյ մենք դարձեալ պիտի յիշատակենք Նազարեանցի հակառակորդներին: Որքան լաւ էին գնում նրա գործերը, որքան յայտնի էր դառնում նրա անունը, այնքան աւելի կատաղում էին հայոց հնացած «գիտունները». նրանք գործում էին եռանդով, աշխատում էին ասպարէզ չը տալ Նազարեանցին: Մենք յետոյ կը տեսնենք թէ ինչ և ինչ պատրաստութիւններ էին տեսնվում նոյն 1857 թ. Թիֆլիսում: Այստեղ միայն կը յիշատակենք այն, ինչ անմիջապէս վերաբերվում է Նազարեանցի աշխարհաբար գըրքերին:

Թիֆլիսում կազմակերպված հակառակութիւնը համեց Նազարեանցի դէմ Առաքել վարժապետ Արարատեանցին: Մենք գիտենք արգէն, որ նա մի ժամանակ Նազարեանցի ընկերն էր Ներսիսեան դպրոցում, ապա և ուսուցիչ: Ահա այդ մարդը 1858-ին երկու գրքոյկ հրատարակեց Նազարեանցի դէմ: Մէկը, որ կրում էր «Դիմագրաւ ընդդէմ աստան յարուցելոց ամենապատուական լեզուիս հայոց» վերնագիրը, պիտի ոչնչացնէր Նազարեանցի աշխարհաբարը, իսկ միւսը—նրա «Վարդապետարան Կրօնի»-ն: Մի քանի

փաստեր բաւական են որ ցոյց տան թէ ինչ-  
պիսի ոչնչացնող էր այդ վարժապետը:

Նազարեանցը զրում է աշխարհաբար, Ա-  
րարատեանցը պատասխանում է, ուղղում է  
զրաբարով: Նազարեանցը զրում է. «Բարձ-  
րացաւ մի սաստիկ պատերազմ. բարձրացաւ  
մի սաստիկ մրրիկ», Արարատեանցը ուղղում  
է. «Պատերազմ և մրրիկ ոչ անկանին ի վայր,  
զի բարձրացին. չէ այդ ոճ հայոց: Հարազա-  
տութիւն լեզուին պահանջէ ասել. Եղեւ պա-  
տերազմ մեծ. Յարեաւ մրրիկ սաստիկ»: Նա-  
զարեանցի «Երեխաների ձեռքը զաւազան  
զրեց» խօսքերը Արարատեանցը այսպէս է ուղ-  
ղում. «Երեխայոց ձեռքը փէտ տուուց»: Ին-  
չու: Որովհեաւ, ասում է վարժապետը, «զա-  
ւազան ասելով հէնց կիմանան թէ վարդա-  
պետի կամ տէրտէրի գաւազան է, և ոչ ծե-  
ծելու փէտ»: «Նաւերի համար կերակուր  
պատրաստելը—ասել է Նազարեանցը: «Նաւը  
կերակուր ոչ ուտեն. պարտ է ծշտութեամբ  
ասել՝ Նաւորդաց համար», պատասխանում է  
Արարատեանցը: Բայց կայ աւելի հրաշալին:  
Նազարեանցը պատմում է լուսնի մասին, զի-  
տութեան վերջին գիւտերի համաձայն: Ա-  
րարատեանցը վրդովվում է. «Պաւզոս (առա-  
քեալը), ասում է, մինչեւ յերրորդ յերկինս յա-  
փշտակեցաւ և լուաւ անդ բանս անձառա

զոր ոչ է պարտ՝ ասէ, մարդոյ խօսել: Ո՛ր-  
պիսի գաղտնիք է, որ միայն վարդապետն  
Նազարեանց յայտնեցաւ, և այլոց սրբոց և  
ծառայից ոչ երբէք»:

Ահա ինչպիսի բութ ու ժանդոտած զէն-  
քեր էր հանում հայկական հնամոլ ինքնազո-  
նութիւնը այն մարդու զէմ, որ հարուածում  
էր նրան եւրօպական գիտութեան զէնքերով:  
Սա զիմազրութիւն չէր, սա պատին սեղմած  
անշարժութեան յուսահատական աղմուկ էր:  
Նազարեանցը, ի հարկէ, ուշազրութիւն չը  
դարձրեց իր այդ ողորմնի հակառակորդի  
վրա, որ աղաջում պազմառում էր ուղղակրօն  
հայերին զգուշանալ այդ նոր մարդուց, չը  
կարդալ նրա զրքերը, որովհեաւ նա ազգի  
տունը քանդող է, լութերական է և այն:

—○—

Նազարեանցի բոլոր տպագրած զրքերը  
յիշատակած լինելու համար, ասենք և  
այն, որ նա թարգմանեց պարսկերէնից ուու-  
սերէնի՝ հոչակաւոր պարսիկ բանաստեղծ  
Սաադի «Գիւլտաննը»: Այդ աշխատութեան  
վրա էլ Նազարեանցը, ինչպէս ինքն է խոս-  
տովանում, աշխատել է երկար, ուստի մասի-  
րելով պարսկերէն բնագիրը և նրան վերա-  
բերված բացատրութիւնները թիւքքերէն լե-

դուռվէ Առաջարանի մէջ Նազարեանցը բացատրում է «Գիւլստանի» բանաստեղծական-բարոյական նշանակութիւնը, թէ ինչպէս Շիրազի երգիչը յայտնի դարձաւ Արևմտեան Եւրօպայում։ Մինչև այդ՝ ոռւսաց գրականութեան մէջ չը կար «Գիւլստանի» ամբողջ թարգմանութիւնը, և Նազարեանցը դարձանք է յայտնում որ ոռւսները, «նստած լինելով Արեւելքի գոների մօտ, անդադար յարարերութիւններ ունենալով Ասիայի հետ, զեռ այնքան քիչ են կարողացել ուսումնասիրել այդ կուսական աշխարհը, նրա աւանդութիւնները, նրա գիտութիւնը, նրա շատ նշանաւոր բանաստեղծութիւնը»։

1858-ին լոյս տեսաւ Նազարեանցի մի նոր աշխատութիւնը։ Դա Բեռնարդիէն զը Սան-Պիէսի հռչակաւոր «Պաւլոս և Վիրգինիա» վէպի թարգմանութիւնն էր, որին կցած էր նոյն հեղինակի ոչ այնքան յալտնի «Հնդկական Խուղ» անունով փոքրիկ պատմուածքը։ Գրքի մասին երկար խօսելու կարիք չը կայ։ Յայտնի է որ Բեռնարդիէն զը Սան-Պիէսը, XVIII դարի ֆրանսիական հեղինակ, հըռչակվել է իր այդ գործով, որ մի չքնազ հովուերգութիւն է, ուր բնութիւնը, նրա ծոցում ապրող նահապետական մարդը, մի երիտասարդի և մի օրիորդի փոխադարձ սէրը նկա-

բագրված են վերին աստիճանի պարզ գեղեցկութեամբ։ «Պաւլոս և Վիրգինիան» իր ժամանակին մեծ ժողովրդականութիւն ստացաւ, կարգացվում էր ամեն տեղ, թարգմանվեց բազմաթիւ լեզուներով։ Հայերն էլ անտեղեակ չին այդ հովուերգութեան Մինչև Նազարեանցի թարգմանութիւնը «Պաւլոս և Վիրգինիան» թարգմանվել և տպվել էր երեք անդամ—Մագրասում, Վենետիկում և Պարիզում։ Վենետիկի տպագրութիւնը նոյն իսկ աշխարհաբար էր, բայց Նազարեանցը, բաւական չը համարելով այդ, նորից թարգմանեց ֆրանսերէնից։

Թարգմանական վէպն էլ այն գրական նորութիւնն էր, որ մացրին ոռւսահայերի մէջ Նազարեանցը և նրա աշխատակիցները։ Աւելորդ է ասել թէ գեղարուեստական գրականութեան այդ ճիւղը որքան մեծ նշանակութիւն ունէր մեզ նման մի ազգի համար։ Դեռ հինգերորդ գարից հայկական գրականութեան մէջ ամենակարենոր տեղը բռնում էին թարգմանութիւնները։ Եւ սա շատ բընական ու հասկանալի է. աղքատիկ գրականութիւնը մի ազգի մէջ, որին չէ տուած հանճարներ ծնելու բախտը, որի արտադրած տաղանդներն էլ շատ չեն թւով, մեծ մասամբ փոխառութիւններով, իհարկէ, պիտի

ապրէ: Մինչեւ Նազարեանցը և Նալբաղնեանցը ոռւսահայերի մէջ չը կային թարգմանութիւններ եւրօպական գեղեցիկ դպրութիւնից: Եւ եթէ ի նկատի ունենանք, որ տասնիններորդ դարը մինչև յիսունական թւականները առուել էր մեզ միայն կարինեանի «Ի մահն Արէլի» խղճուկ գրուածքը, Ուստինի «Գոթողիան» գրաբար թարգմանութեամբ, «Ծաղկաքաղ յառակացն Քոփլովի, Տմիթրիեվի և Խեմիցերի» նոյնպէս գրաբար, մենք կը տեսնենք որ ոռւսահայերը ընթերցանութեան գիրք համարեա չունէին: Նազարեանցը, Նալբանդեանցը, ապա և ուրիշները աշխատում են լրացնել այս մեծ պակասութիւնը և կարձ միջոցում առաջ են բերում մի հարուստ թարգմանական գրականութիւն: Սա ինքն ըստ ինքեան մի այնպիսի խոչոր ծառայութիւն է, որ թարգմանական գործերի ընտրութեան հարցը կարող է արգէն երկրորդական համարվել:

Ընարութեան վերաբերմամբ մենք այստեղ այնքանը կարող ենք ասել, որ Նազարեանցը, իբրև ծնունդ մի ժամանակի, երբ գրականութեան մէջ կլասիկական, բօմանտիկական և բէալական ուղղութիւնների մըրցումն էր կատարվում, չէր էլ կարող մի յայտնի ուղղութեան, մի որոշ դպրոցի սահ-

մաններում պահպէլ: Ուղղութիւնները չեն հետաքրքրում նրան, այլ գրուածքի բովանդակութիւնը. բաւական է որ դա լինի բարոյական, գաստիարակիչ, միևնոյն ժամանակ հետաքրքրաչարժ:

«Պաւլոս և Վիրզինիայի» ընտրութիւնը ցոյց է տալիս որ Նազարեանցը ամենից առաջ նկատի ունէր եւրօպական գրականութեան «զլուխ-գործոցները»: Նա, ինչպէս և հաղարաւոր ու բիւրաւոր ուրիշ ժամանակակիցները, հիացած էր ֆրանսիական այդ վեպի վրա, թէև քննադատող միաքը այլ ևս չէր բաւականանում նրանով, նոյն իսկ բացասական կողմեր էլ էր գտնում նրա մէջ:

«Եւ ևս, ով հրաշափառ Բեռնարդէն-բացականչում է Նազարեանցը—կամիմ այս փոքրիկ աշխատութենովս պատուասիրել քո աշխարհանոչակ գրուածքը, կամիմ հայկական աւելի մաքուր և արժանի զգեստով նուիրել քո հոգու չնաշխարհիկ ծնունդը Հայաստանի զաւակներին. կամիմ որ և սոքա, նոյն մարդկութեան որդիք, որ միշտ անխափիր սիրելի էր քեզ, սեղանակից լինին քո քաղցր, հոգեպայծառ վաստակին, ուսանին ճանաչել և սիրել քեզ և մեծարել քո երանելի յիշատակը»:

Եւ սակայն այս «Ճնաշխարհիկ» գործի մէջ,

որ իսկապէս մի անհնման իդիլլիս է, երեւում է մի հեղինակ, որ գժզո՞ն է ժամանակի քաղաքակրթութիւնից, որ առաջադիմութեան մէջ երջանկութիւն չէր գտնում: «Մի մարդ էր դա—ասում է Հետանէր իր «Տանութերորդ Դարի գրականութեան Պատմութեան» մէջ—որ յոդնել էր կուլտուրայից և Եւրօպայից» ու հաւատում էր որ մարդկութիւնը երջանկանալ կարող է վերադառնալով ճին նահապետական կենցաղին: Ասելութիւնը դէպի Եւրօպական լուսաւորութիւնը խիստ աչքի է ընկնում մանաւանդ «Հնդկական Խուզի» մէջ, որի առաջին թարգմանիչը մեղանում Նազարեանցն էր, այն Նազարեանցը, որ քարոզում էր թէ առանց Եւրօպական կրթութեան և գաղափարների չէ կարող կեանք լինել...

Հետաքրքրական է որ 1856 թւականին Պարիզում տպագրված նոյն վէպի թարգմանութեան առաջաբանում Ամբրոսիոս վարդապետ Գալֆայեանը ասում էր թէ Բեռնարդին դը-Սան-Պիեռի գիրքը հարկաւոր է, որովհետեւ յոյց է տալիս քաղսկրակրթութեան պակասութիւնները և առաջնորդում է դէպի բարի դաստիարակութիւն: Հետաքրքրական է և այն, որ Նազարեանցը իր թարգմանութիւնը կատարել է Աստրախանի առաջնորդ

Մատթէոսի առաջարկութեամբ: Եւ առկայն առաջադիմութեան, քաղաքակրթութեան հարցերի վերաբերմամբ Նազարեանցը որքան, հեռու էր մեր հոգեորականներից:

Առանց գիտաւորութեան չենք մենք յիշատակում այս հանգամանքը: Իր տեղում՝ մենք կը տեսնենք որ Նազարեանցը և նրա աշխատակիցները վիպագրութեան վերաբերմամբ բաւական թեթև պահանջներ ունէին. մեծ մասամբ թարգմանվում էին աննշան գրուածքներ, ուուսաց վիպագրութիւնը իր բէալական-ազգային ուղղութեամբ աննկատելի է մնում նրանց համար...

—○—

Մի ընդհանուր ակնարկ գցելով Նազարեանցի մատենագրական գործունէութեան վրա, ինչ կը տեսնենք:

Այդ գործունէութիւնը ինքն ըստ ինքեան այնքան նշանաւոր չէ, որ կարողանանք նըրան հարստութիւն համարել մեր գրականութեան համար: Այն, ինչ առել է Նազարեանցը իր գրքերում, ոչ մի առանձին ինքնուրոյնութիւն ունի, ոչ մի առանձին տաղանդի կնիք է կրում իր վրա, եթէ մի կողմէնենք այնքան աղմուկ հանած նրա երկու

առաջաբանները։ Այդ «Վարդապետաբանները», «Հանդէսները», «Պաւլոս և Վիրզինիաները» մեզ ասում են որ Նազարեանցը բարի ցանկութիւններով տոգորված, զարմանալի ջանասէր մի կուլտուրական մարդ էր, որ իր ազգի համար ազնիւ բանուարի պաշտօն էր յանձն առել։

Եւ Նազարեանցը շուտ կը մոռացվէր, եթէ միայն այդ լինէր տուած։ Բայց նա չէ մոռացվել և չը պիտի մոռացվի, որովհետեւ տուել է նաև «Հիւսիսափայլը»։

«Հիւսիսափայլի» Նազարեանցը մի խոշոր անձնաւորութիւն է մեր գրական վերածնութեան արշալոյսին։

Այժմ տեսնենք «Հիւսիսափայլի» Նազարեանցին։

**ՎԵՐՃ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ**

ՀՅ Ազգային գրադարան



NL0516802

67.885